

Հովհաննիսյան Ա. Ա.

# ԱՐՏԱՔԻՆ ՏԱՏԵԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՀԻՄՈՒՔՆԵՐ

Ուսումնական ձեռնարկ



ԵՐԵՎԱՆ

Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան  
2007

ՀՏԴ 339 (07)  
ԳՄԴ 65.5 y73  
Հ 854

### **Հոփհաննիսյան Արա Արամի, Ալավերդյան Ռոզա Խաչիկի**

Հ 854 Արտաքին տնտեսական կապերի հիմունքներ: Ուս. ձեռնարկ.- Եր.: ԵրՃՇՊՀ հրատ., 2007.- 133էջ

Ուսումնական ձեռնարկը ներառում է երկրների միջև տնտեսական կապերի առաջացման պատճառները, տեսությունները, զարգացման ընթացքը, աշխարհի երկրների տեսակավորումը, միջազգային տնտեսական ինտեգրացիոն գործընթացը աշխարհում և այլն: Սույն ձեռնարկը բավականին հեշտ ընկալելի է և նպատակ ունի ընդհանուր պատկերացում տալ տնտեսության մասին մակրո մակարդակում: Նրանում տվյալները բերված են արտասահմանյան և մայրենի գրականությունից:

Ուսումնական ձեռնարկը նպատակահարմար է ոչ միայն ուսանողների, այլ նաև ընթերցողի լայն շրջանակի համար, ովքեր ցանկանում են ընդլայնել իրենց տնտեսագիտական գիտելիքները:

Տպագրության է երաշխավորվել Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի Գիտական խորհրդի 02.07.07թ. թիվ 07 նիստում

*Գրախոս՝ Էկոնոմիկայի և իրավունքի դոկտոր, պրոֆեսոր Վ. Վ. Սադոյան*

Հ 0604000000  
820(01)2007 2007թ.

ԳՄԴ 65.5 y73

ISBN 978-99941-77-17-2

© Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան, 2007թ.

# **Բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ու ն**

*Ներածություն* .....6

## **Գլուխ I. Համաշխարհային տնտեսության ձևավորումը**.....8

1.1 Համաշխարհային տնտեսության զարգացման ընթացքը.....8	
1.2 Ներմուծման (արտահանման) չափաբաժին.....11	
1.3 Տնտեսական կապերի զարգացման պատճառները.....14	
1.4 Միջազգային առևտրի հիմնական տեսությունները.....16	
▪ Միջազգային առևտրի մերկանտիլ տեսություն.....16	
▪ Բացառիկ առավելությունների տեսություն .....17	
▪ Համեմատական առավելությունների տեսություն.....18	
▪ Արտադրության գործոնների համեմատության տեսություն (Յեկչեր-Օհլին).....20	
▪ Լեոնտևի պարադոքս.....21	
▪ Մրցակցային առավելությունների տեսություն.....22	
▪ Միջազգային առևտրի այլ տեսություններ (մասշտաբի էֆեկտ).....23	
▪ Ուղղակի ներդրումների մոդելները.....24	
▪ Կապիտալի «փախուստի» տեսություն.....26	
Ինքնաստուգման հարցեր.....27	

## **Գլուխ II. Աշխարհի երկրների տեսակավորումը և համաշխարհային տնտեսության տեսությունները**.....28

2.1 Գնողունակության պարիտետ.....28	
2.2 Կյանքի որակը և մակարդակը (մարդկային զարգացման ինդեքսը).....30	
2.3 Ջարգացած երկրների խումբ.....32	
2.4 Ջարգացող երկրների խումբ.....34	
2.5 Անցումային տնտեսություններով երկրների խումբ.....36	
2.6 Համաշխարհային տնտեսության զարգացման միտումների մասին հրապարակումներ .....38	

2.7 Համաշխարհային տնտեսության տեսությունները .....	44
2.7.1 Ձարգացման փուլերի տեսությունները.....	44
▪ Տնտեսական աճի փուլերի տեսություն.....	44
▪ Ընդհանուր արդյունաբերության և նոր ինդուստրիալ միության տեսություններ.....	46
▪ Պոստինդուստրիալ հասարակության տեսություն.....	47
2.7.2 Ընդհանուր քաղաքակրթության և քաղաքակրթության բախումների տեսությունները.....	49
▪ Ընդհանուր քաղաքակրթության տեսություն.....	49
▪ Քաղաքակրթության բախումների տեսություն.....	50
▪ Կայսրության անկման տեսություն.....	51
Ինքնաստուգման հարցեր.....	51

### **Գլուխ III. Համաշխարհային տնտեսության**

<b><u>պոտենցիալ</u></b> .....	53
3.1 Համաշխարհային տնտեսության ֆինանսական ռեսուրսները.....	53
3.2 Միջազգային ֆինանսական շուկաների մասնակիցները.....	57
3.3 Եվրոդոլարներ, եվրոդոլարների շուկայի գործիքները.....	62
3.4 Ֆոնդային բորսա.....	65
3.5 Միջազգային ֆինանսների գլոբալացումը: Այդ երևույթի դրական և բացասական հետևանքները.....	67
3.6 Ոսկու և արտարժույթի պահուստներ.....	70
3.7 Ֆինանսական օգնություն .....	73
3.8 Վաշինգտոնյան կոնսենսուս.....	75
3.9 Արտաքին պարտք.....	77
Ինքնաստուգման հարցեր.....	84

### **Գլուխ IV. Վճարային հաշվեկշիռը և արտարժույթի փոխանակման դրույթները**.....

4.1 Վճարային հաշվեկշիռ.....	86
4.2 Վճարային հաշվեկշիռը և պետության միջամտությունը.....	92

4.3 Արտարժույթի փոխանակման դրույքները.....	96
4.4 Արտարժույթի դրույքաչափը ազատ ֆլուտինգի պայմաններում... 99	
4.5 Վճարային հաշվեկշռի ադապտացիան արտարժույթի ազատ լողացող դրույքաչափի պայմաններում.....	101
4.6 Ֆիքսված դրույքաչափ: Ոսկե ստանդարտ.....	103
4.7 Վճարային հաշվեկշռի ադապտացիան ոսկե ստանդարտի պայմաններում.....	105
4.8 Կարգավորվող փոխարժեք և դոլարային ստանդարտ.....	108
Ինքնաստուգման հարցեր.....	113

**Գլուխ V. Միջազգային տնտեսական ինտեգրացիոն**

<b><u>գործընթացը աշխարհում</u></b> .....	114
5.1 Ազգային տնտեսությունների գործակցումը համաշխարհային տնտեսության հետ.....	114
5.2 Տրանսազգային կորպորացիաներ (ՏՆԿ).....	119
5.3 Միջազգային տնտեսական ինտեգրացիայի տեսությունները....	122
5.4 Միջազգային տնտեսության ինտեգրացիայի ձևերը.....	124
5.5 Միջազգային ֆինանսական կազմակերպությունները.....	126
Ինքնաստուգման հարցեր.....	131
Օգտագործված գրականություն.....	132

## *Ներածություն*

Նախքան արտաքին տնտեսական կապերի ուսումնասիրությանն անցնելը հասկանա՞նք, թե ինչ է նշանակում «համաշխարհային տնտեսություն» տերմինը, ինչու են բոլոր երկրները համագործակցում իրար հետ տնտեսական հիմքերով, ինչպիսի տեսք են ստանում դրանք, ինչպես են անդրադառնում ազգային տնտեսություններում և ինչպես դասակարգել աշխարհի երկրներն ըստ խմբերի:

Համաշխարհային տնտեսությանը կարելի է տալ ինչպես լայն, այնպես էլ նեղ իմաստ բնորոշումներ: Առաջինում՝ համաշխարհային տնտեսությունը բոլոր ազգային տնտեսությունների համագումարն է: Երկրորդում՝ ազգային տնտեսության այն մասերի համախումբը, որոնք համագործակցում են արտաքին աշխարհի հետ: Սակայն տարբերությունը այս երկու բնորոշումների միջև դառնում է աննշան, քանի որ ցանկացած երկրում զնալով ավելի ու ավելի քիչ են դառնում այն բնագավառները, որոնք չեն համագործակցում իրար հետ:

Համաշխարհային տնտեսությունը հանդիսանում է բարդ համակարգ: Տարբեր ազգային տնտեսությունների ամբողջ համախումբը միացված է (ամրացված է) ապրանքների, ծառայությունների և արտադրության գործոնների (տնտեսական ռեսուրսների) շարժով: Այդ հիմքի վրա էլ առաջանում են միջազգային տնտեսական հարաբերությունները, այսինքն՝ տնտեսական հարաբերությունները ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև (տարբեր երկրների իրավաբանական և ոչ իրավաբանական անձանց միջև): Ըստ ավանդույթների տարբերակում են ապրանքների և ծառայությունների միջազգային առևտուր:

Երկրի արտաքին առևտրային կապերը ձևավորվում են ելնելով տվյալ երկրի տնտեսական կայունացման և զարգացման պահանջներից: Սովորաբար փոքր երկրներն իրենց առևտրային կապերը կառուցում են ոչ թե երկրներում տնտեսական և քաղաքական ազդեցություն ունենալու համար, այլ ցանկանում են ստեղծել փոխադարձ շահերի վրա ձևավորվող հարաբերություններ:

Արդի ժամանակաշրջանում համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող ինտեգրման գործընթացներն ավելի են խորացնում տարբեր երկրների տնտեսական կապերը, որոնք ուղեկցվում են այդ երկրների միջև ապրանքների, ծառայությունների, մտավոր ունակությունների և արտադրության գործոնների ազատ տեղաշարժի ակտիվացմամբ:

Համաշխարհային տնտեսության համակարգը (եթե անցնենք հասարակ ներկայացման) կարող է ներկայացվել մի մեխանիզմի տեսքով, որի մոտ առկա են բաղկացուցիչ մասեր և հանգույցներ: Կարևորագույնները հանդիսանում են ազգային տնտեսությունները, տրանսազգային կորպորացիաները, ինտեգրացիոն միությունները և միջազգային տնտեսական կազմակերպությունները:

Նախկինում արտաքին տնտեսական գործունեությամբ զբաղվում էին մեծամասամբ այն ազգային ընկերությունները, որոնց համար իրենց երկրի շուկան մնում էր հիմնական: Սակայն վերջին տասնամյակում նրանցից շատերը դարձան տրանսազգային կորպորացիաներ (ՏՆԿ), որոնց գործունեության դաշտը դարձավ ողջ աշխարհը: Արդյունքում ՏՆԿ-ն դարձավ միջազգային տնտեսության հանգուցային մասերից մեկը: Մեջբերենք, որ նրանց շահերը ոչ միշտ են համընկնում ազգային տնտեսության շահերի հետ (ներառյալ նրանց ծագման երկրները): Այսպիսով, հարևան երկրների տնտեսությունները ավելի ու ավելի համակցվելով կազմում են ռեգիոնալ ինտեգրացիոն միություններ: Նրանք գոյություն ունեն երկրի տարբեր անկյուններում: Նմանատիպ միությունները դարձան համաշխարհային տնտեսության ծանրակշիռ մասերից մեկը և նրանցից որոշները արդեն հաղես են գալիս արտաքին աշխարհում՝ նրանց մեջ մտնող երկրների անունից: Նրանց առանցքային խնդիրներից է դառնում այնպիսի գլոբալ խնդիրների լուծումը, որոնք խոչընդոտում են երկրների զարգացմանը, և որոնք կարելի է լուծել միանձնյա:

# Գլուխ I. Համաշխարհային տնտեսության ձևավորումը

## 1.1 Համաշխարհային տնտեսության զարգացման ընթացքը

Գիտնականների մեծամասնությունը համամիտ է այն կարծիքին, որ համաշխարհային տնտեսությունը սկսել է զործել պատմական վաղ ժամանակաշրջանից, սակայն նրա վերջնական ձևավորումը եղել է մոտ 100 տարի առաջ: Ամեն ինչ սկսվեց միջազգային առևտրից, այսինքն երկրների միջև ապրանքների և ծառայությունների շարժից (ներմուծումը կոչելով իմպորտ, արտահանումը՝ էքսպորտ): Միջազգային առևտուրը իրենից ներկայացնում է աշխարհի բոլոր երկրների արտաքին առևտուրների հանրագումար: Դեռևս հին եգիպտացիները 5000 տարի առաջ հարևան ազգերի հետ զբաղվում էին առևտրով՝ գնելով նրանցից փայտ, մետաղ, անասուն, հակադարձ տալով եգիպտական արհեստանոցների արտադրանք և եգիպտական գյուղատնտեսության բարիքներ: Այդ առևտրին միացան հույն վաճառականները, որոնք ոչ միայն Միջերկրական ծովով կատարում էին առևտուր սեփական և ձեռք բերված ապրանքներով, այլ նաև կատարում ծառայություններ՝ տեղափոխելով բեռներ և այլերկրյա ուղևորներ: Համաշխարհային առևտրում առավել մեծ ներդրում ունեցան XV-XVII դարերի մեծագույն աշխարհագրական բացահայտումները, ինչպես նաև XIX դարի մեքենայական ինդուստրիան, ժամանակակից տրանսպորտը և կապը: Արագ հարստացող եվրոպական վաճառականները, ինչպես նաև նրանց թագավորատների հզորացումը հզոր մոտիվացրին ուժ հաղորդեցին նոր շուկաների և նոր կապիտալի աղբյուրներին: Եվ արդյունքում XIX դարի վերջում ձևավորվեց համաշխարհային ապրանքների և ծառայությունների շուկա, այսինքն ազգային ապրանքների և ծառայությունների հանրագումար:

Ի՞նչ էր իրենից ներկայացնում համաշխարհային տնտեսությունը այն ժամանակ, և ինչո՞վ էր տարբերվում կան նմանվում ներկա վիճակի հետ: Այն նախ և առաջ տարբերվում էր նրանով, որ տնտեսական զարգացման մակարդակը եղել է բավականին ցածր, քան ներկայումս, աշխարհում արտադրվում էր ավելի քիչ



արտադրանք, քան հիմա: ԱՄՆ-ի ՀՆԱ-ն նշված ժամանակաշրջանում 25 անգամ քիչ էր, ինչը, բնականաբար, անդրադառնում էր կյանքի որակին և մակարդակին: Այսպես, Ռուսաստանի Դաշնությունում բնակվում էր 70 մլն բնակիչ, որից 70%-ը՝ անգրագետ, միջին կյանքի տևողությունը 32 տարի (ընդդեմ ներկայիս 65 տարուն): Ցածր էր նաև համեմատական թանկարժեք մթերքների օգտագործումը բնութագրող ցուցանիշը: Այսպես, համեմատական թանկարժեք սննդի և մթերքների մեկ անձի տարեկան օգտագործումը 1913թ.-ին կազմում էր 29կգ (1989թ.-ին՝ 69 կգ), կաթ և կաթնամթերք՝ 154կգ (1989թ.-ին՝ 396 կգ), միրգ՝ 11կգ (1989թ.-ին՝ 46 կգ):

Համաշխարհային տնտեսության մեջ գերիշխող էր գյուղատնտեսությունը: Արտադրությունում գերիշխող էր թեթև և սննդի արտադրությունը, որը հիմնվում էր փոքր ձեռնարկությունների վրա: Ծառայությունների բնագավառը ներկայացված էր առևտրով: Մինչև Առաջին համաշխարհային պատերազմը գյուղատնտեսությամբ զբաղվում էր բնակչության 75%-ը, արտադրությունով՝ 9%-ը, ծառայությունների բնագավառով՝ 16%-ը: Այդ ժամանակ համաշխարհային տնտեսությունը նմանվում էր ժամանակակից բարձր աստիճանի ազգային տնտեսությունների:

Առաջին համաշխարհային պատերազմից մինչև 50-ականները ընկած ժամանակաշրջանը բնութագրվում է աշխարհատնտեսական կապերի հետքաշմամբ (քաղաքացիական պատերազմներ, հեղափոխություն, 30-ականների տնտեսական ճգնաժամ): Այսպես, 1913-1940թթ.-ին Ռուսաստանի Դաշնության և ԱՄՆ-ի արտահանման ծավալները կազմում էին՝

	1913թ	1928թ	1938թ	1940թ
Ռուսաստանի Դաշնություն	1մլրդ ԱՄՆ \$	0.7մլրդ ԱՄՆ \$	0.3 մլրդ ԱՄՆ\$	1 մլրդ ԱՄՆ \$
ԱՄՆ	2.6 մլրդ ԱՄՆ \$	5.8մլրդ ԱՄՆ \$	3.1 մլրդ ԱՄՆ \$	12 մլրդ ԱՄՆ \$

50-70թթ.-ի միջև ընկած ժամանակահատվածը շրջան է, երբ ստեղծվում էին ինտեգրացիոն խմբակցությունները (ինչպես, օրինակ, «Եվրոմիությունը»), ակտիվ ընթանում էր տրանսազգայնացման գործընթացը, երբ երկրների միջև փոխանցվում էին գիտելիքները (տեխնոլոգիաները), գործարարական ունակությունները և գործարարական կապիտալը, վերականգնվում էին վարկային կապիտալի համաշխարհային շուկաները: 80-90թթ. ժամանակաշրջանը բնութագրվում է նախ և առաջ նրանով, որ ավելի զարգացած երկրների համար այն դարձավ պոստինդուստրիալ շրջանի անցում, մյուս թույլ զարգացած երկրների համար՝ իրենց տնտեսական հետամնացության հաղթահարման շրջան (Չինաստան և նոր ինդուստրիալ զարգացած երկրներ), նախկին ԽՍՀՄ-ի երկրների համար՝ անցում շուկայական հարաբերություններին և բոլոր երկրների համար՝ ներքին և արտաքին տնտեսական կյանքի ազատականացման և գլոբալացման շրջան:

## 1.2 Ներմուծման (արտահանման) չափաբաժին

Նախ հասկանանք, թե ինչ են նշանակում «ազատ առևտուր» և «բաց տնտեսություն» հասկացությունները: «Ազատ առևտուր» հասկացությունը առաջ է քաշվել Ա. Սմիթի տնտեսական քաղաքականության մեջ և չի հանդիսանում ժամանակակից տնտեսագետների մեջքերում: Իսկ «բաց տնտեսություն» հասկացությունը ունի լայն իմաստ, որը ներառում է նաև «ազատ առևտուրը» որպես ապրանքների առևտուր՝ ներառելով արտադրության գործոնների, իմֆորմացիայի ազատ շարժը և ազգային արժույթի փոխանակումը: Բաց տնտեսությունը կարելի է համարել որպես տնտեսության ինքնաապահովման ձև, ծայրահեղ իրավիճակներում սեփական ուժերի հիմք:

Բաց տնտեսության հիմնումը համարվում է միջազգային զարգացման օբյեկտիվ միտում: Գործունեությունը, որը համապատասխանում է բաց տնտեսության սկզբունքներին, բերում է միջազգային շուկայի ստանդարտների առաջացմանը, նրա կանոնների համապատասխանեցմանը: Բաց տնտեսությունը ենթադրում է ազգային տնտեսության ամբողջականություն, միավոր տնտեսական կոմպլեքս, որն ինտեգրված է միջազգային տնտեսությունում, միջազգային շուկայում: Այն կարելի է բնորոշել որպես արտաքին առևտրում պետական մենաշնորհների լիկվիդացում (սակայն մեծամասամբ պետական հսկողության ներքո), աշխատանքի միջազգային բաժանման ընթացքում համեմատական առավելությունների սկզբունքի արդյունավետ օգտագործում, միասնական ձեռնարկատիրության տարբեր ձևերի ակտիվ հարաբերություն, ազատ ձեռնարկատիրական գոտու կազմակերպում: Բաց տնտեսության կարևորագույն չափորոշիչներից մեկն է հանդիսանում երկրում բարենպաստ ներդրումային մթնոլորտի ստեղծումը, որը ենթադրում է կապիտալ ներդրումների, տեխնոլոգիաների, իմֆորմացիայի ներհոսք:

Համաշխարհային շուկայում այս կամ այն երկրի մասնակցության ծավալը (կամ թե որքանով է տվյալ երկրի տնտեսությունը համարվում բաց) որոշվում է, նախ և առաջ, համախառն ներքին արդյունքում

արտահանման և ներմուծման չափաբաժնով՝ էքսպորտային և իմպորտային քվոտայով: Այս ցուցանիշը թույլ է տալիս պատկերացում կազմել առանձին երկրների ազգային տնտեսության և միջազգային շուկայի միջև կապի մասշտաբի մասին: Այսպես, արտահանման չափաբաժինը (էքսպորտի քվոտան) հավասար է էքսպորտի մեծության և ՀՆԱ-ի հարաբերությանը.

$$\Theta_p = \frac{\Theta}{\text{ՀՆԱ}} \times 100\%, \text{ որտեղ}$$

$\Theta$ -ն արտահանման ծավալն է:

Որպես կանոն, երկրի տնտեսությունը համարվում է բաց, եթե  $\Theta_p = 10\%$ : Եվ համապատասխանաբար, ներմուծման չափաբաժինը (իմպորտի քվոտան) կլինի՝

$$I_p = \frac{I}{\text{ՀՆԱ}} \times 100\%, \text{ որտեղ}$$

$I$  -ն ներմուծման ծավալն է:

Արտահանման և ներմուծման չափաբաժիններն ըստ երկրների ցույց է տրված աղյուսակ 1-ում<sup>1</sup>: Այլ ցուցանիշ է արտաառևտրային քվոտան, որը հավասար է.

$$BT_p = \frac{BT}{\text{ՀՆԱ}} \times 100\%, \text{ որտեղ}$$

$BT$  -ն արտաառևտրային շրջանառության ծավալն է:

1990 թվականին «յոթնյակի» մեջ ընդգրկվող մի քանի երկրների համար  $BT_p$  -ն կազմել է՝

Մեծ Բրիտանիա - 41.8 %,

ԱՄՆ – 17.0%,

Գերմանիա - 50.8 %,

Ճապոնիա - 17.8 %:

Աղյուսակ 1. Արտահանման և ներմուծման չափաբաժինները ստ երկրների (1994թ.)

Երկիր	Արտահանման չափաբաժին, %	Ներմուծման չափաբաժին, %
Ավստրալիա	18.9	20.1
Բելգիա	71.2	66.0
Բրազիլիա	8.6	7.4
Գերմանիա	33.1	30.3
Կանադա	33.2	32.5
Նոր Զելանդիա	31.2	29.2
Պակիստան	15.7	20.0
Ռուսաստանի Դաշնություն	23.6	17.0
Սլովակիա	73.2	66.2
ԱՄՆ	10.7	12.1
Ֆրանսիա	21.3	19.4
Չեխիա	52.3	52.5
Չիլի	28.2	26.8
Էստոնիա	56.1	72.2
Ճապոնիա	9.5	7.3

<sup>1</sup> “Международные экономические отношения”, Е. Ф. Авдокушин, Москва 2001г., стр.31

### 1.3 Տնտեսական կապերի զարգացման պատճառները

Տարբեր երկրներում միջազգային տնտեսական կապերի առաջացման և զարգացման պատճառը արտադրության միջոցների և տնտեսական ռեսուրսների առկայությունն է, որը մի կողմից բերում է աշխատանքի միջազգային բաժանմանը, և մյուս կողմից երկրների միջև այդ միջոցների շարժին:

**Աշխատանքի միջազգային բաժանումը:** Արտադրության միջոցների բաշխվածության հետևանքով տնտեսվարող սուբյեկտները մասնագիտանում են որոշակի խումբ ապրանքների արտադրությունում: Եվ դրա հետևանքով հասնում են բարձր մասնագիտական աստիճանի, բարձր արտադրողականության, բայց միևնույն ժամանակ պետք է փոխանակեն այդ արտադրանքը իրենց պահանջմունքները բավարարելու համար: Սկզբում աշխատանքի բաժանումը իրականացվում է երկրի սահմաններում, այնուհետև տարածվում է հարևան երկրների և աշխարհի մասշտաբով: Աշխատանքի միջազգային բաժանումը իրենից ներկայացնում է առանձին երկրների մասնագիտացում որոշակի ապրանքների և ծառայությունների ուղղությամբ, որոնք նրանք փոխանակում են իրար մեջ: Մինչև արդյունաբերական հեղափոխումը (XVIII-XIX դարի կեսը) աշխատանքի միջազգային բաժանումը հիմնվում էր տարբեր երկրների բնական ռեսուրսների հարստությունների վրա (կլիմա, հողի որակ, ընդերք, ջրային և անտառային պաշարներ և այլն): Այնուհետև մասնագիտացումը կենտրոնանում է հիմնվելով այլ արտադրության գործոնների առկայության վրա՝ կապիտալ, աշխատանք, գործարարական ունակություն, գիտելիք: Հենց այս հանգամանքն է որոշիչ, թե որ ապրանքի կամ ծառայության ուղղությամբ մասնագիտանա երկիրը:

**Արտադրության գործոնների շարժը:** Երկրներին նպատակահարմար է ոչ միայն օգտագործել արտաքին գործոնների, այս կամ այն ապրանքների (կամ ծառայությունների) լիությունը կամ սակավությունը արտահանման կամ ներմուծման կարգավորման համար, այլ նաև արտահանել առկա և ներմուծել սակավ արտադրության գործոններ: Կապիտալով աղքատ երկրները ակտիվ

ներգրավում են այն արտերկրից: Երկիրն աշխատուժի լիության դեպքում ձգտում է գտնել դրա օգտագործումն այլ երկրներում: Գիտական բարձր զարգացվածության աստիճանով պետությունները արտահանում են տեխնոլոգիա, որտեղ այն բացակայում է: Արտադրության գործոնների միջազգային շարժը տարբեր երկրներում կախված է ոչ միայն նրանց առաջարկից և պահանջարկից, այլև նրանց մոբիլությունից, նրանց ընթացիկ ճանապարհի արգելքներից, որոնք խոչընդոտում են նրանց շարժը: Այդուհանդերձ, արտադրության գործոնների միջազգային շարժի ծավալը համեմատելի է միջազգային առևտրի ծավալին: Եվ այդ հիմքի վրա առաջացել են միջազգային առևտրի և արտադրության գործոնների միջազգային շարժի տեսությունները:

## 1.4 Արտաքին առևտրի հիմնական տեսությունները<sup>2</sup>

Բազմաթիվ երկրների տնտեսագետներ դեռևս միջին դարերից փորձել են պարզել և գնահատել արտաքին առևտրի դերն ու նշանակությունը երկրի տնտեսական կյանքում, փորձել են յուրովի ներկայացնել և ձևավորել արտաքին առևտրի գործունեությունը, որի արդյունքում առաջացել են տեսությունները:

**Միջազգային առևտրի մերկանտիլ տեսությունը:** Միջազգային առևտրի տեսություններից առաջինը ի հայտ եկավ մերկանտիլ տեսությունը, որը մշակվել և ներդրվել է XVI-XVIII դարերում և, որի հիմնադիրներն են համարվում անգլիացի տնտեսագետ Ու. Ստաֆֆորդը (1554-1612), Տ. Մենը (1571-1641), ֆրանսիացի տնտեսագետ Անտուան Մոնկրետյենը (1575-1621): Մերկանտիլիստական համակարգի կողմնակից էր նաև ռուս տնտեսագետ Ի. Տ. Պասաշկովը (1652-1766): Մերկանտիլիզմ հասկացությունը ծագում է ֆրանսերեն և անգլերեն mercantile բառից, որը բառացի թարգմանած նշանակում է առևտրային: Այս տեսության կողմնակիցները հաշվի չէին առնում այն շահույթը, որը ստանում է երկիրն աշխատանքի միջազգային բաժանումից, ներմուծված արտասահմանայան ապրանքներից և ծառայություններից: Տնտեսապես արդարացված էին համարում միայն արտահանումը: Այդ իսկ պատճառով մերկանտիլիստները գտնում էին, որ երկիրը պետք է սահմանափակի ներմուծումը, բացի հումքի ներմուծումից, և ձգտի ամեն ինչ արտադրել ինքնուրույն, ինչպես նաև ամեն կերպ խթանել պատրաստի արտադրանքի արտահանմանը՝ հասնելով արտարժույթի մուտքին՝ այն ժամանակ ոսկու: Ոսկու հոսքը երկիր, որպես դրական առևտրային հաշվեկշռի հետևանք, ավելացնում էր կապիտալի կուտակման հնարավորությունները, և դրանով իսկ նպաստում տնտեսական աճին, զբաղվածությանն ու երկրի բարգավաճմանը: Այս տեսության գլխավոր թերությունը կարելի է համարել այն, որ մերկանտիլիստների պատկերացումներով (որոնք գալիս են դեռ

---

<sup>2</sup> “Международные экономические отношения”, Е. Ф. Авдокушин, Москва 2001г., с. 63



միջնադարից) ապրանքափոխանակման գործարքի մի մասնակցի (տվյալ դեպքում՝ արտահանողի) տնտեսական շահը անրադառնում է վնասով մյուսի՝ ներմուծողի համար: Գլխավոր արժանապատվությունը կարելի է համարել իրենց կողմից մշակված արտահանման խթանման քաղաքականությունը:

**Քացառիկ առավելությունների տեսությունը:** Այս տեսությունը առաջին անգամ զարգացրել է Ադամ Սմիթը, ավելի քան 200 տարի առաջ, «Ազգերի հարստացման պատճառները և բնության հետազոտությունները» հայտնի գրքում, որը հրատարակվել է 1776թ-ին: Սմիթը դեմ էր մերկանտիլիստական համակարգին և կողմնակից էր տնտեսական ազատականության հայեցակարգին և պետության բացարձակ չմիջամտելուն գործարար կյանքին:

Ա. Սմիթը ապացուցեց արտաքին առևտրի անհրաժեշտությունն ու կարևորությունը երկրի տնտեսությունում, ընդգծելով, որ.

«Եթե որևէ երկիր կարող է մեզ առաջարկել ավելի էժան արտադրանք, քան մենք կարող ենք արտադրել, ապա ավելի լավ է գնել նրանից, փոխարենն առաջարկելով այն արտադրանքը, որի արտադրության մեջ մենք ունենք որոշ առավելություններ կամ բացարձակ առավելություններ»: Սմիթը պնդում էր, որ բազմաթիվ պատճառներով՝ բնական և ձեռք բերովի տարբերությունների, աշխարհի երկրները տարբերվում են զանազան ապրանքներ արտադրելու իրենց ունակությամբ, և աշխատանքի միջազգային բաժանումը կլինի ճիշտ, եթե երկրները մասնագիտանան այն ապրանքների արտադրության մեջ, որոնցում ունեն բացարձակ առավելություն: Համաշխարհային արտադրությունը կավելանա ոչ թե երկրների միջև սահմանափակումներ կիրառելով, այլ եթե նրանք մասնագիտանան այնպիսի արտադրությունում, որոնցում ունեն բացարձակ առավելություններ: Այդպիսի իրավիճակի հեշտ է հասնել, որովհետև դա շուկայի ուժերի և ազատ միջազգային առևտրի բնականոն արդյունք է: Պատճառն այն է, որ ամեն մի ապրանք ամենաէժանն է այն երկրում, որն ունի այդ ապրանքի արտադրության բացարձակ առավելություն: Սմիթի կողմից առաջարկված վերոհիշյալ գաղափարը կոչվեց բացարձակ առավելությունների տեսություն: Այս տեսության ուժեղ կողմը կարելի է համարել այն, որ նա ցուցադրում է

միջազգային առևտրի առավելությունները բոլոր մասնակիցների համար: Թույլ կողմ կարելի է համարել այն, որ տեղ չի տալիս միջազգային առևտրում այն երկրներին, որոնց մոտ բոլոր ապրանքները արտադրվում են առանց բացառիկ առավելությունների ի համեմատ այլ երկրների:

**Համեմատական առավելությունների տեսությունը:** Բացառիկ առավելությունների տեսությունում ներկայացված թերությունները խթանեցին նոր տեսության առաջացմանը, որի անվանումն է համեմատական առավելությունների տեսություն: Դավիթ Ռիկարդոն զարգացնելով Ա. Սմիթի բացարձակ առավելության տեսությունը ձևակերպեց համեմատական ծախքերի իր տեսությունը: Միջազգային առևտրի մասին գաղափարները նա հրապարակել է 1819 թվականին իր «Քաղաքատնտեսության սկզբունքները և հարկումը» գրքում: Համեմատական առավելության մոդելի համաձայն երկիրը պետք է արտադրի և արտահանի այն ապրանքները, որոնց արտադրությունը հարաբերականորեն էժան է, և ներմուծի ապրանքներ, որոնք արտասահմանյան երկրներում արտադրվում են ավելի էժան, քան իր երկրի ներսում: Ռիկարդոն միաժամանակ հիմնավորել է, որ միջազգային առևտրում եկամտաբեր է մասնակցել բոլոր երկրներին: Իր հանրահռչակ օրինակում, որում արտադրվում է զինի և կտոր Պորտուգալիայում և Անգլիայում, նա մաթեմատիկորեն ապացուցեց, որ չնայած Պորտուգալիայում այս երկու ապրանքների արտադրությունը ավելի էժան է, քան Անգլիայում (այսինքն Պորտուգալիան ունի բացառիկ առավելություն այս երկու ապրանքների համար), սակայն նրան ավելի ձեռնտու է մասնագիտանալ զինու արտադրության և արտահանման մեջ, որի արտադրության ծախքերը ի համեմատ կտորի ավելի ցածր է: Իր հերթին Անգլիային նպատակահարմար է մասնագիտանալ կտորի արտադրության և արտահանման մեջ, որում արտադրության ծախքերը ցածր են ի համեմատ զինու, որը իրեն ձեռնտու է ներմուծել Պորտուգալիայից՝ փոխադարձ տալով անգլիական կտոր: Ընդունենք 25մ կտորը փոխանակվում է 1 տակառ զինով, և արտադրության ծախքերը չափվում են միայն աշխատատարության ծախսերով: Պորտուգալիայում 25մ կտորի վրա ծախսվում է 90 աշխատակցի մեկ

տարվա աշխատանք, իսկ Անգլիայում՝ 100: Իսկ 1 տակառ գինու համար համապատասխանաբար 80 և 120 աշխատակցի մեկ տարվա աշխատանք.

	Անգլիա	Պորտուգալիա
Կտոր՝ 25մ	100	90
Գինի՝ 1տակառ	120	80

Եթե Պորտուգալիան հրաժարվի կտորի արտադրությունից և սկսի ներմուծել այն Անգլիայից, ապա կտորի ամեն հատվածի վրա կխնայի 10 աշխատակցի տարեկան աշխատանք: Իր հերթին Անգլիան, եթե հրաժարվի գինու արտադրությունից, ապա ամեն տակառի վրա կխնայի 20 աշխատակցի տարեկան աշխատանք: Օրինակում ենթադրվում է, որ աշխատավարձը երկու երկրներում նույնն է: Կամ նույնիսկ եթե այն տարբեր լինի, միևնույն է չեն լինի էական փոփոխություններ, քանի որ խոսքը գնում է աշխատանքի վարձատրության մասին: Ընդունենք, եթե Պորտուգալիայում այն 2 անգամ ցածր է քան Անգլիայում, ապա փոխանակումը կրկին ստացվում է օգտակար, բայց արդեն ոչ թե 2, այլ 4 անգամ քիչ, քան Անգլիայում, իսկ վերջինիս մոտ հակառակը՝ ոչ թե 2, այլ 4 անգամ շատ:

Այսպիսով, համեմատական առավելությունների տեսությունը խորհուրդ է տալիս երկրներին ներմուծել այն ապրանքը, որի արտադրության ծախսերը մեծ են, քան արտահանվող ապրանքինը: Հետագայում տնտեսագետները ապացուցեցին, որ դա տարածվում է ոչ թե երկու երկրների և երկու տեսակի ապրանքների, այլև ցանակացած քանակությամբ երկրների և ապրանքների վրա:

Գլխավոր արժանիքը այս տեսության կայանում է նրանում, որ այն հիմնավոր ապացուցում է, որ միջազգային առևտուրը եկամտաբեր է բոլոր մասնակիցների համար, սակայն ոմանց համար նա կարող է տալ քիչ եկամուտ, իսկ մյուսների համար՝ շատ: Եվ դրանում է կայանում Ռիկարդոյի տեսության նվաճումը, որն ապացուցում է, որ արտաքին առևտրում հաստատվում է Ա. Սմիթի

միտքը՝ աշխատանքի բաժանման եկամտաբերությունը դրա մասնակիցների համար: Իսկ գլխավոր թերությունը կարելի է համարել այն, որ չի բացահայտում, թե ինչու ձևավորվեցին համեմատական առավելությունները:

***Արտադրության գործոնների համեմատության տեսությունը:***

Ռիկարդոյի մահից հետո տասնամյակներ շարունակ համեմատական առավելությունների տեսությունը իր գոյությամբ մնում էր որպես աշխատանքի միջազգային բաժանման միակ տեսություն: 20-րդ դարի սկզբներին առաջ եկավ միջազգային առևտրի մի նոր կարևոր տեսություն: Շվեդ տնտեսագետներ էլի Յեկչերն ու Բերտիլ Օհլինն առաջարկեցին միջազգային առևտրի իրենց տեսությունը: Յեկչերի տեսության հիմունքները առաջին անգամ հրատարակվել են 1919թ.-ին: Յեկչերի աշակերտ Օհլինը նրա գաղափարները զարգացրել է 1924թ. իր դոկտորական ատենագրության մեջ, իսկ այնուհետև 1933թ.-ին Չարվարդի համալսարանի անգլերեն հրատարակված «Միջուեգիոնալ և միջազգային առևտուր» գրքում: Օհլինը տնտեսագիտության տեսությունից 1977թ. արժանացավ Նոբելյան մրցանակի: Նոբելյան մրցանակակիր դարձավ նաև Սամուելսոնը, կաղապարում ներդնելով զարգացում և կոնկրետացում: Եվ որպես հարգանքի նշան, Արևմուտքում կաղապարը հաճախ անվանում են Յեկչեր-Օհլին-Սամուելսոնի մոդել:

Յեկչեր-Օհլինի (ՅՕ) մոդելը ցույց է տալիս, որ երկու երկրների միջև առևտրի հոսքը որոշվում է երկու երկրներում արտադրության գործոնների պաշարամիջոցներով և ապրանքների արտադրության մեջ օգտագործված գործոններով և, հետևաբար, իրենց տեսության համաձայն երկրները արտահանում են այն ապրանքները, որի արտադրության համար հիմնականում կիրառվում է ավելցուկային գործոնը:

ՅՕ-ի տեսությունը հանդիսանում է երկգործոնային, քանի որ այստեղ համեմատվում են աշխատանքը և կապիտալը: Այսպիսով, որոշ ապրանքներ հանդիսանում են աշխատատար, մյուսները՝ կապիտալատար: Տարբեր երկրներ կապիտալով և աշխատանքով բաշխված են տարբեր մակարդակներով: Յետևաբար, այն երկրներում որտեղ աշխատանքային ռեսուրսները շատ են, իսկ կապիտալը

բավարար չէ, աշխատանքը կլինի համեմատաբար էժան, իսկ կապիտալը՝ թանկ, և հակառակը՝ այն երկրներում, որտեղ աշխատանքային ռեսուրսները սակավ են, իսկ կապիտալը բավարար քանակությամբ առատ, աշխատանքը կլինի թանկ, իսկ կապիտալը՝ էժան: Այս երկրներից յուրաքանչյուրը կարտահանի այն ապրանքները, որոնք հնարավոր է համեմատաբար էժան արտադրել՝ կիրառելով ավելի շատ «արտադրության էժան գործոնը»: Հետևաբար, ապրանքը կլինի էժան և երկրի ներսում, և արտաքին շուկայում, և դրանով էլ կտիրի համեմատական առավելություններին:

Այսպիսով, համաձայն Հեկշեր-Օհլինի տեսության՝ երկիրը արտահանում է այն ապրանքները, որոնց արտադրությունը հիմնված է լիացած արտադրության գործոններով և ներմուծում է ապրանքներ, որոնց արտադրությունում առկա է սակավ արտադրական գործոններ:

**Լեոնտևի պարադոքս:** Տնտեսագիտության պատմության մեջ Հեկշեր-Օհլինի տեսության թերևս ամենահայտնի փորձաստուգումը կատարել է Վասիլի Լեոնտևը 1950-ական թվականների սկզբին: Այս փորձաստուգումը կատարելիս նա Հարվարդի համալսարանի դասախոս էր, արդեն համաշխարհային ճանաչում ունեցող տնտեսագետ և հատկապես հայտնի էր ընդհանուր հավասարակշռության համակարգերի փորձի վրա հիմնված հիմնադրույթների մշակումով:

ՀՕ-ի մոդելը փորձաստուգելու նպատակով, Լեոնտևը սկսեց ԱՄՆ-ի արտահանման ու ներմուծման 1947թ., 1951թ. և 1967թ.-ի տվյալներից: Նախքան ստուգման արդյունքները, նշենք, որ 1947թ.-ին ԱՄՆ-ի տնտեսությունն աշխարհում գերիշխողն էր և պատմության այդ ժամանակաշրջանում նա համարվում էր կապիտալով ամենաառատ երկիրն աշխարհում: Եթե այդպես է, ապա ըստ ՀՕ-ի տեսության, ԱՄՆ-ն պետք է արտահաներ կապիտալատար ապրանքներ և ներմուծեր աշխատատար ապրանքներ, սակայն Լեոնտևի եզրահանգումը ճիշտ հակառակն էր: Այսինքն, ԱՄՆ-ի ներմուծման համեմատությամբ, արտահանումն ավելի աշխատատար էր (ավելի շատ կապիտալի կրիչ եղավ ոչ թե արտահանումը, այլ ներմուծումը, որը չէր համապատասխանում Հեկշեր-Օհլինի տեսությանը): Քանի որ այս արդյունքը շատ անակնկալ էր, այն անվանվեց Լեոնտևի պարադոքս:

Տնտեսագետների կողմից ձեռնարկվեցին բազմաթիվ փորձեր պարզաբանելու ստեղծված հակասությունը: Բացահայտման առաջին իսկ փորձը կատարեց Լեոնտևը: Նա պնդում էր, որ իր ստացած արդյունքների պատճառը մոդելի այն սխալ ենթադրությունն է, որ Ամերիկայի բանվորների արտադրողականությունը հավասար է արտասահմանյան բանվորների արտադրողականությանը: Նա գրել է.

«Եկեք հրաժարվենք արտադրատեղանակի համեմատական համարժեքության պարզ, բայց խոցելի ենթադրությունից և կատարենք այլ հավանական ենթադրություն, այն, որ կապիտալի տվյալ քանակի ամեն մի համակցության դեպքում ամերիկացի աշխատողի տարեկան աշխատանքը համարժեք է արտասահմանցի աշխատողի, ասենք, երեք տարվա աշխատանքին: Այդ դեպքում, ԱՄՆ-ի և աշխարհի մնացած երկրների կապիտալի և աշխատուժի հարաբերական քանակները համեմատելիս, Ամերիկայի բանվորների ընդհանուր թիվը պետք է բազմապատկել երեքով..»:

Այսինքն, այստեղից հետևում է, որ ամերիկյան աշխատողները առավել բարձր են որակավորված, որը պահանջում է իրեն պատրաստման համար մեծ ծախսեր (այսինքն ամերիկյան կապիտալը ավելի շատ ներդրված է մարդկային, քան արտադրական ռեսուրսների մեջ): Բնութագրելով Լեոնտևի պարադոքսը կարելի է եզրահանգել, որ նա հանդիսանում է Յեկչեր-Օհլինի տեսության ուղղակի օգտագործման նախազգուշացում, որը ճիշտ է մեծամասամբ, սակայն ոչ բոլոր դեպքերի համար: Միջազգային շուկա այս կամ այն տեսակի ապրանք հանելու համար բավարար չէ միայն արտադրության գործոնների տարբեր օժտվածությունը: Ավելի կարևոր է, թե ինչքան արդյունավետ են օգտագործվում այդ գործոնները այս կամ այն երկրում:

***Մրցակցային առավելությունների տեսությունը<sup>3</sup>***: Այն առաջ է քաշվել ամերիկացի պրոֆեսոր Մայքլ Փորթերի կողմից և խորապես ուսումնասիրվել է նրա «Միջազգային մրցակցություն» գրքում, 1990 թվականին: Նա ուսումնասիրելով և հիմնվելով ավելի քան 10 երկրներում 100-ից ավել բնագավառների և ենթաբնագավառների

---

<sup>3</sup> «Мировая экономика», А.С. Булатов, Москва 2004г.,стр43

վերլուծությունների վրա եզրահանգեց, որ միջազգային մրցակցային առավելությունները (որոնք գործում են այդ բնագավառում) կախված են նրանից, թե ինչպիսի մակրոմիջավայրում է կատարվում նրանց գործունեությունը սեփական երկրում: Մակրոմիջավայրը որոշվում է ոչ միայն արտադրության գործոններով, այլ նաև ներքին շուկայի պահանջարկի բնույթով (որը կարող է օգնել կազմակերպությանը հասնելու հասունության մինչև արտաքին շուկա դուրս գալը), տիպային կամ զուգահեռ բնագավառների տարատեսակներով, մենեջմենթի մակարդակով և երկրում մրցակցությամբ, ինչպես նաև կառավարության կողմից կատարվող տնտեսական քաղաքականությամբ և պատահական իրադարձություններով (պատերազմ, անսպասելի նորամուծություն և այլն): Այս վեց հիմնական պարամետրերի համադրումը (մասնավորապես առաջին չորսը, որոնց Փորթերը անվանում էր դետերմինանտներ) սահմանում է ենթաբնագավառների արդյունավետ մրցակցային առավելությունները միջազգային շուկայում:

***Միջազգային առևտրի այլ տեսություններ (մասշտաբի էֆեկտ):***

Գոյություն ունեն տեսություններ, որոնք կապված չեն համեմատական առավելությունների տեսության հետ, բայց լրացնում են այն: Այսպես, մասշտաբի էֆեկտի տեսությունը հիմնված է միջազգային առևտրի տեսության մենաշնորհային մրցակցության վրա: Ամերիկացի գիտնական Պոլ Կրուզմանը բացատրում է, որ արտադրության մասշտաբների մեծացման հետ մեկտեղ (որը ընթանում է մենաշնորհային մրցակցության պայմաններում) արտադրության ծախսերը ամեն միավորի համար իջնում է: Այստեղից էլ, այսպիսի երկրների համար դառնում է եկամտաբեր մասնագիտանալ և փոխանակել նույնիսկ տեխնոլոգիապես միանման, սակայն դիֆերենցված արտադրանք (այսպես կոչված ներբնագավառային առևտուր): Նման օրինակ կարող է ծառայել ավտոմեքենաների առևտուրը այն արտադրող երկրների միջև:

Նմանատիպ խնդիրների առկայությունը բացատրվում է տարբեր երկրներում սպառողների ճաշակների տարբերությամբ, աշխարհագրական դիրքի մոտիկությամբ իրենց սահմաններն, գյուղատնտեսական եղանակների անհամապատասխանությամբ:

**Ուղղակի ներդրումների մոդելները:** XX դարի երկրորդ կեսում կապիտալի շարժը հզոր աճ ստացավ ուղղակի ներդրումների տեսքով, որը բերեց ուղղակի ներդրումների մի քանի մոդելների առաջացմանը:

**Մենաշնորհային առավելության մոդելը:** Այս տեսությունը, որի հիմնադիրներեն են ամերիկացի տնտեսագետ Ս.Յայմերը, Չ.Քինդերբերգերը և այլոք, հիմնվում է այն մտքի վրա, որ արտասահմանյան ներդրողը գտնվում է ոչ այնքան լավ վիճակում, քան տեղացի ներդրողները, նա ավելի վատ գիտի երկրի շուկան և դրա օրենքները, տվյալ երկրում նա չունի լայն կապեր, կրում է տրանսպորտային ավելի մեծ ծախսեր և ավելի շատ է ենթարկվում ռիսկերի: Այդ պատճառով նրան հարկավոր են լրացուցիչ, այսպես կոչված մենաշնորհային առավելություններ տեղացի մրցակիցների համեմատ, ինչի շնորհիվ նա կարող է ավելի մեծ եկամուտ ստանալ:

Արտասահմանյան ներդրողի համար մենաշնորհային առավելությունը հնարավոր է տեղային ապրանքների և տնտեսական ռեսուրսների շուկաներում մրցակցության անբացարձակության շնորհիվ:

**Արտադրանքի կյանքի ցիկլի մոդելը:** Այս մոդելը մշակվել է ամերիկացի Ռայմոնդ Վերնոնոմի կողմից: Ըստ այս մոդելի արտադրանքի կյանքի ցիկլը բաղկացած է չորս փուլից (երբեմն այն համարում են հինգ)`

- I - շուկայի ներխուժում,
- II - վաճառքի աճ,
- III - վերելք (IV- շուկայի հագեցվածություն),
- IV (V) - վաճառքի անկում:

Արտադրանքի կյանքի միջազգային ցիկլը ընկերության համար փոքր ինչ այլ է`

- I- մենաշնորհային արտադրություն և նոր արտադրանքի արտահանում,
- II- արտասահմանյան մրցակցի մոտ համանման արտադրանքի արտադրում և ներխուժում շուկա (առաջին հերթին իր երկրի շուկա),



III- մրցակիցների ելք դեպի երրորդ երկիր և համապատասխանաբար առաջատար-երկրի ապրանքների արտահանման կրճատում,

IV- մրցակիցների ելք առաջատար-երկրի շուկա:

Տեխնոլոգիական տեսանկյունից առաջատար ընկերությունն իր նոր արտադրանքի ներխուժումը կարող է սկսել նոր մրցակիցների մրցակցության առաջացման պահին, հնարավոր է նաև նրանց վաճառի իր հին արտադրանքի արտադրման արտոնագիրը: Սակայն գոյություն ունի արտահանման հզորացման նաև այլ միջոց՝ ինքնուրույն ծավալել արտադրություն արտասահմանում, ինչը կերկարեցնի արտադրանքի կյանքի ցիկլը: Առավել ևս, որ աճի և հասունության փուլերում արտադրության ծախսերը սովորաբար իջնում են, ինչը բերում է արտադրանքի գնի իջեցմանը և ինչպես արտահանման ընդլայնման, այնպես էլ արտասահմանյան արտադրության կարգավորմանը: Բայց ապրանքի արտահանման համեմատությամբ, արտասահմանում արտադրությունը եկամտաբեր է ի շնորհիվ ցածր փոփոխական ծախսերի, մաքսային արգելքների բացակայության, արտասահմանյան մենաշնորհների հետ պայքարում դիրքի ամրապնդման և այլն:

*Ինտերնալացման մոդել:* Այս մոդելը պնդում է, որ խոշոր կորպորացիայի ներսում գործում է հատուկ ներքին շուկա, որը ղեկավարվում է կորպորացիայի ղեկավարների և իր ֆիլիալների (ստորաբաժանումների) կողմից: Այս տեսության հիմնադիրներն են անգլիացի տնտեսագետներ Փիթր Բակլին, Մարկ Կեսսոնը, Ալեն Ռազմենը և այլոք, ովքեր կարծում էին, որ միջազգային գործարքների զգալի մասը փաստացի հանդիսանում է հզոր տնտեսական միավորումների (որոնք կոչվում են տրանսազգային կորպորացիաներ) ներֆիրմային գործարք:

*Մարքսիստական մոդել:* Մարքսիստական մոդելը, ինչպես նաև կապիտալի արտահանման ամբողջ մարքսիստական տեսությունը, հիմնվում է ավելցուկային կապիտալի կանխադրույթի վրա: XX դարի սկզբում այդ ավելցուկը արտահանվում էր այդ ժամանակ տնտեսությունում գլխավորող կապիտալի մանր սեփականատերերի կողմից՝ իրենց հարմար եղանակով՝ հիմնականում ֆոնդային բորսաներով և հատկապես բաժնետոմսերի տեսքով: XX դարի

երկրորդ կեսին կապիտալի ավելցուկը սկսեցին արտահանել նախ և առաջ խոշորագույն սեփականատերերը (մենաշնորհները) և հիմնականում ուղղակի ներդրումների միջոցով: Ընդ որում մենաշնորհները, որոնք ուղղակի ներդրումների արտահանման միջոցով դարձել էին միջազգային, տեղացի մրցակիցների նկատմամբ ունեին առավելություն՝ իրենց արտադրական, ֆինանսական և տեխնոլոգիական հզորության շնորհիվ:

*Էկլեկտիկական մոդել:* Ջոն Դանինգայի այս մոդելը ընդգրկում է իր մեջ ուղղակի ներդրումների այլ մոդելներից այն, ինչը փորձվել է կյանքում (հատկապես մենաշնորհային առավելության մոդելից), ինչի համար էլ նրան հաճախ անվանում են «Էկլեկտիկական աղյուսակ»: Այս մոդելի համաձայն ընկերությունը սկսում է արտադրել իր ապրանքները և ծառայությունները արտասահմանում (այսինքն՝ իրականացնում է ուղղակի ներդրումներ), որովհետև համընկնում են միաժամանակ երեք նախադրյալներ՝

1. Ընկերությունը ունի այդ երկրում առավելություններ (սեփականատիրոջ սպեցիֆիկ առավելություն),
2. Ընկերությանը ձեռնտու է օգտագործել այդ առավելությունները հենց տեղում, այլ ոչ թե իրականացնել այն ապրանքների կամ տեխնոլոգիաների արտահանման միջոցով,
3. Ընկերությունը արտասահմանում որոշ արտադրական գործոններն օգտագործում է ավելի արդյունավետ, քան իր հայրենի երկրում (տեղաբաշխման առավելությունը):

Ուղղակի ներդրումների էկլեկտիկական մոդելը վայելում է մեծ հեղինակություն:

***Կապիտալի «փախուստի» տեսություն:*** Այս տեսությունը ի համեմատ մյուսների ավելի քիչ է մշակված, չնայած այն հանգամանքին, որ վերջին տասնամյակում կապիտալի շարժը աշխարհում հասնում է մեծ մասշտաբների: «Կապիտալի փախուստ» տերմինը մեկնաբանվում է տարբեր ձևով: Որոշ տնտեսագետներ այս տերմինը վերագրում են անօրինական կերպով (կամ ուղղակի) կարծաժամկետ կապիտալի դուրս հանումը երկրից: Սակայն հետազոտողների մեծամասնությունը ենթադրում է, որ «կապիտալի փախուստը» երկրից կապիտալի շարժի այնպիսի ձև է, որը հակասում է իր հետաքրքրություններին և տեղի է

ունենում երկրում հայրենական իր օգտագործողների ոչ բարենպաստ ներդրումային մթնոլորտի և, ինչպես նաև, հաճախակի անօրինական ճանապարհով դրա ծագման հետևանքով:

## **Ինքնաստուգման հարցեր**

1. Որո՞նք են տնտեսական կապերի զարգացման պատճառները:
2. Ո՞րն է մերկանտիլ տեսության էությունը:
3. Ո՞րն է Լեոնտևի պարադոքսի իմաստը:
4. Արտաքին առևտրի ինչպիսի՞ ալ տեսություններ կան:

## **Գլուխ II. Աշխարհի երկրների տեսակավորումը և համաշխարհային տնտեսության տեսությունները**

Համաշխարհային տնտեսությունը բաղկացած է բազմաթիվ ազգային տնտեսություններից: Եթե այն դիտարկենք որպես բարդ համակարգ, ապա նպատակահարմար է առանձնացնել ենթահամակարգեր: Այդպիսինն են հանդիսանում ազգային տնտեսությունների խմբերը (երկրների խմբերը): Հիմնականում ընդգծվում են երեք մեծ խումբ՝ զարգացած, զարգացող և անցումային տնտեսություններով: Այս կամ այն խմբին պատկանելիությունը որոշելու համար օգտագործում են տարբեր չափորոշիչներ: Դրանք են նախ և առաջ տնտեսության բնույթը (շուկայական կամ անցումային, պլանային) և սոցիալ տնտեսական զարգացման մակարդակը (առաջին հերթին որոշվում է մեկ անձին ընկնող համախառն ներքին արդյունքի չափը, ՀՆԱ-ի բնագավառային կառուցվածքը, կյանքի որակն ու մակարդակը):

### **2.1 Գնողունակության պարիտետ**

Գնողունակության պարիտետը (ԳՈՒՊ) ազգային արժույթի հարաբերությունն է իր գնողունակությանը՝ հաշվի առնելով որոշակի խումբ ապրանքներ ու ծառայություններ: Եվ քանի որ գները տարբեր երկրներում տարբեր են, ապա գնողունակության պարիտետը պրակտիկորեն չի համընկնում ազգային արժույթի փոխանակման դրույքաչափին (օֆիցիալ և շուկայական): Այդ պատճառով գնողունակության պարիտետը օգտագործվում է անալիտիկ նպատակների համար, այլ ոչ թե տնտեսական հաշվարկներում: Ազգային արժույթի փոխանակման դրույքաչափի որոշման համար դիտարկվում է առաջարկի և պահանջարկի հարաբերակցությունը տվյալ արժույթի նկատմամբ, որը առաջանում է արտատնտեսական գործարքների հետևանքով, այսինքն ապրանքների և ծառայությունների առևտրի հիմքով: Սակայն երկրների մեծամասնությունում այն ներկայացնում է ՀՆԱ-ի փոքր մասը: ԳՈՒՊ-ի

որոշման ժամանակ դիտարկվում է որքան կարելի է ապրանքների և ծառայությունների լայն շրջանակ, որպեսզի ներառվեն ինչպես վաճառվող, այնպես էլ շրջանառության մեջ գտնվող ենթակա վաճառքի, սակայն չվաճառվող ապրանքներ և ծառայություններ: Այսպես, ՄԱԿ-ի միջազգային համեմատականների ծրագրով, որը նպատակաուղղված է որոշել ՀՆԱ-ի հարաբերությունը գնողունակության պարիտետին իրենց ազգային արժույթով, դիտարկվում է 600-800 հիմնական սպառողական ապրանքներ և ծառայություններ, 200-300 հիմնական ինվեստիցիոն ապրանքներ, 10-20 տիպային շինարարական օբյեկտ և այլն: Այնուհետև որոշում են ինչքան արժե այդ «հավաքածուն» ազգային արժույթով և ԱՄՆ դոլարով: Եվ դրանով որոշվում է այս կամ այն արտարժույթի գնողունակությունները: Այսպես, 1990-ական թթ.-ի վերջերին Ռուսաստանի Դաշնության ռուբլու միջին տարեկան փոխարժեքը կազմում էր 5124 ռուբլի 1 ԱՄՆ դոլարի դիմաց, իսկ գնողունակության պարիտետով՝ 2208 ռուբլի: ՀՆԱ-ն բնակչության մեկ անձի հաշվով կազմել է 3000\$ ըստ ռուբլու օֆիցիալ դրույքաչափի, իսկ ԳՈՒՊ-ով՝ 6900\$: Անցումային և զարգացող տնտեսություններով պետություններում այս երևույթը բնորոշ է, այսինքն նրանց ազգային արժույթի ԳՈՒՊ-ը գերազանցում է փոխանակման դրույքաչափը, իսկ զարգացած երկրների համար՝ հակառակը:

*ՀՆԱ-ի բնագավառային կառուցվածքը որպես սոցիալ-տնտեսական զարգացման ցուցանիշ:* Բարձր զարգացման մակարդակով երկրների համար տիպային է մի իրավիճակ, երբ ՀՆԱ-ի կառուցվածքում գերազանցում է տնտեսության երրորդային սեկտորը (ծառայությունների բնագավառը), հետո երկրորդայինը՝ արդյունաբերություն և շինարարություն (ներկայացված է նախ և առաջ վերանշակող արդյունաբերությամբ), իսկ առաջնային սեկտորի մասը բավականին փոքր է (գյուղատնտեսություն և անտառային տնտեսություն, որս, ձկնորսություն):

## 2.2 Կյանքի որակը և մակարդակը

Կյանքի որակը և մակարդակը բնութագրվում է բավականին շատ ցուցանիշներով և առաջին հերթին կյանքի երկարատևությամբ, տարբեր տեսակի հիվանդություններով հիվանդանալու հավանականությամբ, անձնական անվտանգության ապահովման մակարդակով, շրջակա միջավայրով, զբաղվածության մակարդակով, ինչպես նաև տարբեր ապրանքների և ծառայությունների սպառման մակարդակով: Ընդհանուր առմամբ այդ ցուցանիշների կարևորագույններից մի քանիսը ունեն, այսպես կոչված, «մարդկային զարգացման ինդեքս» անվանումը: Այն իր մեջ ներառում է կյանքի սպասվող երկարակեցության ինդեքսը, բնակչության ներգրավվածությունը կրթության մեջ և կյանքի մակարդակը: Կյանքի սպասվող երկարակեցության ինդեքսը կառուցվում է այն նկատառումներով, որ ժամանակակից պայմաններում կյանքի նվազագույն երկարակեցությունը չի իջնում 25 տարուց, իսկ ամենահաջող երկրում՝ 85 տարուց:

$$\text{Կյանքի սպասվող երկարակեցության ինդեքս} = \frac{\text{Մախատեսվող կյանքի երկարակեցությունը երկրում} - \text{Նվազագույն կյանքի երկարակեցությունը աշխարհում}}{\text{մաքսիմալ կյանքի երկարակեցությունը աշխարհում} - \text{նվազագույն կյանքի երկարակեցությունը աշխարհում}}$$

Ռուսաստանի Դաշնության համար 1995թ.-ին այն ունի հետևյալ տեսքը՝

$$(65-25) / (85-25)=0.667$$

Կրթության մեջ բնակչության ներգրավվածության ինդեքսը որոշվում է հետևյալ կերպ.

$$\text{Բնակչության ներգրավվածությունը կրթության մեջ} = \frac{2x \text{ գրագետ մարդկանց թիվը բարձր 15 տարեկանից} + \text{դպրոցական ուսանողական տարիքի բնակչության ներգրավվածությունը կրթության մեջ}}{3}$$

Ռուսաստանի Դաշնության համար 1995թ.-ին այն ունի հետևյալ տեսքը՝

$$(2 \times 0.984 + 0.650) / 3 = 0.873$$

Կյանքի մակարդակի ինդեքսը կարող է ներկայացվել որպես մեկ անձի հաշվով ՀՆԱ-ի մասի՝ ճշգրտված ԳՈՒՊ-ով, հարաբերությունը նույն ցուցանիշի միջին համաշխարհայինին, որը Ռուսաստանի Դաշնության համար կազմում է 0.74: Համագումարելով միջին թվաբանականը ունենում ենք մարդկային զարգացման ինդեքսը: Տվյալ դեպքում մարդկային զարգացման ինդեքսը Ռուսաստանի համար կլինի՝

$$(0.667 + 0.873 + 0.74) / 3 = 0.76$$

Ձարգացած երկրների համար մարդկային զարգացման ինդեքսը ձգտում է 1-ի, իսկ ոչ զարգացած երկրների համար լավագույն դեպքում կազմում է 0.2:

## 2.3 Զարգացած երկրների խումբ

Զարգացած (արդյունաբերությունով զարգացած կամ ինդուստրիալ) երկրների խմբին կարելի է դասել շուկայական տնտեսություններով և սոցիալ տնտեսական զարգացման բարձր մակարդակով պետությունները, որոնց մոտ բնակչության մեկ անձին բաժին ընկնող ՀՆԱ-ն ըստ ԳՈՒՊ-ի կազմում է ոչ քիչ քան 12.000 ԱՄՆ\$։ Միջազգային արտարժութային հիմնադրամի կողմից ներկայացված ցուցակում հաշվարկվում են հետևյալ երկրները՝ Արևմտյան Եվրոպայի բոլոր երկրները, ԱՄՆ, Կանադան, Ճապոնիան, Ավստրիալիան, Նոր Զելանդիան, 1997թ-ից Հարավային Կորեան, Սինգապուրը, Հոնգկոնգը, Տայվան, Իսրայելը։ ՄԱԿ-ը նրանց թվին է գումարում Հարավ Աֆրիկյան հանրապետությանը։ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը նրանց թվին է անցկացնում Թուրքիան և Մեքսիկան (սակայն նրանք ավելի շուտ զարգացող են), քանի որ նրանք այդ կազմակերպության անդամ են և նաև ունեն տարածքային պատկանելիություն՝ Թուրքիայի մի մասը պատկանում է Եվրոպային, Մեքսիկան անդամակցում է Հյուսիս Ամերիկյան ազատ առևտրի համագործակցության ասոցիացիային՝ NAFTA<sup>4</sup>։ Եվ, այսպիսով, զարգացած երկիր են համարվում մոտ 30 երկրներ և տարածքներ։ Լեհաստանը, Չեխիան, Կիպրոսը, Սլովենիան, Վենգրիան, Էստոնիան Եվրոխորհրդին պաշտոնապես միացումից հետո կհամարվեն զարգացած։

Համաշխարհային տնտեսություններում զարգացած երկրները հանդիսանում են գլխավոր խումբը։ 1990-ական թթ.-ի վերջին նրանց բաժին է ընկնում համաշխարհային համախառն ՀՆԱ-ի 55%-ը, միջազգային առևտրի և կապիտալի շարժի մեծամասնությունը։ Զարգացած երկրների ցանկի մեջ առանձնացնում են ՀՆԱ-ի

---

<sup>4</sup> Համաձայնությունը ստեղծել Հյուսիս Ամերիկյան ազատ առևտրի ասոցացիան (NAFTA) ԱՄՆ-ի, Կանադայի և Մեքսիկայի միջև ուժի մեջ է մտել 1994 թվականի հունվարի 1-ից։ NAFTA-ն իրենից ներկայացնում է դինամիկ միավորում, որի նպատակն է բարձրացնել իր տարածքում ազգային ձեռնարկությունների մրցունակության մակարդակը և հզոր ու բաց շուկայի կազմակերպումը։

“Мировая экономика”, А.С. Булатов, Москва 2004г.,сmp317



ամենամեծ ծավալով «յոթնյակը» (ԱՄՆ, Ճապոնիա, Գերմանիա, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Կանադա): Այդ երկրներին բաժին է ընկնում համաշխարհային ՀՆԱ-ի 44%-ը, որից ԱՄՆ` 21%, Ճապոնիա` 7%, Գերմանիա` 5% և այլն: Զարգացած երկրների մեծամասնությունը մտնում է ինտեգրացիոն միավորումների մեջ, որոնցից ամենախոշորներն են Եվրոմիությունը և Հյուսիս Ամերիկյան ազատ առևտրի համագործակցության ասոցիացիան (ներանց բաժին է հասնում համապատասխանաբար 20% և 24%):

## 2.4 Զարգացող երկրների խումբ

Զարգացող երկրների (թույլ զարգացած) խմբին են դասվում շուկայական տնտեսություններով և տնտեսապես զարգացվածության ցածր մակարդակով պետությունները: Միջազգային արտարժույթային հիմնադրամի 182 մասնակիցներից զարգացող են համարվում ընդամենը 121-ը: Չնայած նրանց մեծ քանակի, առեւտլի տարածքի, ինչպես նաև, որ նրանց մեծամասնությունում առկա է բնակչության մեծ կազմ, նրանց բաժին է ընկնում համաշխարհային ՀՆԱ-ի 28%-ը: Այս խումբը բավականին մեծ է և, որպես հետևանք, միաձև չէ: Այդ ցուցակի վերին խումբը կազմում են համեմատական զարգացած տնտեսություններով և կառուցվածքով պետությունները, ինչպիսիք են, օրինակ, հարավ արևելյան Ասիայի և Լատինական Ամերիկայի երկրները, որոնց մոտ մեծ է ՀՆԱ-ի փայաբաժինը 1 անձի հաշվով և բարձր է մարդկային զարգացվածության ինդեքսը, ինչպես նաև այլ բնորոշող ցուցանիշներ:

Նրանցից առանձնացնում են նոր ինդուստրիալ երկրների ենթախումբը, որոնք վերջին 10-20 տարիների ընթացքում ցուցադրեցին տնտեսական աճի բարձր տեմպեր, որը ետևում թողեց հետամնացության աստիճանը և մոտեցավ զարգացած երկրների շարքին: Իսկ նրանցից ոմանք արդեն անցել են զարգացած երկրների ցուցակը: Ներկայումս նոր ինդուստրիալ երկրների շարքին կարելի է դասել Ինդոնեզիան, Մալազիան, Թաիլանդը, Լատինական Ամերիկայում՝ Չիլին:

Առանձնացնում են երկրների հատուկ ենթախումբ, որի անդամները նավթի խոշոր արտահանողներ են: Այս խմբի կորիզը կազմում են ՕՊԵԿ<sup>5</sup> 12 մասնակից երկրները:

---

<sup>5</sup> ՕՊԵԿ-ը կազմակերպություն է, որն իր մեջ ընդգրկում է նավթ արտահանող երկրներ: Ստեղծվել է 1960 թվականին կարևորագույն նավթի արդյունահանման երկրների (Լատինական Ամերիկա, Աֆրիկա, Ասիա) հետաքրքրությունների միասնական պաշտպանության նպատակով: ՕՊԵԿ-ի կազմում ընդգրկված երկրներին է բաժին ընկնում համաշխարհային նավթի պահուստների 75%-ը և համաշխարհային արդյունահանման 1/3 մասը:

Սակայն մի շարք արտահանողներ, որոնք համաշխարհային արտահանման խոշոր մասնակիցներ են, չեն ներառվում տվյալ կազմակերպությունում (ինչպիսինն է օրինակ Մեքսիկան): Չնայած որ այս ենթախմբում 1 անձի հաշվով ՀՆԱ-ի ծավալի տատանումը մեծ է (օրինակ Նիգերիան կազմում է 1000 ԱՄՆ \$), այդուհանդերձ նավթի պաշարները արդեն մատուցել են մեծ ծառայություն այս երկրների համար և հետագայում նպաստել են նրանց հետագա զարգացմանը:

Դարավոր հետամնացությունը, բնական հանածոների, պաշարների և դեպի ծով ելքի բացակայությունը, ներքաղաքական և սոցիալական անբարենպաստ իրավիճակը, պատերազմական իրավիճակը, հաճախ անբարենպաստ կլիման ենթադրում են վերջին տասնամյակում երկրների քանակի ավելացում, որոնք համարվում են առավել քիչ զարգացած: Ներկայումս նրանք 47-ն են, որոնցից 32-ը գտնվում են տրոպիկական Աֆրիկայում, 10-ը՝ Ասիայում, 4-ը՝ Օվկիանիայում, 1-ը՝ Լատինական Ամերիկայում: Հիմնական խնդիրը կայանում է ոչ թե նրանց հետամնացության և աղքատության, այլև զգալի տնտեսական ռեսուրսների բացակայության մեջ:

## 2.5 Անցումային տնտեսություններով երկրներ

Ինչպես նշվեց, աշխարհի երկրների տեսակավորման մեջ երրորդ խումբն են կազմում անցումային տնտեսություններով երկրները: Այս խմբին ենք դասում այն երկրները, որոնք 80-90-ական թվականներից անցում են կատարում հրահանգա-ադմինիստրատիվ (սոցիալիստական, պլանային) տնտեսությունից շուկայականին (այդ պատճառով էլ անվանում են հետսոցիալիստական): Դրանք են Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի 12 երկրները և նախկին ԽՍՀՄ-ի 15 հանրապետությունները, ինչպես նաև Սոնդոլիան, Չինաստանը և Վիետնամը (չնայած որ վերջին երկուսը դեռ շարունակում են կառուցել կոմունիզմ):

Անցումային տնտեսություններով պետությունների կողմից արտադրվում է համաշխարհային ՀՆԱ-ի մոտ 17-18%-ը, այդ թվում Կենտրոնական Եվրոպան առանց Բալթյան երկրների՝ 2%-ից ավելին, նախկին ԽՍՀՄ-ի երկրները՝ 4% (որի մեջ Ռուսաստանի Դաշնությունը կազմում է 3%), Չինաստանը՝ 12%: Եթե փորձենք դասակարգել այս խումբը, ապա կարելի է այն դիտարկել հետևյալ կերպ՝ մի խմբի մեջ կարելի է ներառել նախկին ԽՍՀՄ-ի հանրապետությունները, որոնք միացած են ներկայումս ԱՊՀ-ի երկրների ինտեգրացիոն միավորումներով, որը վերջերս կորցրել է իր նշանակությունը և ազդեցությունը, սակայն գործում է ընդհանուր կուլտուր էսթետիկական նորմերից ելնելով: Նրանց մոտ նման են բարեփոխումների մոտեցումները, մարդկային զարգացվածության աստիճանը և այլն: Հենց դրանով էլ պայմանավորված է նրանց ինտեգրացիոն խմբավորման միավորումը: Այսպես, Բելառուսը, Ուզբեկստանը, Թուրքմենիան անցկացնում են ոչ ռադիկալ բարեփոխումներ ի համեմատ մյուս մասնակից երկրների:

Երկրորդ խմբի մեջ կարելի է միավորել Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրները՝ ներառյալ Բալթյան երկրները: Այդ երկրների համար բնորոշ է բարեփոխումների ռադիկալ մոտեցում և ձգտում միանալ Եվրոխորհրդին, ինչպես նաև համեմատորեն բարձր զարգացման աստիճան: Այդուհանդերձ, այս խմբի առաջնորդներից հետ մնացող երկրները և նրանց պատճառները կարելի է բնորոշել

ելնելով ոչ տնտեսագիտական բնորոշումներից և միավորել առաջին խմբին: Դրանք են Ալբանիան, Ռումինիան, Բուլղարիան և նախկին Չեխոսլովակիայից ստեղծված երկրները:

Առանձին ենթախմբի մեջ կարելի է դիտարկել Չինաստանը և Վիետնամը, որոնք անցկացնում են բարեփոխումներ և իրենց բարեփոխումների առաջին տարիներին սոցիալ տնտեսական զարգացման տեմպերը բավականին ցածր են, սակայն վերջին տարիներին նրանց զարգացման տեմպերը կտրուկ աճել են և ներկայումս արագ զարգանում են:

Ներկայումս հրամանա-ադմինիստրատիվ կառուցվածքով տնտեսություններով մնացել են Կուբան և Չյուսիսային Կորեան:

## 2.6 Համաշխարհային տնտեսության զարգացման միտումների մասին հրապարակումներ

Միջազգային վիճակագրական հրապարակումները կարելի է բաժանել մի քանի հիմնական խմբերի:

*ՄԱԿ-ի հրապարակումներ, որոնք արտացոլում են սոցիալ տնտեսական զարգացման ընդհանուր հարցերը:* Այս խմբին են դասվում ՄԱԿ-ի այնպիսի հրապարակումները, ինչպիսիք են Վիճակագրական տարեգիրքը (Statistical Yearbook) և Ամենամսյա վիճակագրական բյուլետենը (Monthly Bulletin of Statistics), ինչպես նաև Համաշխարհային Բանկի հրապարակումը՝ Համաշխարհային սոցիալ-տնտեսական ցուցանիշները (World Development Indicators) և Համաշխարհային Բանկի առլասը (World Bank Atlas):

*Վիճակագրական տարեգիրքը* ներառում է բնակչության, սոցիալական ոլորտի և աշխարհի երկրների գործունեության մասին զգալի տվյալներ, առանձին մասով առանձնացված են միջազգային տնտեսական հարաբերությունների տվյալները: Տեղեկատուում մեծ մաս են զբաղեցնում միջազգային առևտրին, վճարային հաշվեկշիռներին և միջազգային ֆինանսաներին վերաբերվող տվյալները:

*Ամենամսյա վիճակագրական բյուլետենը* ներառում է դեմոգրաֆիկական, սոցիալական և տնտեսական ինֆորմացիան, ինչպես նաև բնակչության թվաքանակը, արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրության ինդեքսները, զազի, մավթի և այլ գունավոր մետալուրգիայի մուտքերը: Բյուլետենի առանձին մասում բերված են ֆինանսական շուկայի իրավիճակները, արտարժույթի փոխանակման դրույքաչափի, արտարժույթային պահուստների և այլնի մասին տվյալները: Ամենամսյա վիճակագրական բյուլետենում տվյալները հրապարակվում են ութ տարին մեկ, ընդ որում վերջին երկու տարիների տվյալները բերվում է եռամսակային և ամսական ձևով:

*Համաշխարհային սոցիալ-տնտեսական ցուցանիշները* հրապարակումը հանդիսանում է եռամսակային տեղեկատու, որը

ներառում է հիմնական սոցիալ-տնտեսական տվյալներն ըստ երկրների խմբերի: Մասնավորապես ընդգրկում է բնակչության տվյալները, հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները, ազգային ռեսուրսները, կապիտալ ներդրումները, գները և դրանց դինամիկան:

*Համաշխարհային Բանկի ատլասը* կոմպակտ հրատարակություն է, որը ներառում է աշխարհի ամբողջ երկրների հետևյալ տվյալները՝ բնակչության թվաքանակ, կյանքի մակարդակի ցուցանիշներ, հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ, օրի և էներգիայի պահանջարկի ցուցանիշներ, միջավայրի պահպանման ցուցանիշներ և այլն:

*ՄԱԿ-ի բնագավառային հրապարակումներ:* Արդյունաբերություն և գյուղատնտեսություն, դեմոգրաֆիա և արտաքին առևտուր՝ այս և շատ այլ հարցեր իրենց պատասխանը գտնում են այն վիճակագրական հրատարակություններում, որոնք դասվում են այս խմբին: Որպես օրինակ կարող ենք բերել Միջազգային արժույթային հիմնադրամի «Միջազգային ֆինանսական վիճակագրություն» («International Financial Statistics») ամենամսյա հրատարակումը: Տվյալ հրատարակումը ներառում է Միջազգային արժույթային հիմնադրամի անդամ երկրների վերջին ութ տարվա ներքին և արտաքին ֆինանսական կողմերը՝ փոխանակման դրույթաչափերը, պետական ֆինանսները, միջազգային ֆինանսական պահանջները և երկրի պարտավորությունները, ոսկու և արժույթի պահուստները, բանկային ավանդները և այլն:

Համաշխարհային առևտրային կազմակերպությունը թողարկում է *Տարեկան զեկուցումներ (WTO, Annual Report)* երկու հատորով: Առաջին հատորը ներկայացնում է միջազգային առևտրի զարգացման միտումների ու իրավիճակների մանրամասն վերլուծությունը: Մասնավորապես, նրանում ուսումնասիրված են միջազգային առևտրային շուկայում մրցակցության քաղաքականությունը, միջազգային և ռեգիոնալ առևտրի լիբերալացման խնդիրները, Համաշխարհային առևտրային կազմակերպության գործունեությունը՝ օժանդակելով միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացումը:

Երկրորդ հատորում բովանդակված են միջազգային առևտրի զարգացման վերաբերյալ մանրամասն վիճակագրական ինֆորմացիան (հիմնականում տարվում են համենամատականներ համաշխարհային ցուցանիշների հետ):

*ՄԱԿ-ի ռեզիոնալ հրապարակում:* Այս հրապարակումը թողարկվում է ՄԱԿ-ի տարածքային հանձնաժողովներին համապատասխան դիրքորոշմամբ և բնութագրվում է երկրների մասին ավելի մանրամասն ու մանրակրկիթ տվյալներով ի համենատ համաշխարհային տեղեկատուների: Նման հրապարակման օրինակ է *Ասիայի երկրների և Խաղաղ օվկիանոսի ռեզիոնի համար վիճակագրական տարեգիրքը (Statistics Yearbook for Asia and the Pacific):*

*Այլ միջազգային կազմակերպությունների հրապարակումներ:* Այս խմբում մեծ հետաքրքրություն են առաջացնում Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կողմից թողարկվող վիճակագրական հրապարակումները: Ինֆորմացիան ներառում է տվյալ կազմակերպության անդամ երկրների տվյալները և բնութագրվում է իր օպերատիվությամբ: Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության հրապարակումները պարունակում են բազմաթիվ դիագրամներ և գրաֆիկներ, որոնք զգալիորեն մեղմացնում են վիճակագրական տվյալների ընկալումը:

Այդ հրապարակումներից առանձնահատուկ տեղ է զբաղեցնում *Հիմնական տնտեսական ցուցանիշներ (Main Economic Indicators)* ամսագիրը: Այն համարվում է կարճաժամկետ վիճակագրական տվյալների աղբյուր, որը բնութագրում է աշխարհի զարգացած երկրների տնտեսության զարգացումն ու դինամիկան:

ՏՀԶԿ-ի բազմաբնագավառային հրապարակումների շարքում թողարկվում են նաև այնպիսիները, որոնք ընդգրկում են տվյալ կազմակերպության անդամ հանդիսացող երկրների միայն մեկ բնագավառ: Ինչպես նաև ներառված են տվյալ բնագավառների միջազգային առևտրին վերաբերվող հարցերը: Այդ հրապարակումներից է, օրինակ, *ՏՀԶԿ-ի անդամ երկրների*



*գյուղատնտեսական վիճակագրություն (OECD Agricultural Statistics) հրատարակումը:*

Ինֆորմացիայի ավելի մեծ ծավալ կա «ԱՊՀ տարեգիրք» հավաքածուում: Նրանում բերված են ԱՊՀ անդամ երկրների հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների համեմատական բնութագրերը:

**Ինտերնետը և արտաքին տնտեսական գործունեությունը<sup>6</sup>:** Գլոբալ Ինտերնետ կոմայուտերային ցանցի ի հայտ գալը և արագ զարգացումը վերջին տարիներին կտրուկ փոխեց մարդու կյանքը: Շնորհիվ այդ կոմայուտերային ցանցի՝ ամբողջ աշխարհի ինֆորմացիոն ռեսուրսները հասանելի եղան: Ամեն տարի ինտերնետի կոմերցիոն օգտագործողների թիվը ավելանում է, ինչը դարձնում է այն ամբողջ աշխարհի մասշտաբով բիզնեսի հզոր գործիք: 2001թվականի սկզբի դրությամբ, ըստ Nua ընկերության տվյալներով, ինտերնետ օգտագործողների թիվը հասնում էր 400 մլն.-ի, ինչը երկու անգամ ավելի է քան 1999թվականի սեպտեմբերի դրության տվյալները: Ինտերնետ օգտագործողների թվով առաջատարն է համարվում Յյուսիսային Ամերիկան: Նրան բաժին է հասնում ամբողջ օգտագործողների 40%-ը, Եվրոպային՝ 28%, Լատինական Ամերիկային՝ 4%, Աֆրիկային 0.8%, Ռուսաստանին՝ 8.3%:

Այսօր, ընդհանուր առմամբ, ինտերնետը ոչ ոքի չի պատկանում: Մագիստրալ կոմունիկացիաների զարգացմամբ զբաղվում է կառավարությունը իր երկրի սահմաններում: Մարմինը, որը զբաղվում է ստանդարտների կամ այլ կարևոր հարցերի որոշումների ընդունմամբ, հանդիսանում է Ինտերնետի ճարտարապետական հարցերով Ղեկավար խորհուրդը՝ Internet Architecture Board (IAB): Ինտերնետով ինֆորմացիայի ստացման և ուղղարկման հնարավորությունը բերեց էլեկտրոնային առևտրի բուռն աճին, որը 1198 թվականին կազմում էր 20 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ արդեն 2002թվականին մասնագետների գնահատմամբ այդ թիվը հասավ 330

---

<sup>6</sup> "Внешнеэкономическая деятельность предприятия", Л. Е. Стровский, Москва 2001г.,

մլրդ. ԱՄՆ դոլար: Այդ կապի տարածությունը ենթադրում է առուվաճառք ավելի ավտոմատացված և ավելի պրակտիկ ձևով: Ձեռնարկությունները կապ են հաստատում միմյանց և իրենց հաճախորդների հետ այդ անսահման գործուն ցանցով: Ինֆորմացիան ինտերնետով աշխարհի բոլոր ծայրերին փոխանցվում է վայրկյանական:

Աղյուսակ 2-ում բերված են որոշ միջազգային կազմակերպությունների կայքեր, որոնցում կարող եք գտնել տարբեր բնույթի վիճակագրական տվյալներ, հոդվածներ, նորմատիվ փաստաթղթեր և այլն:

*Աղյուսակ 2. Միջազգային կազմակերպությունների կայքերը*

Կազմակերպության անվանումը	Ինտերնետային հասցեն
Համաշխարհային առևտրային կազմակերպություն (WTO)	<a href="http://www.wto.org/">http://www.wto.org/</a>
Համաշխարհային բանկ (World Bank)	<a href="http://www.worldbank.org/">http://www.worldbank.org/</a>
Եվրոպական կոմիսիա (EC)	<a href="http://www.europa.em.int/comm/">http://www.europa.em.int/comm/</a>
Եվրոպական կենտրոնական բանկ (ECB)	<a href="http://www.ecb.int/">http://www.ecb.int/</a>
Միջազգային ներդրումների խորհրդատվական ծառայություն (FIAS)	<a href="http://www.fias.net/">http://www.fias.net/</a>
Միջազգային տուրիստական կազմակերպություն (WTO)	<a href="http://www.world-tourism.org/">http://www.world-tourism.org/</a>
Միջազգային առևտրային պալատ (ICC)	<a href="http://www.iccwbo.org/">http://www.iccwbo.org/</a>
Միջազգային արժույթային հիմնադրամ (IMF)	<a href="http://www.imf.org/">http://www.imf.org/</a>
Միջազգային ավտոտրանսպորտային միություն (IRU)	<a href="http://www.iru.org/">http://www.iru.org/</a>
Միջազգային ֆինանսական կորպորացիա (IFC)	<a href="http://www.ifc.org/">http://www.ifc.org/</a>
Միջազգային վիճակագրական ինստիտուտ (ISI)	<a href="http://www.cbs.nl/isi/">http://www.cbs.nl/isi/</a>
Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (OECD)	<a href="http://www.oecd.org/">http://www.oecd.org/</a>
Սևծովյան տնտեսական համագործակցություն (BSEC)	<a href="http://www.photius.com/bsec/bsec.ht">http://www.photius.com/bsec/bsec.ht</a>
Բալթյան և միջազգային ծովային խորհուրդ (BIMCO)	<a href="http://www.bimco.dk/">http://www.bimco.dk/</a>

Հարավ-Արևելյան Ասիայի երկրների ասոցիացիա (ASEAN)	<a href="http://www.aseansec.org/">http://www.aseansec.org/</a>
Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն (WIPO)	<a href="http://www.wipo.int/">http://www.wipo.int/</a>
Ասիական- խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի զարգացման ինստիտուտների ասոցիացիա (ADFIAP)	<a href="http://www.adfiap.org/">http://www.adfiap.org/</a>
Միջազգային ավիատրանսպորտային կազմակերպություն (IATA)	<a href="http://www.iata.org/">http://www.iata.org/</a>
ՄԱԿ-ի առևտրի և զարգացման կոմիտեի (UNCTAD)	<a href="http://www.unctad.org/">http://www.unctad.org/</a>
Միջազգային առևտրային իրավունքի ՄԱԿ-ի հանձնաժողով (UNCITRAL)	<a href="http://www.uncitral.org/">http://www.uncitral.org/</a>
«Փողերի լվացման» դեմ պայքարի կոմիտե (FATF)	<a href="http://www.oecd.org/fatf/">http://www.oecd.org/fatf/</a>
Միջազգային նավահանգիստների ասոցիացիա (IAPH)	<a href="http://www.iaph.or.jp">http://www.iaph.or.jp</a>
Միջազգային մաքսային կազմակերպություն (WCO)	<a href="http://www.wcoomd.org/">http://www.wcoomd.org/</a>
Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ (IBRD)	<a href="http://www.worldbank.org/html/extdr/ckgrd/ibrd/">http://www.worldbank.org/html/extdr/ckgrd/ibrd/</a>
Երկաթգծերի միջազգային միություն (UIC)	<a href="http://www.uic.asso.fr/">http://www.uic.asso.fr/</a>
Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (EBRD)	<a href="http://www.ebrd.org/">http://www.ebrd.org/</a>
Արժեքավոր թղթերի թողարկման միջազգային կազմակերպություն (IOSCO)	<a href="http://www.iosco.org/">http://www.iosco.org/</a>
Միջազգային զարգացման ասոցիացիա (IDA)	<a href="http://www.worldbank.org/ida/">http://www.worldbank.org/ida/</a>
Նավթ արտահանող երկրների կազմակերպություն (OPEC)	<a href="http://www.opec.org/">http://www.opec.org/</a>
ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով (UN/ECE)	<a href="http://www.unece.org/">http://www.unece.org/</a>
Միջազգային ծովային կազմակերպություն (IMO)	<a href="http://www.imo.org/">http://www.imo.org/</a>
Խաղաղօվկիանոսյան տնտեսական խորհուրդ (PBEC)	<a href="http://www.pbec.org/">http://www.pbec.org/</a>
Խաղաղօվկիանոսյան տնտեսական համագործակցության խորհուրդ (PECC)	<a href="http://www.pecc.net/">http://www.pecc.net/</a>
Ասիական-խաղաղօվկիանոսյան տնտեսական համագործակցություն (APEC)	<a href="http://www.apecsec.org.sg/">http://www.apecsec.org.sg/</a>

## 2.7 Համաշխարհային տնտեսության տեսությունները

Դեռևս գոյություն չունի ժամանակակից տնտեսության մեջ մի տեսություն, որը ամբողջությամբ նվիրված լինի համաշխարհային տնտեսությանը: Սակայն կան տնտեսական, սոցիալական, սոցիալ մշակութային տեսություններ, որոնցում բավականին մեծ ուշադրություն է դարձվում համաշխարհային տնտեսությանը կամ տարվում են համեմատականներ: Նախ և առաջ դրան են վերաբերվում սոցիալական և տնտեսական զարգացման փուլերի տեսությունները և սոցիալ մշակութային քաղաքակրթության, քաղաքակրթության բախումների տեսությունները<sup>7</sup>:

### 2.7.1 Ջարգացման փուլերի տեսությունները

Ջարգացման փուլերի տեսությունները ներկայացվում են նախ և առաջ տնտեսական աճի փուլերի տեսության, ընդհանուր արդյունաբերության և նոր ինդուստրիալ հասարակության, ինչպես նաև պոստինդուստրալ հասարակության տեսությունների միջոցով:

**Տնտեսական աճի փուլերի տեսություն:** Ամերիկացի տնտեսագետ, սոցիոլոգ և պատմաբան Ուոլտ Ռոստոուն 1960 թվականին ձևակերպեց իր տնտեսական աճի փուլերի տեսությունը «Տնտեսական աճի փուլեր. ոչ կոմունիստական հրովարտակ (մանիֆեստ)» գրքում, որտեղ նա ընդգծել է աճման հինգ հիմնական փուլեր՝

1. «ավանդական» հասարակություն,
2. դեպի վերելք նախադրյալների ստեղծման ժամանակահատված,
3. վերելք,
4. շարժ դեպի հասունություն,
5. մեծ զանգվածային սպառման դար:

Չափորոշիչները, որոնք դասում են տվյալ ժամանակահատվածը այս կամ այն փուլին, հանդիսանում են տեխնիկո-տնտեսական բնութագրերը՝ տեխնիկայի զարգացման

---

<sup>7</sup> “Мировая экономика”, А.С. Булатов, Москва 2004г.

մակարդակը, տնտեսության բնագավառային կառուցվածքը, սպառման կառուցվածքը և այլն:

«Ավանդական» հասարակությունում, Ռոստոուի կարծիքով, աշխատունակ բնակչության 75%-ից ավելին զբաղված էր պարենամթերքի արտադրությամբ, քաղաքական իշխանությունը պատկանում էր հողերի սեփականատերերին կամ կենտրոնական կառավարությանը: Երկրորդ փուլը հանդիսանում է որպես անցում դեպի վերելք: Այդ փուլում տեղի են ունենում էական փոփոխություններ երեք ոչ արտադրական ոլորտներում՝ գյուղատնտեսություն, տրասպորտ և արտաքին առևտուր: Երրորդ փուլը՝ վերելքը, իր մեջ ամփոփում է 2-3-ից մինչև մի քանի տասնյակ տարիներ: Այս ժամանակահատվածում աճեցին կապիտալ ներդրումների տեմպերը, սկսվեցին նոր տեխնիկայի արագ ներդրումները: Ջարգացումը սկզբից ներառում է արտադրության բնագավառների որոշ խմբեր, և միայն որոշ ժամանակ անց այն վերածվում է ամբողջական տնտեսության: Որպեսզի այդ աճը լինի ինքնաբերաբար և ինքնաապահովող, հարկավոր է նախ և առաջ ազգային եկամտում ներդրումների ծավալի կտրուկ աճ (5-ից մինչև ամենաքիչը 10%): Երկրորդ, արդյունաբերության որևէ բնագավառի նպատակային զարգացում և երրորդ, «ավանդական» միջավայրից անցում դեպի արդիական տնտեսության: Այս բոլորը դրույթները ապահովվում են սոցիալ-տնտեսական համակարգի սկզբնական աճը:

Չորրորդ փուլը Ռոստոուն բնութագրում է որպես գիտության առաջադիմության երակարատև փուլ, բնորոշվում է ուրբանիզացման գործընթացների աճով, որակավորված աշխատանքի դերի նշանակության բարձրացումով, արդյունաբերության կառավարման կենտրոնացմամբ որակավորված ղեկավարի ձեռքում (մենեջերներ): Հինգերորդ փուլում տեղի է ունենում անցում առաջարկից դեպի պահանջարկը, արտադրությունից դեպի ապրանքների և ծառայությունների մեծածավալ սպառումը: Ավելի ուշ իր հետագա «Քաղաքականություն և աճման փուլեր» գրքում (1971թ) Ռոստոուն ավելացրել է վեցերորդ փուլը՝ կյանքի որակի որոնումը, որտեղ առաջին պլան է մղվում մարդու հոգեկան զարգացվածությունը:

Ռոստոուի տեսությունը օգնում է հիմնավորել աշխարհի տարբեր տարածքներում տնտեսության զարգացման քայլերը և նրա հեռանկարները:

**Ընդհանուր արդյունաբերության և նոր ինդուստրիալ հասարակության տեսությունները:** Ընդհանուր արդյունաբերության տեսության առաջացումը պայմանավորված էր ֆրանսիացի սոցիոլոգ Ռայմոն Արոնի հետ, ով պնդում էր, որ տարբեր երկրների ինդուստրացումը ստեղծում է իրենց համար ընդհանուր արդյունաբերական միջավայր, իսկ սովետական և արևմտյան համակարգերը միայն նրա տարատեսակներն են:

Այս տեսության մյուս հեղինակի՝ ֆրանսիացի էլյուլիայի կարծիքով տեխնիկական առաջադիմությունը ձևափոխում է ոչ միայն տնտեսական օրենքների կիրառումը, այլ նաև այդ օրենքների էությունը՝ վերացվեց սեփականատիրությամբ ղեկավարվող դերը, տնտեսական ուժը անցավ խոշոր կորպորացիաների ձեռքը, պետության օգնությամբ անհետացավ հարուստների և աղքատների բևեռները: Այս նույն բնութագրերը բնորոշ են նաև նոր ինդուստրիալ տեսությանը, որը պնդում է, որ ինդուստրիալ քաղաքակրթության խնդիրների լուծումը անցել է կառավարողների՝ մենեջերների ձեռքը: Ընդ որում, այս տեսության հեղինակների համաձայն, ժամանակակից կորպորացիաները չունեն մենաշնորհային բնորոշում, այն կողմնորոշված է ոչ միայն եկամտի ստացման, այլ նաև շատ ուրիշ կարևոր սոցիալական խնդիրների լուծմանը: Ասվածի ապացույցն է հանդիսանում այն, որ աճող կորպորատիվ եկամուտները ուղղվում են սպառողի հարցումների լիովին բավարարմանը, քաղաքների վերակառուցմանը, շրջակա միջավայրի պահպանմանը, գիտահետազոտության զարգացմանը և այլն:

Այս տեսությունը ամփոփվել է ամերիկացի տնտեսագետ Ջոն Գեյլբրեյթի աշխատություններում, բայց նախ և առաջ «Նոր ինդուստրիալ հասարակություն» գրքում (1967թ): Դեռ 1957թվականին իր աշխատություններում նա փորձում էր ապացուցել, որ բարդ և ավելի կատարյալ սարքավորումների կիրառումը բերում է կապիտալիզմի ներքին վերածննդ, սպառողական ապրանքներով շուկայի հագեցվածության, ծառայության համակարգի լավ

կազմակերպման, և որպես այս ամենից հետևությունն նախկին սոցիալական հակադրության վերացման: Ժամանակակից կապիտալիզմի տնտեսության համակարգը ներկայացված էր որպես երկու տարբեր սեկտորների միասնություն՝ պլանային և շուկայական համակարգերի: Առաջինին են վերաբերվում խոշոր կորպորացիաները, որոնք ունեն իշխանություն ոչ միայն գների, ծախքերի, տեխնոլոգիաների, այլ նաև հասարակության և պետության վրա: Իսկ երկրորդ համակարգին են վերաբերվում փոքր կազմակերպությունները, ընկերությունները, վերացող արհեստները, ծառայության ոլորտը և այլն:

Ի՞նչ հետևությունների կարելի է հանգել Արոնի և հատկապես Գեյլբրեյթի տեսություններից: Ենթադրվում է մի շարք մասնավոր բարեփոխումներ, որոնք դուրս կբերեն պետությունը «պլանային համակարգի» իշխանությունից և կուղղեն այն դեպի ոչ մոնոպոլիստական սեկտոր, որը կապահովի «շուկայական տնտեսության» մրցունակությունը և գնողունակությունը:

**Պոստինդուստրիալ հասարակության տեսություն:** Ավելի ճիշտ կլիներ առաջինը համարել ամերիկացի սոցիոլոգ Դանիել Բելլի առաջ քաշած պոստինդուստրիալ հասարակության հայեցակարգը, որում ուշադրություն է դարձվում հասարակության տնտեսական աճանձնահատկություններին ինդուստրացումից հետո:

Բելլի կարծիքով պոստինդուստրիալ հասարակությունը բնութագրվում է հինգ հատկություններով.

1. տնտեսության անցումը ապրանքների արտադրություններից դեպի ծառայությունների արտադրությունը,
2. զբաղվածների մեջ տեխնիկների և փորձառու մասնագետների գերակշռությունը,
3. տեսական գիտության գլխավորող դերը,
4. տեխնիկո-տնտեսական միջոցների կողմնորոշումը դեպի տեխնոլոգիայի վերահսկմանը,
5. նոր «բանական տեխնոլոգիայով» որոշումներ ընդունելու գործընթացի ապահովումը:

«Ինդուստրացման» ճգնաժամից դուրս գալը Բելլը վերագրում է ինչպես «պոստինդուստրացման փուլի» զարգացում, այնպես էլ մշակույթի և կրոնի բախման հաղթահարում:

Պոստինդուստրիալ հասարակության տեսության մտքերի մեկ այլ տարբերակ է հանդիսանում գերինդուստրացման (սուպերինդուստրացման) տեսությունը, որի հեղինակն է հանդիսանում ամերիկացի սոցիոլոգ Ալվին Տոֆֆլերը իր «Երրորդ ալիք» գրքով (1980թ): Հեղինակը փորձում է բացատրել բոլոր բարդ և տարաբնույթ ընդհատումները, որոնք ապրել է ժամանակակից հասարակությունը, ինդուստրալիզացիայի փլուզումը և «նոր քաղաքակրթության» վերածնունդը: Նման անցումները նա բացատրում է «ընդմիջման ալիքի» հաջորդական հերթափոխի տեսությամբ, որը ձևավորվել է պատմության զարգացման գործընթացում: Շուրջ 100 հազ. տարի առաջ սկսվեց «քաղաքակրթության ագրարային ալիքը», հետո XVII դարի վերջում Եվրոպայում բռնկվեց արտադրական հեղափոխությունը, որը հանգեցրեց երկրորդ խոշոր «մոլորակային ընդմիջման» ալիքին և ինդուստրիալ քաղաքակրթության հաստատմանը: Իսկ արդեն XX դարում սկիզբ առավ «երրորդ ալիքը»:

Սոցիալական հոգեբանության և հասարակության կենսակերպի շրջանականներում «երրորդ ալիք» նշանակում է արդյունաբերական անհատականության (որը կողմնորոշված է արտադրությունն ու սպառումը) անցումը դեպի նոր անհատականության (որը կողմնորոշված է հոգևոր և ստեղծագործական արժեքները):



## 2.7.2 Ընդհանուր քաղաքակրթության և քաղաքակրթության բախումների տեսությունները

«Սառը պատերազմի» ավարտից և Խորհրդային միության փլուզումից հետո աշխարհի երկրները ըստ քաղաքակրթության բաժանվեցին երեք ուղղությամբ՝ կոմունիստական (սոցալիստական), դրան հակառակվող արևմտյան (հակակոմունիստական) և ոչ միացյալ (չեզոք) երկրներ: Աշխարհի նման քաղաքական բաժանումը մեծամասամբ հանգեցնում է երկրների սոցիալ-տնտեսական բաժանման՝ սոցիալիստական տնտեսությամբ երկրների (այսպես կոչված կոմունիստական երկրներ), զարգացած շուկայական տնտեսություններով (այսպես կոչված կապիտալիստական երկրներ) և շուկայական տնտեսություններով զարգացող երկրների (այսպես կոչված երրորդ աշխարհի երկրներ): Ներկայումս այն վերածվել է զարգացած, զարգացող և անցումային տնտեսություններով երկրների:

Ինչպիսի՞ տեսք կունենա երկրների խմբավորումը ապագայում: Այս հարցին պատասխանելու համար ուսումնասիրենք ընդհանուր քաղաքակրթության և քաղաքակրթության բախումների տեսությունները:

***Ընդհանուր քաղաքակրթության տեսություն:*** Այս տեսության հիմքում ընկած է դեպի ընդհանուր քաղաքական, սոցիալական և տնտեսական հասարակարգի երկրների անընդհատ շարժի լիբերալ միտքը (լիբերալ դեմոկրատական): Այս տեսության կողմնակիցներից շատերի կարծիքով նման հասարակարգ Արևմուտքում արդեն կար, և եթե մնացած երկրներն էլ հասնեն այդ հասարակարգին, ապա աշխարհը կվերածվի մի ընդհանրության, և այդ պատճառով կլինի այսպես կոչված «պատմության վերջը»:

Այս տեսությունը ուշադրություն է դարձնում այն հզոր ուժերին, որոնք աշխարհի բոլոր երկրները ընդգրկում են մեկ ընդհանուր միության մեջ, ուժեղացնում է նրանց փոխկապակցվածությունը, ջնջում նրանց միջև եղած սահմանները: Դրանք տնտեսության ինտերնացիոնալացման ուժերն են, որոնք վերաճում են դրա գլոբալացմանը (նախ և առաջ տրանսազգայնացման և

ինտեգրացիայի ճանապարհով): Նման արդիականացման արդյունքում ժամանակակից ինդուստրիալ և պոստինդուստրիալ հասարակության գծերը, որոնք առաջինը ի հայտ եկան Արևմուտքում, դարձան էական աշխարհի ամբողջ երկրների համար:

Սիաժամանակ ընդհանուր քաղաքակրթության տեսության կողմնակիցները արդիականացումը նույնականացնում են վեստերնացմանը (այսինքն այլ երկրների կողմից արևմտյան մշակույթի կրկնօրինակումը): Սակայն, Ռուսաստանի Դաշնության և ճապոնիայի փորձը նախորդ դարում և Արևելյան երկրների ու Հարավ-Արևելյան Ասիայի փորձը XX դարում խուսում է այն մասին, որ արդիականացումը կարող է ընթանալ առանց վեստերնացման, և երկրները կարող են պահպանել իրենց պատկանելիությունը և ոչ թե արևմտյան քաղաքակրթությունը: Դա նախ և առաջ վերաբերում է մշակույթին, բայց և տնտեսությունում կարող է պահպանվել ինքնագոյությունը, ինչպես օրինակ ճապոնիայում: Թեև ընդհանուր քաղաքակրթության տեսությունը չի բացառում քաղաքական և տնտեսական կյանքում կրոնի և ազգայնականության կարևորությունը, որը հանդիսանում է երկրների միջև սոցիալ-մշակութային տարբերությունը, սակայն ենթադրում է, որ լիբերալիզմի հաստատման շրջանակներում դրանք կդադարեն հանդիսանալ արգելքներ:

***Քաղաքակրթության բախումների տեսություն:*** Ամերիկացի պրոֆեսոր Սեմուել Հանթինգտոնը պնդում է, որ «սառը պատերազմից» հետո քաղաքական ու մշակութային աշխարհը դառնում է ավելի բազմադաշտային և ընդգրկում է 8 գլխավոր քաղաքակրթություն՝ արևմտյան, իսլամական, հնդկական, չինական, ճապոնական, աֆրիկյան, լատինաամերիկյան և ուղղափառ: Համաձայն այս տեսության, վերջին ժամանակներս համաաշխարհային տնտեսությունում փոքրացվում էր Արևմուտքի դերը, նշանակություն էր տրվում ասիական քաղաքակրթությանը: Արդյունքում, Հանթինգտոնի կարծիքով, աշխարհը ոչ թե մեկ ընդհանուր քաղաքակրթություն է, այլ տարբեր քաղաքակրթություններից կազմված համակարգ, որոնք իրարից տարբերվում են, սակայն և ունեն ընդհանուր շատ բաներ:

Քաղաքակրթության բախումների տեսությունը նախ և առաջ գործ ունի նշակութային և քաղաքական տեսանկյունների հետ: Այդուհանդերձ, նրանից բխում են բավականին կարևոր տնտեսական հետևություններ: Այսպես, համաշխարհային տնտեսությունում ամընդհատ նվազում է արևմտյան երկրների գերակշռությունը՝ XX դարի կեսերին Արևմտյան Եվրոպային, Հյուսիսային Ամերիկային, Ավստրալիային բաժին էր ընկնում համաշխարհային ՀՆԱ-ի շուրջ 2/3-ը, իսկ XX դարի վերջում՝ 1/2-ը:

Կարևոր հետևությունը, որին հանգեցնում է քաղաքակրթության բախումների տեսությունը, բազմաշերտ աշխարհի հզորացումն է, ընդ որում ոչ միայն քաղաքական, այլ նաև տնտեսական:

Երկրորդ հետևությունը՝ երկրների միջև և ինտեգրացիոն միավորումների ներսում տնտեսական կապերի կայունությունն ու ամրությունը մեծամասամբ կախված է այն բանից, արդյո՞ք նրանք պատկանում են միևնույն, թե տարբեր քաղաքակրթության: Իսկ եթե տարբեր, ապա որքանով են միասնական այդ քաղաքակրթությունները (ըստ Հանթինգտոնի, օրինակ ուղղափառ քաղաքակրթությունը ավելի բարյացակամ է արևմտյանի, չինականի և հնդկականի հանդեպ, քան իսլամականի կամ ճապոնականի): Եվրոմիության շրջանակներում հաջող ինտեգրացիան հիմնականում հիմնվում է այն փաստի վրա, որ գրեթե բոլոր իր մասնակիցներն ունեն քաղաքակրթության միևնույն պատկանելիությունը:

**Կայսրության անկման տեսություն:** «Հզոր տերությունների վերաճումն ու անկումը» գրքում ամերիկացի Պոլ Քենեդին բացատրում է անցյալ հզոր տերությունների անկումները իրենց տնտեսական ճնշվածությամբ՝ կայսրությունները իրենց գոյության պահպանման համար ծախսում էին մեծ քանակությամբ գումար (հատկապես ռազմական ծախսերը), որը վերջին հաշվով ստացվում էր տնտեսությունից, և որը բերում է կայսրությանը տնտեսական անկման:

## **Ինքնաստուգման հարցեր**

1. Ի՞նչ է գնդդունակության պարիտետը և ինչո՞վ է տարբերվում փոխանակման դրույքաչափից:

2. Ինչպե՞ս են դասակարգվում երկրներն ըստ խմբերի և որոնք են չափորոշիչները:
3. Համաշխարհային տնտեսության զարգացման մասին ինչպիսի՞ հրապարակումներ գիտեք:


## Գլուխ III. Համաշխարհային տնտեսության պոտենցիալը

### 3.1 Համաշխարհային տնտեսության ֆինանսական ռեսուրսները

Կապիտալը, որպես տնտեսական ռեսուրս, բաժանվում է ռեալ և դրամական կապիտալի: Ռեալ կապիտալ ասելով հասկանում ենք արտադրության միջոցները, ապրանքային պաշարները և այլն: Դրամական կապիտալը կամ կապիտալը արտադրության տեսքով ներկայացնում է իրենից ֆինանսական ռեսուրսները, ֆինանսական ակտիվները և ֆինանսները, որոնք կուսումնասիրենք ստորև: Ֆինանսական ռեսուրսները պատկանում են մասնավոր անձանց, ազգային և միջազգային կազմակերպություններին և պետություններին: Նրանք, որպես կանոն, հավասարաբաշխված չեն երկրներում և այդ պատճառով էլ անընդհատ տեղաշարժվում են նրանց միջև: Այդ ֆինանսական ակտիվների շարժը ընդունում է միջազգային կապիտալի շարժի տեսք: Միևնույն ժամանակ ֆինանսական ռեսուրսների մի մասը զբաղված է վճարումների սպասարկումով, որոնք առաջանում են ապրանքների և ծառայությունների միջազգային առևտրի գիտելիքների փոխանցումից և աշխատուժի միջազգային միգրացիայից: Այս ֆինանսական ակտիվների շրջանառությունը ձեռք է բերում հաշվարկավճարային հարաբերությունների տեսք: Ֆինանսական ռեսուրսների այսպիսի բաժանումը երկու մասի (կապիտալի միջազգային շարժ և միջազգային հաշվարկավճարային հարաբերություններ) առհասարակ պայմանական է և կիրառվում է անալիտիկ նպատակներով: Պրակտիկայում այն ունի ազգային սահմաններով ֆինանսական հոսքերի տեսք:

***Համաշխարհային ֆինանսական ռեսուրսներ հասկացությունը և մեխանիզմները:*** Լայն իմաստով համաշխարհային ֆինանսական ռեսուրսները բոլոր երկրների ֆինանսական ռեսուրսների և միջազգային ֆինանսական կենտրոնների համագումարն է: Համաշխարհային ֆինանսական ռեսուրսները հիմնականում գտնվում են շարժման մեջ՝ մասնակիցների միջև վերաբաշխվելով միջազգային

տնտեսական հարաբերությունների: Նրանց մի մասը գտնվում է պահուստներում (արտարժութային և ոսկու պահուստներ), որոշ մասը տրվում է արտասահմանին շահավետ տարբերակով՝ օգնության տեսքով, բայց հիմնական զանգվածը գնվում և վաճառվում է համաշխարհային ֆինանսական շուկայում (կապիտալի համաշխարհային շուկա): Համաշխարհային ֆինանսական ռեսուրսների բաշխվածությունը ցույց է տրված նկ.1-ում:



Նկ.1 Համաշխարհային ֆինանսական ռեսուրսները:

Ֆինանսական ռեսուրսների հիմնական մասը կենտրոնացած է զարգացած երկրներում: Այդ երկրների մասնավոր անձիք, կազմակերպությունները և կառավարությունները տիրապետում են աշխարհի արտարժույթի և ոսկու պաշարների հիմնական մասին: Եվ

հենց իրենց ֆինանսական միջոցները շրջանառվում են համաշխարհային ֆինանսական շուկաներում և հանդիսանում ֆինանսական օգնության հիմնական աղբյուր:

Համաշխարհային ֆինանսական շուկան իրենից ներկայացնում է վարկա-ֆինանսական կազմակերպությունների հանրագումար, որոնք որպես միջնորդ վերաբաշխվում են ֆինանսական ակտիվների պարտատուների և վարկառուների, ինչպես նաև ֆինանսական միջոցների վաճառողների և գնորդների միջև: Համաշխարհային ֆինանսական շուկան կարելի է դիտարկել տարբեր տեսանկյուններից: Ֆունկցիոնալ տեսանկյունից այն կարելի է բաժանել այնպիսի շուկանների, ինչպիսիք են արտարժույթի, դերիվատիվների, ապահովագրական ծառայությունների, վարկերի, բաժնետոմսերի: Այս շուկաները իր հերթին բաժանվում են ավելի նեղ շուկաների: Այսպես օրինակ, վարկային շուկան բաժանվում է պարտառու արժեթղթերի և բանկային վարկերի շուկանների:

Ֆինանսական ակտիվների շրջանառության ժամկետների տեսանկյունից ֆինանսական շուկան կարելի է բաժանել երկու մասի՝ դրամական շուկայի (կարճաժամկետ) և կապիտալի շուկայի (երկարաժամկետ): Համաշխարհային ֆինանսական շուկայի բավականին շոշափելի մասի կարճաժամկետ բնույթը գցում է նրան ներհույսի և արտահույսի կախվածության մեջ: Գույություն ունեն ֆինանսական ակտիվներ, որոնք նպատակաուղղված են մի նպատակի՝ ստանալ հնարավորինս շատ եկամուտ, այդ թվում նաև նպատակադրված սպեկուլյատիվ գործարքների դրամական շուկաններում: Նմանատիպ ֆինանսական միջոցները անվանում են «տաք փողեր»: Ֆինանսական «բումի» ժամանակաշրջանում նրանք առավել ակտիվ հոսում են ֆինանսական կենտրոնների միջև, իսկ ֆինանսական ճգնաժամերի և նրանց նախաշեմին հրատապ վերադառնում են: Միջազգային ֆինանսական շուկայի սեզոնների միջև սահմանները «աղոտ» են և առանց որևէ բարդությունների հնարավոր է նրանց ահռելի մասերի վերադասավորում: Արդյունքում, օրինակ, ուժեղանում է փոխկապակցվածությունը տարբեր երկրներում արտարժույթի դրույքաչափի (որոշվում է նախ և առաջ արտարժույթի շուկայի իրավիճակով), բանկային տոկոսադրույթի

(որոշվում է արժեքավոր պարտատոմսերի շուկայի իրավիճակով), բաժնետոմսերի դրույքաչափի: Այս ամենը բերում է նրան, որ մի կողմից համաշխարհային ֆինանսական շուկան անկայուն է և այդ անկայունությունը գնալով աճում է, մյուս կողմից, երբ համաշխարհային ֆինանսական ռեսուրսների գլոբալացումը մեծանում է մի ֆինանսական շուկաներում՝ ցնցումները անրադառնում են այլ երկրների ֆինանսական շուկաների վրա: Կարճաժամկետ կապիտալի մեծածավալ արտահոսքը կարող է առաջացնել ֆինանսական ճգնաժամ:



### 3.2 Միջազգային ֆինանսական շուկաների մասնակիցները

Միջազգային ֆինանսական շուկաների մասնակիցներն են տրանսազգային բանկերը, կորպորացիաները, և այսպես կոչված, իստիտուցիոնալ ինվեստորները: Սակայն ոչ պակաս դեր են խաղում պետական մարմինները, միջազգային կազմակերպությունները, որոնք զբաղվում են վարկերի տրամադրումով: Միջազգային կապիտալի շուկայում գործում են նաև ֆիզիկական անձիք՝ հիմնականում անուղղակի, ինստիտուցիոնալ ինվեստորների միջոցով: Ինստիտուցիոնալ ինվեստորների թվին են դասվում այնպիսի ֆինասական ինստիտուտներ, ինչպիսիք են կենսաթոշակային հիմնադրամները, ապահովագրական ընկերությունները (իրենց բավականին մեծ ծավալի և ժամանակավորապես ազատ միջոցներով, որոնք բավականին ակտիվ են արժեքավոր թղթեր ձեռք բերման ժամանակ), ինչպես նաև ինվեստիցիոն հիմնադրամները, առավել ևս համատեղ հիմնադրամները: Ինստիտուցիոնալ ինվեստորների ակտիվների մեծության մասին ասում է այն փաստը, որ ԱՄՆ-ում այն բավական գերազանցում է ամբողջ ՅՆԱ-ի չափը, Եվրոխորհրդում մոտենում է ընդհանուր ՅՆԱ-ի թվին: Գերակշիռ մասը այդ ակտիվների ներդրած է արժեքավոր թղթերում, այդ թվում նաև արտասահմանյան ծագում ունեցող: Ամենակարևոր ինստիտուցիոնալ ինվեստոր հանդիսանում են համատեղ հիմնադրամները՝ կատարելով անդամավճարներ իրենց փայտերերից: Նմանատիպ հիմնադրամները ԱՄՆ-ում հասել են առավել մեծ չափերի, 1998 թվականին ակտիվների մոտավոր չափը կազմում 4 տրիլիոն \$:

**Համաշխարհային ֆինանսական կենտրոնները:** Ֆինանսական միջոցների առավել ակտիվ հոսունությունը կատարվում է ֆինանսական կենտրոններում: Նրանք կենտրոնացված են աշխարհի այն տեղերում, որտեղ տարբեր երկրների ռեզիդենտների ֆինանսական ակտիվների առևտուրը հասնում է առավել մեծ չափերի: Նախ և առաջ դրանք են Ամերիկայում՝ Նյու-Յորքը, Չիկագոն, Եվրոպայում՝ Լոնդոնը, Փարիզը, Ֆրանկֆուրտը, Լյուքսեմբուրգը, Ժնևը, Ասիայում՝ Տոկիոն, Սինգապուրը, Հոնկոնգը և այլն:

Որոշ օֆշորային կենտրոններ արդեն դառնում են համաշխարհային ֆինանսական կենտրոններ, ինչպիսիք են, օրինակ, Պանաման, Կարիբյան կղզիները և այլն:

Համաշխարհային ֆինանսական կենտրոններում կենտրոնացված է համաշխարհային ֆինանսական շուկանների հիմնական զանգվածը: Դա ոչ միայն տվյալ երկրի կապիտալն է, այլ նաև աշխարհի այլ ռեգիոններից այստեղ ներգրավված կապիտալը: Առավել այն բնորոշ է այն ֆինանսական կենտրոններին, որոնք գտնվում են փոքր պետություններում: Կորցնելով ազգային բնույթը այդ կապիտալը տվյալ կենտրոնները համարում է «իր տունը»:

**Համաշխարհային արտարժույթի շուկա:** Համաշխարհային առևտրի պրակտիկայում գոյություն ունի մի երկրից մի այլ երկիր միջոցների փոխանցման տարբեր ձև՝ բանկային փոխանցում, բանկային չեկ, փաստաթղթային ակրեդիտիվ, փոխացվող մուրհակ, միջազգային ֆակտորինգ և այլ ֆինանսական միջոցների կիրառում: Դեպքերի մեծամասնությունում դրանք կատարվում են արտարժույթի շուկայում արտարժույթի փոխանակմամբ: Եվ միևնույն ժամանակ կնքվում են գործարքներ՝ ապագայում արտարժույթի փոխանակմամբ (այն կատարվում է դերիվատիվների օգնությամբ, այսինքն այնպիսի ֆինանսական արտադրական գործիքներով, ինչպիսիք են ֆյուչերսները, օպցիոնները, սվոպը և այլն) հեղափոխման նպատակով, այսինքն ռիսկերի մաքսիմալ իջեցում փոխանակման դրույքաչափերի հնարավոր փոփոխությունից: Սակայն այս գործարքների մեծամասնությունը հետապնդում է այլ նպատակ՝ ուղղակի ստանալ մաքսիմալ շահույթ, այլ ոչ թե ապահովագրել հնարավոր կորուստներին: Նմանատիպ գործարքները կոչվում են սպեկուլյատիվ:

Ամբողջ աշխարհում արտարժույթային վճարումների, ինչպես նաև սպեկուլյատիվ գործարքների մեծածավալ կատարումը հանգեցրել է նրան, որ արտարժույթային շուկայի ծավալը բավականին մեծ է և օրեցօր մեծանում է: Այդ թիվը մոտենում է օրեկան 1.5 տրիլիոն \$: Հաշվի առնելով, որ 1989 թվականին այն կազմում էր ընդամենը 0.5 տրիլիոն \$, կարելի է պատկերացնել աճի տեմպերը:

Արտարժույթի և դերիվատիվների շուկանների գլխավոր դերակատարներն են կոմերցիոն բանկերը, որոնք գործում են ոչ միայն իրենց հաճախորդների հանձնարարությամբ, այլ նաև ինքնուրույն: Օրինակ, իրենց ակտիվների կառուցվածքի փոփոխության կամ սպեկուլյատիվ գործարքներից եկամուտ հետապնդելով: Կենտրոնական բանկերը նույնպես ցուցաբերում են մասնակցություն արտարժույթային շուկաններում՝ կատարելով արտարժույթային ինտերվենցիաներ (ներխուժումներ) ազգային արժույթային շուկաներում, այսինքն գնելով կամ վաճառելով արտարժույթ պետական ոսկու կամ արտարժույթի պահուստներից: Նմանատիպ ներխուժումները կատարվում է իրենց երկրների տնտեսական իրավիճակի վրա ազդման համար, բայց նախ և առաջ արտարժույթի փոխանակման դրույքաչափի կանոնակարգման համար, քանի որ երկրների մեծամասնությունում այն լողացող է (այսինքն որոշվում է շուկայի մասնակիցների ազգային և արտասահմանյան արտարժույթի առաջարկի և պահանջարկի հիման վրա): Եվ որպեսզի խուսափել կտրուկ տատանումներից Կենտրոնական բանկը ավելացնում կամ պակասեցնում է առաջարկը և պահանջարկը նմանատիպ ներխուժումներով:

**Դերիվատիվների շուկա:** Դերիվատիվներ են (ֆինանսական դերիվատիվներ) կոչվում այն ֆինասական գործիքները, որոնց հիմքում դրված են ավելի հասարակ ֆինանսական գործիքներ՝ բաժնետոմսեր, արժեթղթեր, արտարժույթ և այլն: Դերիվատիվների առավել տարածված տեսակ են հանդիսանում օպցիոնները (որոնք թույլ են տալիս տիրապետողին վաճառել կամ գնել որոշակի քանակի բաժնետոմսեր և պարտատոմսեր), սվոպները (համաձայնություն դրամական վճարումների փոխանակման որոշակի ժամանակաշրջանում), ֆյուչերսները (ապագայում առաքման պայմանագիր, այդ թվում արտարժույթի ֆիքսված պայմանագրային գնով):

Դերիվատիվների շուկան սերտ կապի մեջ է արտարժույթի շուկայի հետ, նախ և առաջ արտարժույթի կամ բաժնետոմսերի փոխանակմամբ: Ներկայումս ֆինանսական դերիվատիվների շուկան

զնահատվում է 50 տրիլիոն դոլար (եթե ներառենք նրանում շրջանառվող արժեթղթերը):

**Ապահովագրական ծառայությունների շուկա:** Այս շուկայի չափը զնահատվում է մոտ 2.5 տրիլիոն \$: Դա տարեկան վճարումների չափն է, այսպես կոչված պարզևատրումները: Համաշխարհային ապահովագրական ծառայությունների շուկայում գործում են տարբեր չափերի ընկերություններ, որոնցից յուրաքանչյուրը հանդիսանում են տրանսազգային: Տվյալ բնագավառում շատ կարևոր նշանակություն ունի համապատասխան տարածքներում և պետություններում տեղի ունեցող իրավիճակը (տնտեսական, քաղաքական), ինչպես նաև իրավական դաշտի առկայությունը, որը կարող է նպաստել կամ խանգարել ապահովագրական գործունեության իրականացմանը: Մեծ նշանակություն ունի նաև տարբեր տարածաշրջաններում ներկայացուցիչների առկայության հարցը, որը գործարարներին ներշնչում է վստահության և ապահովության մթնոլորտ:

**Բաժնետոմսերի համաշխարհային շուկա:** Բաժնետոմսերի (ակցիաների) շուկայի ծավալը աշխարհում կազմում է մոտավորապես 20 տրիլիոն \$: Այստեղ, ինչպես մնացած շուկաներում, գերազանցում են զարգացած երկրները:

Բաժնետոմսերի թողարկումը, որպես ֆինանսական շուկայում միջոցների մոբիլիզացման աղբյուր, բնորոշ չէ բոլոր զարգացած երկրներին: Այսպես, գերմանական, ֆրանսիական և իտալական ֆինանսական շուկաները սովորաբար գերադասում են այդ նպատակների համար օգտագործել բանկային վարկեր: Դրա համար էլ կապիտալիզացման մակարդակը (այսինքն բաժնետոմսերի շուկայական արժեքը ի համեմատ երկրի ՀՆԱ-ի) հաճախ խոսում է ոչ թե նրա հետամնացության կամ ոչ զարգացվածության մասին, այլ ֆինանսական շուկայում ընկերությունների մոտեցման ձևերի մոբիլիզացման մասին: Արժեթղթերի ժամանակակից շուկայում (այսինքն՝ ֆոնդային բորսաներում) վաճառվում են ոչ միայն բաժնետոմսեր և պարտառու արժեքավոր թղթեր, այլ նաև նոր տեսակի արժեթղթեր: Դրանք հիմնականում այնպիսի ֆինանսական դերիվատիվ են, ինչպիսիք են բաժնետոմսերի տիրապետման վկայականները, որոնք թողարկվում են նրա համար, որպեսզի հենց

բաժնետոմսերը չհանվեն սահմաններից դուրս և չսահմանափակվեն նրանց հետ կապած գործարքները:

**Համաշխարհային վարկային շուկա:** Ելնելով նրանից, որ տվյալ շուկան բավականին մեծ է, այն դիտարկվում է մաս-մաս՝ ուսումնասիրելով համաշխարհային պարտառու արժեթղթերի և բանկային վարկերի համաշխարհային շուկան:

**Համաշխարհային պարտառու արժեթղթերի շուկա:** Այս շուկայում նախ և առաջ շրջանառվում են արժեթղթեր, ինչպիսին են մուրհակները, արժեթղթերը, ինչպես մասնավոր, այնպես էլ պետական: Ինչ վերաբերվում է մասնավոր պարտառու արժեթղթերին, ապա այն չի գտնում լայն տարածում, սակայն ինչ վերաբերվում է պետականին, ապա նրա շուկան բավականին զարգացած է (առավել ևս պետական կարծաժամկետ պարտավորությունների): Պետական կարծաժամկետ պարտավորությունների համաշխարհային շուկայում մեծ դեր են գրավում ամերիկյանները, որպես ավելի հուսալի արժեթուղթ: Նրանց է բաժին ընկնում շուկայի մոտ կեսը՝ 18 տրիլիոն \$:

**Բանկային վարկերի համաշխարհային շուկա:** Այս շուկան մասնագիտանում է տարբեր ֆինանսական վարկերի ուղղությամբ: Վարկառու են հանդիսանում կազմակերպությունները, բանկերը, ինչպես նաև տարբեր երկրների կառավարությունները: Վարկատու են հանդես գալիս տարբեր ֆինանսա-վարկային կազմակերպություններ, մեծամասամբ բանկեր, ինչպես նաև տարբեր հիմնադրամներ: Նրանց ծավալները կազմում են մոտավոր 40 տրիլիոն \$: Բանկային վարկերի շուկայում հաճախ առանձնացնում են միջբանկային շուկան, որում տարբեր երկրների վարկային կազմակերպությունները տեղավորում են ժամանակավորապես ազատ միջոցները, հիմնականում կարծաժամկետ դեպոզիտների, ընթացիկ հաշիվների և վարկերի տեսքով:

### 3.3 Եվրոդոլարներ, եվրոդոլարների շուկայի գործիքները

Չամաշխարհային բանկային վարկերի շուկան մեծամասամբ (եթե ոչ ամբողջությամբ) հիմնվում է ֆինանսական ռեսուրսների վրա, որոնք եկել են մի երկրի բանկեր այլ երկրներից և սպասարկում են բացառապես միջազգային տնտեսական հարաբերությունները, և դրա համար էլ կորցրել են իրենց ազգային պատկանելիությունը: Այդ միջոցները հիմնականում եվրոյով և ԱՄՆ դոլարով են: Դրանք գտնվում են դեպոզիտներում, հիմնականում եվրոպայում, այդ պատճառով էլ կոչվում են եվրոդոլարներ, չնայած այս կոսմոպոլիտացված (ազգային պատկանելիությունը կորցրած) միջոցները շրջանառվում են ոչ միայն եվրոպայի ֆինանսական կենտրոններում: Եվրոդոլարների շուկան կարելի է գնահատել մոտ 10 տրիլիոն \$: Բանկային վարկերի այն սեգմենտը, որում գործածում են եվրոդոլարները կոչվում է եվրոշուկա (եվրոդոլարների շուկա): Այս շուկայում ակտիվ վարկատուներին կոչում են եվրոբանկեր, վերցվող վարկերը՝ եվրովարկեր, թողարկվող արժեթղթերը՝ եվրոարժեթղթեր: Եվրոդոլարների շուկայի առաջացման և արագ զարգացման պատճառներն են.

1. ֆինանսական միջոցների տեղերը իրենց երկրների քաղաքական, սոցիալական և տնտեսական անկայուն վիճակից, ինչպես նաև նրանց անօրինական առաջացման, բարձր ազգային հարկման տոկոսից խուսափելու համար նախընտրում են պահել իրենց միջոցները արտասահմանում՝ ավելի կայուն արտարժույթով:
2. Խոշոր ֆինանսական ռեսուրսների կենտրոնացումը կայուն թղթադրամով միջազգային ֆինանսական կենտրոններում ստեղծում է հնարավորություն շտապ և առանց վտանգի փոխանցել դրանք աշխարհի ցանկացած կետ:

Եվրոդոլարների շուկայի հիմնական գործիքներից է համարվում եվրոարժեթղթերը, որոնք թողարկվում են միջազգային բանկերի կոնսորցիումի (միության) կողմից արտասահմանյան վարկառուների խնդրանքով: Դրա համար վարկառուները դիմում են որևէ եվրոբանկ, որը դառնում է կոնսորցիումի առաջատարը (գլխավոր ղեկավարը):

Այդ բանկը ուսումնասիրում է վարկառուի ֆինանսական վիճակը և հետագա զարգացման միտումները, այնուհետև էմիտենտի հետ քննարկում է էմիսիայի թողարկման պայմանները՝ գումարը, ժամկետը, տոկոսը, էմիսիայի գինը (արժեթղթերի թողարկման և տեղայնացման ծախսերը): Այնուհետև բանկը հավաքագրում է կոնսորցիումի մասնակիցներին կախված նրանց էմիսիայի տեղայնացման ունակությունից: Կոնսորցիումը հարկավոր է հենց ինքնին բանկերին, քանի որ էմիտենտի սնանկության վտանգը բաժանվում է բոլոր մասնակիցների միջև, որովհետև կոնսորցիումը ինքն է սկզբում ձեռք բերում թողարկվող արժեթղթերի մեծ մասը:

Եվրոարժեթղթերը լինում են ֆիքսված տոկոսադրույքով (արժեթղթերի կուպոններից տոկոսներ) և լողացող: Տոկոսադրույքը հիմնականում ուղղորդված է LIBOR + հավելվածար (spread), (London Interbank Borrowed Rate- Լոնդոնյան միջբանկային տոկոսադրույք, որը ղեկավարվում է բանկային վարկերի հիմնական կենտրոններում):

Եվրոարժեթղթերի շրջանառության արժեքը մոտենում է 3 տրիլիոն \$, որի միջին ժամկետայնությունը չի գերազանցում 5 տարին:

Եվրոշուկայում մյուս կարևոր ֆինանսական գործիքն են հանդիսանում եվրովարկերը: Մեծամասամբ այն սինդիկատացված վարկերն են, այսինքն վարկառուն վերցնում է այն այդ վարկի համար ստեղծված բանկերի սինդիկատից, որին գլխավորում է նույնպես առաջատար բանկը, որը և որոշում է վարկի պայմանները վարկառուի մասնակցությամբ: Սինդիկատի մասնակիցները որոշում են թե ով որ վարկը կան վարկի որ մասը կներկայացնի:

Ի տարբերություն եվրոարժեթղթերի եվրովարկերը տրվում են միայն լողացող բանկային տոկոսադրույքով, որի չափը սովորաբար վերանայվում է ամեն կես տարին մեկ և ուղղորդվում են ոչ միայն LIBOR, այլ նաև FIBOR կամ ամերիկայն prime rate (առաջնային տոկոսադրույք) կամ աշխարհի այլ ֆինանսական կենտրոնների տոկոսադրույքներով: Եթե եվրոարժեթղթերը թողարկվում են 5-10 տարի ժամկետով մաքսիմալը, այսինքն հանդիսանում են երկարաժամկետ արժեթղթեր, ապա եվրովարկերը միջին տևողության են, քանի որ տրվում են մեծամասամբ 10 ամսից մինչև մի քանի տարի ժամկետով: Բացի այդ, ծավալով նրանք գերազանցում են

Եվրոարժեթղթերին և նրանց ներկայացումը կատարվում է բավականին արագ: Թողարկվում է նաև եվրոնուրիակներ (Եվրոնոտաներ), որոնք իրենցից ներկայացնում են կարճաժամկետ արժեթղթեր և տեղայնացվում են տրանսազգային կոորպորացիաներում՝ միևնույն ժամանակ տարբեր երկրների: Նրանց ծավալը հասնում է մոտ 1 տրիլիոն դոլարի:

*Օֆշորային կենտրոնների հասկացությունը:* Առավել հարմար է ծավալել տնտեսական գործունեություն օֆշորային կենտրոններից, այսինքն այն տարածքներից, որտեղ գործում են հարկային, արտարժութային և այլ արտոնություններ այն ոչ ռեզիդենտների համար, որոնք տեղակայել են իրենց հաշիվները և զուտ կազմակերպությունները (գրանցում և գործունեություն տվյալ գոտու հովանու ներքո) այդ տարածքներում, բայց կատարում են տնտեսական գործունեություն բացառապես այլ պետությունների հետ: Դրանք մեծամասամբ կղզային պետություններ են, որոնցից մի քանիսը արդեն դարձել են ռեզիդենտ ֆինանսական կենտրոններ (օրինակ՝ Կիպրոսը), երկրները, որոնք տեղակայված են համաշխարհային ֆինանսական կենտրոնների հարևանությամբ (օրինակ՝ Իռլանդիա, Նորմանյան կղզիներ և առավել ևս Կարիբյան ծովի ավազանում գտնվող կղզիներ) և ֆինանսական շուկայի խոշոր մասնակիցների որոշակի տարածքները (օրինակ՝ Շվեյցարիայի կանտոնները և ԱՄՆ-ի առանձին նահանգները տրամադրում են արտոնություններ այն կազմակերպություններին, որոնք կատարում են տնտեսական գործունեություն բացառապես այլ երկրներում):

Ստտավոր գնահատականներով օֆշորային կենտրոններում տեղակայված են մոտ 5 տրիլիոն ֆինանսական միջոցներ, որից մոտ 100 մլրդ-ն ունի ԱՊՀ երկրների ծագում: Գնահատականների ավելի հստակությունն անհնարին է, քանի որ օֆշորային կենտրոնները ներգրավում են արտասահմանյան ինվեստորներին ոչ միայն հարկային և արտարժութային արտոնություններով, այլ նաև կոնֆիդենցիալ ռեժիմով: Օֆշորային կենտրոնները կարելի է համարել եվրոդոլարների շուկայի կարևոր կառուցվածքի մաս, չնայած, որ նրանք զբաղվում են ոչ միայն եվրոդոլարներով:



### 3.4 Ֆոնդային բորսաներ

Բաժնետոմսերի և պետական պարտատոմսերի թողարկումը, տնտեսության մեջ ներդրման և պետական ծրագրերի ֆինանսավորման նպատակով ֆինանսական միջոցների օգտագործումը հանգեցնում են արժեթղթերի ինտենսիվ կերպով ընդլայնվող շուկայի ստեղծմանը և առաջ են բերում պետության կողմից դրա կարգավորման անհրաժեշտությունը: Որպես արդյունք հիմնվում է մի հատուկ հաստատություն՝ ֆոնդային բորսա, որի հիմնական գործառույթները ներառում են աճուրդի կազմակերպում, արժեթղթերի շրջանառության վերահսկում և կարգավորում:

Այլ ձևակերպմամբ՝ Ֆոնդային բորսան բարձրորակ ֆինանսական գործիքներով (արժեթղթերով) առևտրի կազմակերպված շուկա է, որտեղ գործառքները կատարում են արժեթղթերի շուկայի պրոֆեսիոնալ մասնակիցները<sup>8</sup>:

Աշխարհի ոչ բոլոր երկրներում կան ֆոնդային բորսաներ: Մի շարք երկրներում արժեթղթերի առևտրի հիմնական մասը կատարվում է այդպիսի բորսաններից դուրս, օրինակ էլեկտրոնային առևտրային համակարգի միջոցով, ինչպիսինն է NASDAQ:

Ֆոնդային բորսան մեծ նշանակություն ունի կարճաժամկետ ներդրում փնտրող կապիտալի փոխարկման համար: Ֆոնդային բորսայի միջոցով կարելի է առանց պետության միջամտության հավաքել ֆինանսական միջոցներ և դրանք ուղղել տնտեսության շահութաբեր ոլորտներ: Եթե շուկայական տնտեսության պայմաններում հրաժարվելու լինենք բորսաների ծառայություններից, ապա ընկերություններն ստիպված կլինեն սահմանափակվել իրենց սեփական պաշարներով ու խնայողություններով:

Ֆոնդային բորսայում առևտուրը կազմակերպվում է բորսայական առևտրի կանոններով: Բորսայի գործառույթներից է աճուրդի նյութատեխնիկական ապահովումը:

---

<sup>8</sup> «Թողարկողներ, բաժնետերեր և ներդրողներ» Է. Սանդոյան, Ն. Յակոբյան, Լ. Վրթանեսյան, Ա. Մարկոսյան, Երևան 2002, էջ 12

Բորսայի առավել կարևոր գործառույթն է աճուրդի ընթացքում արժեթղթի իրական շուկայական գնի որոշումը: Բորսան որոշում է ընթացիկ պահանջարկի և ընթացիկ առաջարկի միջև գոյություն ունեցող հարաբերակցությունը, որի հիման վրա ձևավորվում է շուկայական գինը: Որպես շուկայական գներ հանդես եկող բորսային գների հիման վրա կատարվում է գների ամենօրյա կանխատեսում:

Ֆոնդային բորսան երաշխավորում է կնքված գործարքների կատարումը: Այս նպատակով կիրառվում է անկանխիկ հաշվարկների համակարգը, աճուրդների մասնակիցների փոխադարձ պահանջների և պարտավորությունների հաշվանցումը, ինչպես նաև կազմակերպվում է դրանց կատարումը:

Հայտնի է, որ բորսան կատարում է նաև տեղեկատվական գործառույթ: Բորսայի առևտրի արդյունքները բաց են լայն հասարակայնության համար, այսինքն՝ բորսան զանգվածային լրատվության միջոցներին տեղեկություններ է տալիս բորսային գների, գործարքների ծավալի և քանակի, բորսայում առևտուր վարող ընկերությունների, շուկայում տիրող իրավիճակի մասին: Այսինքն ֆոնդային բորսան արժեթղթերի շուկայի ոչ միայն առևտրական այլ նաև հետազոտական և տեղեկատվական կենտրոն է, որը նյութեր է հրապարակում արժեթղթերի շուկայում տեղի ունեցող գործընթացների վերաբերյալ՝ դրանց դինամիկայում:

Ակտիվ ընթանում է պահպանման գործընթացը, երբ արժեթղթերը թողարկվում են ապագա եկամուտների և գույքային իրավունքների հիման վրա, այդ թվում բարձր եկամտաբերության և ռիսկայնության ընկերություններում: Առավել նկատելի մասնակից են դառնում իստիտուցիոնալ ինվեստորները: Աշխարհում կա շուրջ 150 ֆոնդային բորսա, որոնցից առավել խոշորներն են Նյու-Յորքի, Չիկագոյի, Տոկիոյի, Օսակայի, Ֆրանկֆուրտի, Փարիզի, Լոնդոնի բորսաները:

### 3.5 Միջազգային ֆինանսների գլոբալացումը: Այդ երևույթի դրական և բացասական հետևանքները

Աշխարհում ամենագլոբալացվող տնտեսական ռեսուրսը ֆինանսական ռեսուրսն է: Այդ մասին են վկայում համաշխարհային ֆինանսական շուկայի որոշ սեզոնային տեղումները՝ վիթխարի շրջանառությունները, նախ և առաջ արտարժույթի և դերիվատիվների շուկայում, ինչպես նաև բաժնետոմսերի և վարկային շուկայում ոչ ռեզիդենտների անընդհատ աճող քանակությունը: Ֆինանսական ռեսուրսների գլոբալացման բարձր մակարդակը բացատրվում է նախ և առաջ նրանով, որ այն հանդիսանում է տնտեսական ռեսուրսների ավելի շարժուն ձև (ավելի ճիշտ այնպիսի տնտեսական ռեսուրսների շարժուն ձև, ինչպիսինն է կապիտալը): Այսինքն, գլոբալիզացիան համաշխարհային տնտեսությունը ապրանքների, ծառայությունների, աշխատուժի և կապիտալի մեկ ընդհանուր շուկայի վերածման գործընթացն է:

Ֆինանսական ռեսուրսների գլոբալացումը ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական հետևանքներ: Առաջինին կարելի է վերագրել աշխարհում ֆինանսական ռեսուրսների կարիքների մեղմացումը, որի արդյունքում արդի պայմաններում, հատկապես զարգացած և որոշ զարգացող երկրներում կապիտալը չի հանդիսանում դիֆիցիտային ռեսուրս: Գլոբալիզացիան նաև ազգային ֆինանսական շուկաներում ուժեղացնում է մրցակցությունը, և այդ կերպ նվազեցնում է ֆինանսավարկային միջնորդության (ֆինանսական ծառայությունների) ինքնարժեքը: Այլ խոսքով՝ ֆինանսները արդի ժամանակաշրջանում շատ արագ և կախված՝ ֆինանսական ռեսուրսների սեփականատերերի ցանկությունից կարող են փոխանցվել աշխարհի ցանկացած կետ (պետություն, օֆշորային գոտի, ֆինասական կենտրոն՝ կախված նրանց գործունեության էֆեկտիվությունից): Տվյալ ֆինանսական ռեսուրսների սեփականատերերը (ինչպիսինն են խոշորագույն բանկերը, ինստիտուցիոնալ ընկերությունները և այլն) կատարում են երևույթի և ծրագրերի տնտեսապես արդյունավետ գործունեության խորին ուսումնասիրություն, ինչը ենթադրում է եկամտի ստացում: Տվյալ ռեսուրսների հոսունությունը նպաստում է տեղափոխված գոտում ֆինանսական ռեսուրսի հազեցվածությանը, ինչը իր հերթին

տնտեսագիտության հիմնական օրենքից ելնելով (առաջարկի և պահանջարկի օրենքի գործունեությունից) բերում է ֆինանսական շուկայում տվյալ ֆինանսական ռեսուրսի համար պահանջվող տոկոսադրույքի իջեցմանը: Սա հանդիսանում է միջազգային ֆինանսների գլոբալացման դրական հետևանք:

Ֆինանսական ռեսուրսների հոսունությունից բացասական հետևանքները ավելի շատ են, քան դրականը՝

1. Ազգային կամ ռեգիոնալ շուկաների անկայունության ուժեղացում: Դա բացատրվում է հիմնականում 2 հիմնական պատճառներով: Նախ, մի երկրում առաջացած ֆինանսական ճգնաժամը (կրիզիսը) անրադառնում կամ ազդում է մյուս ռեգիոնների վրա, այսպես ասած «վարակում» է: Եվ երկրորդ, «տաք փողերի» առկայությունը ազգային շուկաներում:
2. Ինչպես գիտենք, տնտեսության վրա դրական է անրադառնում իրական կապիտալի և ֆինանսական կապիտալի հավասարակշռված գործունեությունը, որի արդյունքում իրական կապիտալը ստեղծում է արդյունք և անրադառնում է ՀՆԱ-ի վրա: Ֆինանսական միջոցների հոսքի պարագայում ֆինանսական կապիտալը անկախանում է, գործում ինքնուրույն (առանձնանալով իրական կապիտալից) և գերիշխում :
3. Գլոբալացման հետևանքով ազգային ֆինանսական դաշտը ունենում է ավելի մեծ կախվածություն ոչ ռեգիոնալ կազմակերպություններից, անհատներից և ձեռներեցներից: Եվ պետությունները չեն կարողանում ունենալ անկախ ազգային քաղաքականությամբ գործունեություն:
4. Ֆինանսական ռեսուրսների գլոբալացումը բերում է ազգային կառավարությունների ազդեցության թուլացմանը, միևնույն ժամանակ տրանսազգային կորպորացիաների և միջազգային ինստիտուցիոնալ ինվեստորների, ինչպես նաև միջազգային ֆինանսական դաշտի «սպեկուլյանտների» դերի և ազդեցության մեծացմանը: Ինչպես գիտենք, գրեթե բոլոր զարգացող և անցումային տնտեսություններում համաշխարհային բանկը և Միջազգային արտարժույթային

հիմնադրամը ունեն ավելի մեծ ազդեցություն, քան ազգային կառավարությունները:

*Տրանսազգային կորպորացիաների դերը ֆինանսական ռեսուրսների շարժում:* Տրանսազգային կորպորացիաները (ՏՆԿ) վերածվել են միջազգային ֆինանսական շուկայի ավելի ակտիվ մասնակիցների: Այսպես, լինելով աշխարհում ապրանքների և ծառայությունների գլխավոր արտահանողներ և ներմուծողներ, ՏՆԿ-ները (նրանց բաժին է ընկնում միջազգային առևտրի 1/3 մասը) դարձել են միջազգային արտարժույթի և դերիվատիվների շուկայի խոշոր հաճախորդներ: Չնայած առևտրային բանկերը ծավալում են իրենց գործունեությունը իրենց հետաքրքրությունների սահմաններում, սակայն արտարժույթային գործարքների մեծ մասը կատարվում է իր հաճախորդների, նախ և առաջ ՏՆԿ-ների, հանձնարարականով:

ՏՆԿ-ները ավելի մեծ ազդեցություն ունեն միջազգային վարկային և բաժնետոմսերի միջազգային շուկայում: Նրանք ոչ միայն ակտիվորեն օգտագործում են եվրոդոլարները որպես փոխառու, այլ նաև մեծացնում են դրանց պահուստները, ինքնին լինելով եվրոդոլարների դեպոզիտների «սեփականատեր»: Ինչ վերաբերում է բաժնետոմսերի միջազգային շուկային, ապա ըստ էության ֆոնդային բորսաներում գերակայող ընկերությունները ՏՆԿ-ներն են: Արտասահմանյան ֆոնդային բորսաներում վաճառելով իր բաժնետոմսերը, թողարկելով իր եվրոարժեթերը եվրոշուկաներում և գնալով դեպի եվրոկրեդիտները, ՏՆԿ-ները այդ ֆինանսական աղբյուրների հաշվին ֆինանսավորում են իրենց կապիտալ ներդրումների զգալի մասը:

Տրանսազգային կորպորացիաները իրենց կապիտալ ներդրումները իրականացնում են մեծ մասամբ երկարաժամկետ նպատակներով: Չնայած նրանք ոչ հաճախ են արագ փոխանցում մեծածավալ ֆինանսական ռեսուրսները աշխարհի մի ծայրից մյուս ծայրը, ինչը կարող է հանգեցնել տարբեր ռեզիդենտներում ֆինանսական շուկայի անհավասարակշռության: Պետք չէ մոռանալ, որ ՏՆԿ-ի հիմքը հենց ուղղակի ներդրումներն են՝ ներդրված երկարաժամկետ նպատակներով: Այդ պատճառով ՏՆԿ-ի գործունեությունը կարելի է գնահատել որպես մեծամասամբ կապիտալի միջազգային շուկայի հավասարակշռեցման ունակ: Նրանք խոշոր ընկերություններ են, որոնց պետք է կայուն տնտեսական ոլորտ, այդ թվում ֆինանսական:

### 3.6 Ոսկու և արտարժույթի պահուստներ

Ֆիզիկական անձինք, ընկերությունները, կազմակերպությունները և պետությունները իրենց ֆինանսական ռեսուրսների որոշ մասը վերածում են պահուստների, այսինքն ակտիվների, որոնք կուտակվում են հետագա հնարավոր ծախսերի համար: Համաշխարհային տնտեսության ուսումնասիրման ժամանակ նախ և առաջ ուշադրություն են դարձնում այն պահուստներին, որոնք բաղկացած են մեծամասամբ արտարժույթից և ոսկուց, և առավել ևս այն մասին, որը պատկանում է պետությանը: Նրանց անվանում են ոսկու և արտարժույթի պահուստներ, որոնք պահվում են Կենտրոնական բանկում և երկրի այլ ֆինանսական մարմիններում, ինչպես նաև Միջազգային արտարժույթային հիմնադրամում՝ որպես պետության կողմից կատարվող մասնավճար:

Օֆիցիալ ոսկու և արտարժույթի պահուստները (ՈԱՊ) նախատեսված են երկրի ֆինանսական պարտավորությունների վճարունակության ապահովման համար, նախ և առաջ վճարահաշվարկային հարաբերությունների ուլորտում: ՈԱՊ-ի մյուս կարևոր խնդիրը երկրում նակրոտնտեսական իրավիճակի վրա ազդեցությունն է, ինչի համար էլ պետությունը գնում և վաճառում է արտարժույթ: Նմանատիպ գործարքները կոչվում են արտարժույթային ինտերվենցիաներ (ներխուժում) և նախատեսված են ազգային և արտասահմանյան արտարժույթի շուկայական առաջարկի և պահանջարկի փոփոխման համար և այդ հիմքով փոխանակման դրույթաչափի պահպանման կամ փոփոխման համար:

Գոյություն ունի ընդհանուր ընդունված օֆիցիալ ՈԱՊ-ի միհիմալ քանակ: Այն կազմում է եռամսյակի ընթացքում ապրանքների և ծառայությունների ներմուծված ծավալը: Համաշխարհային ՈԱՊ-ի ծավալը կազմում է 1.7 տրիլիոն դոլար: Նրա մոտ կեսը կենտրոնացված է զարգացած երկրներում, նախ և առաջ ԱՄՆ-ում (ավելի քան 70 մլրդ \$), ճապոնիաում (ավելի քան 225 մլրդ \$), Գերմանիաում (մոտ 80 մլրդ \$), Բրազիլիաում (50 մլրդ \$), Մեքսիկաում (25 մլրդ \$) և աշխարհի ամենախոշոր ՈԱՊ-ներից մեկը

կենտրոնացված է Չինաստանում՝ իրեն պատկանող 140 մլրդ դոլարին ավելացան Հոնկոնգի ՈԱՊ-ի 80 մլրդ դոլարը:

Մտավորապես 30 հազար տոննա մաքուր ոսկին կազմում է ՈԱՊ-ի այնպիսի մաս, ինչպիսին է մոնետար ոսկին, այսինքն ոսկին պետական պահուստներում: Այս օֆիցիալ ոսկու պաշարները վերջին տասնամյակում նվազում է, քանի որ ոսկին միջազգային վճարահաշվարկային համակարգերից դուրս է մղվում, սակայն այն մնում է որպես բարձր լիկվիդայնության ապրանք (այն հեշտությամբ կարելի է վերածել ցանկացած արտարժույթի):

Եթե դարասկզբին ոսկու արտարժույթի պահուստները բաղկացած են եղել մեծամասամբ ոսկուց, ապա ներկայումս այն ունի ավելի փոքր մաս: Ամենամեծ ոսկու պաշար ունեին ԱՄՆ-ն (1961 թվականին եղել է 15 հազ. տ, այժմ՝ 8 հազ. տ), Գերմանիայի, Ֆրանսիայի, Շվեյցարիայի ոսկու պաշարները կազմում է 2.5-3.5 հազ. տ, Չինաստանում և Ճապոնիայում՝ մի քանի հարյուր հազ. տ: 1913 թվ.-ին Ռուսաստանում այն կազմում էր 38 հազ. տ, 1953թվ.-ին՝ 2050 տ, 1985թվ.-ին՝ 719 տ, 1990թվ.-ին՝ մոտ 300 տ:

ՈԱՊ-ի ավելի քիչ մաս բաղկացած է միջազգային արտարժույթից՝ հատուկ փոխառության իրավունքից և այսպես կոչված Միջազգային արտարժութային հիմնադրամում ռեզերվային դիրքից: Հատուկ փոխառության իրավունքները (SDR-special drawing rights) էմիտավորված են եղել Միջազգային արտարժութային հիմնադրամի կողմից՝ որպես մասնակից երկրների համար հատուկ միջազգային արտարժույթ պետությունների միջև հաշվարկներում: Սակայն SDR-ը չկարողացավ դուրս մղել դոլարը և այլ կարևորագույն արտարժույթները միջազգային վճարահաշվարկային համակարգից և օֆիցիալ պահուստներից: Այդ պատճառով էլ 70-80-ական թթ.-ին թողարկվել է 21.4 մլրդ SDR, որը համապատասխանում է մոտ 30 մլրդ ԱՄՆ դոլարին, այնուհետև թողարկումը դադարեցվեց: Բոլորովին այլ նպատակներ է հետապնդում Միջազգային արտարժութային հիմնադրամը՝ իրավունք ստանալ վարկ առաջին իսկ պահանջից ի հաշիվ հիմնադրամում երկրի փայաբաժնի, որի ընդհանուր թիվը կազմում է մոտավորապես 70 մլրդ դոլար:

Այսպիսով, աշխարհի ՈԱՊ-ի 3/4-ը բաղկացած է արտասահմանյան տարբեր արտարժույթից: Նրանց որոշ մասը պահպանվում է անշարժ, որոշ մասն էլ ներդրված է բարձր լիկվիդայնություն ունեցող արտասահմանյան արժեթղթերում կամ բանկերում, որը բերում է հավելյալ եկամուտ այս ՈԱՊ-ի տերերին: Ֆինանսական ռեսուրսների անբավարար քանակի դեպքում, այդ թվում նաև վճարային հաշվեկշռի բացասական արդյունքների դեպքում (այսինքն երկիրը ավելի շատ ծախսում է, քան եկամուտ ստանում), պետությունը գերադասում է ոչ թե ծախսել ՈԱՊ-ն, այլ պարտքով վերցնել արտասահմանյան վարկային կապիտալ (փոխառություններ, վարկեր, գրանտներ և այլն): Նմանատիպ փոխառությունները կապիտալի մեծ մասն են կազմում: Նրանք կատարվում են կոմերցիոն կամ արտոնյալ պայմաններով: Վերջինիս դեպքում խոսում ենք ֆինանսական օգնության մասին (արտաքին օգնություն), որին հիմնականում դիմում են զարգացող կամ անցումային տնտեսություններով երկրները:



### 3.7 Ֆինանսական օգնություն

Երկրներին ֆինանսական օգնություն<sup>9</sup> տրամադրում են ինչպես արտասահմանյան երկրները (մեծամասամբ զարգացածները), այնպես էլ միջազգային կազմակերպությունները (մեծամասամբ Միջազգային արտարժութային հիմնադրամը, Համաշխարհային բանկը և Վերակառուցման և Ջարգացման միջազգային բանկը): Օգնությունը, որը իրականացվում է ծառայությունների տեսքով, կոչվում է տեխնիկական, իսկ օգնությունները, ինչպիսին են մթերքը, դեղորայքը և այլ առաջին անհրաժեշտության իրեր, կոչվում են մարդասիրական: Նմանատիպ օգնություններից սովորաբար տարբերակում են զինվորական օգնությունը (օրինակ զինամթերքի առաքման տեսքով):

Որպեսզի տարբերել ֆինանսական օգնությունը կոմերցիոն փոխառությունից և վարկերից, օգտագործում են «գրանտ-էլեմենտ» հասկացությունը: Գրանտ-էլեմենտը հանդիսանում է մի ցուցանիշ, որը որոշում է տարբեր փոխառությունների արտոնությունների մակարդակը: Այն որոշում է, թե վճարումների որ մասը չի ստանա վարկատուն վարկի տրամադրման հետևանքով ավելի շահավետ պայմաններում, քան կոմերցիոնները: Այս դեպքում պայմանականորեն ընդունվում է, որ կոմերցիոն վարկի ներկայացման դեպքում վարկատուն ստանում է տրված գումարից 10%-ի չափով եկամուտ: Գրանտ-էլեմենտը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$E_{\text{գր}} = \left(1 - \sum_{i=1}^t \frac{B_i}{A(1+a)^t}\right) 100,$$

որտեղ  $E_{\text{գր}}$ -ը Գրանտ էլեմենտն է,

$B_i$ -ին՝ փաստացի վճարումներն են ի հաշիվ վարկի մարման  $i$ -րդ տարում,

$A$ -ն՝ տրված վարկի (փոխառության) ծավալն է,

---

<sup>9</sup> “Мировая экономика”, А.С. Булатов, Москва 2004г., стр.212

ա-ն՝ կոմերցիոն բանկերի տոկոսադրույքն է (սովորաբար ընդունված է 10%),

է-ն՝ տրման ժամկետը:

Ֆինանսական օգնություն են համարվում այն փոխատվությունները և վարկերը, որոնց գրանտ-էմիտետը կազմում է ոչ պակաս 25%-ը: Փոխատվությունները, որոնք չեն վերադարձվում կոչվում են գրանտներ: 1997թվականին ֆինանսական օգնության չափը կազմում էր 57 մլրդ դոլար: Այդ թվում վարկերը և գրանտները (միջպետական) կազմում են մոտ 40 մլրդ դոլար, մնացածը միջազգային կազմակերպությունների օգնություններն են (մասնավորապես Միջազգային արտարժութային հիմնադրամի և Վերակառուցման և Ջարգացման համաշխարհային բանկի):

Քիչ զարգացած պետությունների համար ֆինանսական օգնությունը հանդիսանում է ֆինանսական ռեսուրսների գլխավոր աղբյուրներից մեկը: Այսպես, Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի, Ալբանիայի համար 90-ական թթ.-ի կեսերին այն կազմել է իրենց ՀՆԱ-ի 4-10%-ը:

Ֆինանսական օգնությունների տրամադրումը սովորաբար (սակայն ոչ միշտ) պայմանավորված է տարբեր պայմանների կատարման հետ: Այսպես, պետությունները, որոնք ստանում են ֆինանսական օգնություն Միջազգային արտարժութային հիմնադրամի և Վերակառուցման և Ջարգացման համաշխարհային բանկի կողմից պետք է համաձայնեցնեն իրենց տնտեսական քաղաքականությունը այդ կազմակերպությունների որոշումների հետ:

### 3.8 Վաշինգտոնյան կոնսենսուս

Ինչպես նշվեց նախկինում, միջազգային կազմակերպությունները, որպես կանոն, տրամադրում են ֆինանսական օգնություն վարկառու երկրներին որոշակի տնտեսական պայմանների պահպանման դեպքում: Այսպես, Միջազգային արտարժույթային հիմնադրամի և Վերակառուցման և Ջարգացման միջազգային բանկի պայմանների հիմքում դրված է միտք, որ ինչքան մեծ է պետության լիբերալիզացումը (ազատականացումը) զարգացող և հետխորհրդային երկրներում, այնքան լավ է ընթանում իրենց գործերը: Այսպես կոչված Վաշինգտոնյան կոնսենսուսը (որը անվանվել է այդ երկու կազմակերպությունների տեղագտման վայրով), որպես նշված երկրների համար նորմալ տնտեսական քաղաքականության գլխավոր բաղադրիչ մաս, ներառում է շուկաների ու զների լիբերալիզացում, մակրոտնտեսական ստաբիլիզացում (նախ և առաջ ցածր, ավելի քիչ քան 40%, սղաճ), պետական ծախսերի կրճատում (առվել ևս տնտեսության պետական վարկավորման և սուբսիդավորման վերացում), բաց տնտեսության մասնավորեցում (նախ և առաջ արտարժույթի ազատ փոխանակում և առևտրային արգելքների իջեցում ապրանքների ներմուծման և հումքի արտահանման համար), ցանկացած կոշտ միջոցներով նպաստում պետական բյուջեի դեֆիցիտի կրճատմանը, ինչպես նաև առևտրային և վճարային հաշվեկշիռների դեֆիցիտների կրճատմանը: Նմանատիպ քաղաքականությունը խթանում է շուկայական փոփոխություններին և նպաստում է Միջազգային արտարժույթային հիմնադրամի և Վերակառուցման և Ջարգացման միջազգային բանկի վարկերի վերադարձմանը, սակայն փոքրանում է տնտեսության պետական պաշտպանության դերը, բացում է ներքին շուկան արտասահմանյան կապիտալի և ապրանքների համար, ինչը ցավագին է ընդունվում տեղական գործարարների կողմից, սոցիալական ծախսերի իջեցման դեպքում (որպես բյուջեի դեֆիցիտի ծածկման եղանակ) բերում է բնակչության լայն զանգվածի դժգոհություն:

Վաշինգտոնյան կոնսեսուսի կողմից առաջ քաշվող պահանջների խումբը զնալով փոփոխվում է և ընդլայնվում՝ դարձնելով այն հետվաշինգտոնյան, որում նախ և առաջ ելակետային խնդիր է հանդիսանում ազգային ֆինանսական շուկաների ակտիվությունը, ակտիվ խթանում մրցակցությանը, պայքար մենաշնորհների դեմ (ինչը համարվում է ավելի կարևոր երևույթ, քան սեփականաշնորհումը), ձեռնարկությունների և ընկերությունների «թափանցելիությունը», գիտակից սահմաններում պայքար սղաճի դեմ, տնտեսական աճին աջակցում և պետական ինստիտուտների գործունեության արդյունավետության բարձրացում:

Նախքան ֆինանսական օգնության տրամադրումը Միջազգային արտարժույթային հիմնադրամը պահանջում է ներկայացնել երկրի ֆինանսա-տնտեսական իրավիճակի և տնտեսական քաղաքականության մասին լայնածավալ տեղեկություն: Այնուհետև երկրի ղեկավարությունը համաձայնեցնում է հուշագիրը նրա տնտեսական քաղաքականության հետ: Դրա հիման վրա միջազգային կազմակերպությունները հատկացնում են վարկեր, որոնց ստացման համար նախապես համաձայնեցված են լինում այլ վերադիր պայմաններ: Եվ, որպեսզի պետությունները չչեղվեն հուշագրերից և պայմանավորված ընթացակարգերից, վարկի տրամադրումը կատարվում է փուլ առ փուլ (տրանշներով):

### 3.9 Արտաքին պարտք

Ներկայումս աշխարհի գրեթե բոլոր երկրները մասնակցում են միջազգային փոխատվական հարաբերություններին՝ հանդիսանալով որպես վարկառու կամ վարկատու (կամ երկու դերում էլ միաժամանակ): Փոխատվական կապիտալի միջազգային շուկայում մի երկրի կառավարությունը միջոցներ է տրամադրում մեկ այլ պետության, բանկերին և մասնավոր ընկերություններին: Ֆինանսական օգնության և առավել ևս արտերկրից կոմերցիոն պայմաններով ստացված վարկերի համար պետք է վճարել, և որի չկատարման և այլ պայմանների դեպքում գոյանում է պետությունների արտաքին պարտքը (արտաքին պարտավորությունները): Ըստ Չամաշխարհային բանկի կողմից ընդունված բնութագրի, արտաքին պարտքը ընդգրկում է երկրի կառավարության և կենտրոնական բանկի ստանձնած անմիջական վարկային պարտավորությունները, ինչպես նաև կառավարության և կենտրոնական բանկի երաշխիքներն ու պետության մասնավոր հատվածի ստանձնած երկարաժամկետ վարկային պարտավորությունները:

Արտաքին պարտքի այն մասը, որը պետք է մարվի պետության կողմից (քանի որ իրենք են վերցրել պարտքը արտասահմանյան երկրներից կամ երաշխավորել են տեղական բանկերի, կազմակերպությունների կամ տեղական ինքնակառավարման մարմինների վճարումները) կոչվում է պետական (օֆիցիալ) արտաքին պարտք: Այսպիսով, կարող ենք ասել, որ երկրի արտաքին պետական պարտքի առաջացումը պայմանավորված է արտաքին վարկերի ներգրավմամբ, ինչպես նաև արտարժույթային պարտատոմսերի ու այլ արտարժույթային պարտավորությունների ձեռքբերմամբ:

Չարգացող և հետսոցիալիստական երկրներում այն կազմում է ավելի մեծ մաս, քան մասնավոր արտաքին պարտքը (այսինքն՝ տեղական բանկերի, կազմակերպությունների կամ տեղական ինքնակառավարման մարմինների պարտքը, որոնք երաշխավորված չեն պետության կողմից):

Արտաքին պարտքի մեծության չափը, այսինքն բեռը, ազգային տնտեսությունների համար որոշվում է տարբեր ցուցանիշներով, ինչպես օրինակ, արտաքին պարտքի հարաբերությունը պարտապան երկրի ՅՆԱ-ին կամ ապրանքների ու ծառայությունների արտահանման ծավալին, արտաքին պարտքի սպասարկման գումարի հարաբերությունը ապրանքների ու ծառայությունների արտահանման ծավալին: Առաջին ցուցանիշը առավել մեծ է թույլ զարգացած երկրներում, չնայած որ իրենց մոտ արտաքին պարտքի հարաբերությունը ՅՆԱ-ին ավելի ուռճեցված է, քանի որ տվյալ դեպքում ՅՆԱ-ն վերցվում է ոչ թե ԳՈՒՊ-ով, այլ փոխանակման դրույքաչափով, որը որպես կանոն, շատ իջեցված է: Այսուհանդերձ, բազմաթիվ թույլ զարգացած երկրներում արտաքին պարտքի չափը գերազանցում է ՅՆԱ-ի ծավալը մի քանի անգամ: Նման իրավիճակ է դիտվում նաև արտաքին պարտքի ծավալի և ապրանքների ու ծառայությունների արտահանման ծավալի հարաբերության ժամանակ: Քիչ զարգացած երկրների մեծամասնությունը տեսականորեն պետք է իրենց էքսպորտից եկամուտները տարիների ընթացքում ուղղեն իրենց պարտքի մարմանը: Սակայն ամենակարևոր ցուցանիշ է համարվում երկրորդը: Տվյալ ցուցանիշը ներկայացնում է, թե երկիրը իր էքսպորտային մուտքերի որ մասն է ուղղում արտաքին պարտքի սպասարկմանը:

Աճընդհատ աճող արտաքին պարտքի «լուծը» կարող է բերել նրան, որ երկիրը կընկնի, այսպես կոչված, պարտքային անդունդի մեջ, երբ նոր արտաքին փոխառությունները օգտագործվում են նախկինում ստացված վարկերի տոկոսների մարման համար: Նման իրավիճակ ձևավորվել է զարգացող երկրների մեծամասնության մոտ, երբ ՅՆԱ-ի և էքսպորտային մուտքերը ուղղվում է ոչ թե սեփական երկրի զարգացմանը, այլ արտաքին պարտքի սպասարկմանը (եթե առհասարակ դրանք բավարարում են):

Եվ, այսպիսով, որպեսզի արտաքին պարտքը չդառնա սուր տնտեսական խնդիր, ապա պետք է նրա վրա սահմանել ակտիվ հսկողություն: Դրա տակ հասկացվում է միջոցառումների շարք, որով կփոքրացվի կամ կդադարեցվի պարտքային ճգնաժամը: Այդ թվում են՝

1. Տնտեսական մեթոդները՝ արտաքին փոխառությունների մեծության փոքրացում, կուտակվող պարտքի կառուցվածքի փոփոխություն, օգտագործվող ֆինանսական ռեսուրսների արդյունավետության բարձրացում, պետական բյուջեի ունակությունների բարձարցում արտաքին պարտքի սպասարկման հարցում:

2. Քաղաքական՝ արտաքին պարտատուների հետ լավ հարաբերությունների պահպանում, ինչպես նաև երկրում կայուն քաղաքական իրավիճակի պահպանում:

3. Սոցիալական՝ սոցիալական կայունության պահպանում:

4. Ազգային անվտանգության պահպանում՝ նախ և առաջ արտաքին և ներքին քաղաքականության անկախության ապահովումը արտաքին պարտատուներից:

***Արտաքին պարտքի կառավարումը*<sup>10</sup>**: Արտաքին փոխառությունների ներգրավումը կարող է նպաստել երկրի տնտեսական աճին միայն այն դեպքում, երբ արտաքին ռեսուրսների ներգրավմանը զուգահեռ ստեղծվի արտաքին պարտքի կառավարման համակարգ: Արտաքին պարտքի կառավարման համակարգի ստեղծումը նախ և առաջ անհրաժեշտ է ազատ տնտեսական քաղաքականություն իրականացնելու համար, քանի որ արդյունավետ և վատնողական արտաքին փոխառությունների օգտագործումը կստեղծեն երկրի համար երկարատև պարտավորություններ, որն էլ կսահմանափակի նրա տնտեսական քաղաքականության իրականացման ազատականացումը: Երկրի արտաքին պետական պարտքի կառավարման քաղաքականության նպատակ կարող է հանդիսանալ արտաքին ֆինանսավորումից օգուտ ստանալն ու միաժամանակ մակրոտնտեսական ռիսկները նվազեցնելու և վճարային հաշվեկշռում տեղի ունեցող ապագա խնդիրներից խուսափելը:

Ցանկանցած երկրի արտաքին պետական պարտքի կառավարման հիմնական նպատակը դրա օպտիմալացումն է, այսինքն՝

---

<sup>10</sup> “ ԳՅ արտաքին պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները”, Ջազյան Ռուզան, 2004թ., 115 էջ

- արտաքին պետական պարտքի օպտիմալ կազմի ու կառուցվածքի սահմանումը,
- երկրի համար ավելի պարենպաստ պայմաններով արտաքին պետական պարտքի վերակառուցումը,
- ռիսկի առավել արդյունավետ կառավարումը:

Երկրի արտաքին պետական պարտքի արդյունավետ կառավարումը կարող է ներառել՝

1. երկրի համար ֆինանսավորման հարմար ձևի ընտրությունը,
2. փոխառությունների չափերի, ծավալների ճիշտ որոշում ընդունելը,
3. երկրի առկա արտաքին պետական պարտքը լրիվ և ժամանակին հաշվառելը, իրատեսորեն վերլուծելը և արդյունավետ վերահսկելը, այսինքն՝ դրանց օգնությամբ արտաքին պետական պարտքի վերաբերյալ լրիվ և ժամանակին տեղեկատվության ապահովելը:

Ներկայումս միայն չորս միջազգային կազմակերպություններն են, որոնք հաշվարկում են՝ տարբեր երկրների արտաքին փոխառությունների ներգրավման արդյունքում առաջացած, արտաքին պարտքի գնահատման ցուցանիշները: Այդ միջազգային կազմակերպություններն են՝

1. Համաշխարհային բանկը (World Bank),
2. Միջազգային Հաշվարկների Բանկը (Bank of International Settlements),
3. Միջազգային Արժույթի Հիմնադրամը (International Monetary Fund),
4. Տնտեսական Ջարգացման և Համագործակցության Կազմակերպությունը (Organization for Economic Cooperation and Development):

Վերոհիշյալ կազմակերպություններն ունեն հաշվետվության և հաշվառման տարբեր ստանդարտներ, որը պայմանավորված է նրանց տարբեր նպատակներով և գործառույթներով: Ներկայացվող վիճակագրական տվյալների տարբերությունից խուսափելու համար այդ կազմակերպությունները ստեղծել են արտաքին պարտքի



վիճակագրության միջազգային աշխատանքային խումբ, որի գործունեության արդյունքները կիրառում են ինչպես պարտքային վիճակագրական ազգային, այնպես էլ շահագրգիռ միջազգային կազմակերպությունները:

Արտաքին պարտքի վիճակագրական միջազգային աշխատանքային խումբը առաջարկում է արտաքին պարտքի հետևյալ սահմանումը: Արտաքին համախառն պարտքը ժամանակի ցանկացած պահին նշված երկրի կողմից ոչ ռեզիդենտների նկատմամբ տեղաբաշխված (օգտագործված) և չվճարված պայմանագրային պարտավորություններն է, այսինքն՝ հիմնական գումարների և տոկոսների վճարումը:

Արտաքին պետական պարտքը բնութագրելիս կիրառվում են մի շարք հասկացություններ: Դրանցից մի քանիսը օգտագործվում են ժամանակի որոշակի պահին տրամադրված վարկերի արդյունքում ձևավորված պարտավորությունների, գումարների բնութագրման համար, այսինքն՝ արտաքին պարտքի բնութագրման նպատակով: Իսկ մյուս խումբը վերաբերում է հոսքերին, այսինքն՝ ժամանակի որոշակի պահին իրականացված գործառնություններին:

Այսպես, օրինակ՝ արտաքին պարտքը բնութագրող հասկացություններն են՝

- չմարված տեղաբաշխված պարտքը (Disbursed debt outstanding),
- չբաշխված, չտրամադրված մնացորդները (Undisbursed balance),
- հիմնական գումարի և տոկոսների ժամկետանց վճարները (Arrears of principal and of interest):

*Չմարված տեղաբաշխված պարտքը* վարկի չմարված մնացորդն է: Այն ներառում է փոխառուին փաստացի տրամադրված կուտակված գումարները՝ հանած վճարումները, չեղյալ հայտարարված և վերաձևակերպված գումարները:

*Չբաշխված մնացորդը* վարկի այն մասն է, որը դեռևս փաստացիորեն չի ստացվել փոխառուի կողմից, բայց պետք է ստացվի վարկատուի կողմից:

*Հիմնական գումարի և տոկոսների ժամկետանց վճարները* պարտքի սպասարկման վճարների կուտակված գումարներն են,

որոնց վճարման ժամկետներն արդեն անցել են, սակայն դրանք դեռևս չեն վճարվել:

**Արտաքին պարտքի վերաձևակերպումը<sup>11</sup>:** Երբ Կենտրոնական բանկը չի կարողանում ձեռք բերել արտարժույթի այն քանակությունը, որն անհրաժեշտ է պարտքի սպասարկման վճարներն ապահովելու համար, ապա երկիրը պետք է ձգտի հնարավորինս մեղմացնել պարտավորությունների մարման պայմանները: Եվ որպեսզի երկիրը խուսափի բազմաթիվ երկկողմանի պայմանավորվածություններից, ստեղծվել է պարտքի վերաձևակերպման բազմակողմ մեխանիզմ: Դա հիմք հանդիսացավ նոր Փարիզյան ակումբ անվանված կազմակերպության ստեղծմանը: Փարիզյան ակումբը վարկատու երկրների հատուկ կազմակերպություն է, որը զբաղվում է պետական երաշխիք ունեցող միջպետական փոխառությունների և արտահանման վարկերի վերաձևակերպման դիմումների վերանայմամբ: Ներկայումս պաշտոնական վարկատուների առջև ունեցած պարտավորությունները վերաձևակերպվում են միայն Փարիզյան ակումբի միջոցով, արտասահմանյան առևտրային բանկերում պարտավորությունները քննարկվում են Բանկային խորհրդատվական կոմիտեի կողմից:

Եվ Փարիզյան ակումբը և Բանկային խորհրդատվական կոմիտեները երկրի արտաքին պարտքի վերաձևակերպման բանակցությունների վարման համար առաջնակարգ պայման են դնում, որ Միջազգային արժութային հիմնադրամի վարկային միջոցները պետք է օգտագործվեն վարկային հաշվեկշռի կայունացման ծրագրերի վերափոխման նպատակով: Բազմակողմանի պարտքի վերաձևակերպման սկզբնական մոտեցման իմաստը պարտապան երկրի վիճակը թեթևացնելն է, որը կարող է ունենալ արտաքին պարտքի սպասարկման վճարների իրականացման ժամանակավոր դժվարություններ: Տարիները ցույց տվեցին, որ շատ երկրներում մեծ չափերի արտաքին պարտքը բավականին լուրջ հիմնախնդիր էր դարձել, որը հնարավոր չէ լուծել անընդհատ դրա վճարման ժամկետը հետաձգելով: 1988 թվականին Փարիզյան

---

<sup>11</sup> «Շուկայական տնտեսության հիմունքները» Ա.Մարկոսյան, Ռ. Սաֆարյան, 2002, էջ 448

ակունքն առաջարկեց պարտքի վերաձևակերպման մի քանի տեսակներ, որոնք հիմնականում վերաբերվում էին ցածր եկամուտ ունեցող երկրներին: Վերաձևակերպման գումարը և նոր պարտքի սպասարկման պայմանները կախված են վարկառու երկրի տնտեսական իրավիճակից:

Յուրանքաչյուր երկրի պարտքի վերանայումից առաջ Փարիզյան ակունքի մասնակից հանդիսացող վարկատու երկրները, «պարտքի վերացման ժամկետ են սահմանում»: Դա նշանակում է, որ այդ ժամկետից հետո ստորագրված բոլոր վարկային համաձայնագրերը Փարիզյան ակունքի կողմից վերաձևակերպման չեն ենթարկվում: Չնայած հին պարտքի վճարումների իրականացումը տարբեր համաձայնագրերով կարող է տեղափոխվել տարեցտարի, «վերացման ժամկետը» անփոփոխ է մնում:

1988 թվականին առաջին անգամ կիրառվել է «Տորոնտոյի պայմանները», որի էությունը առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրների վերաձևակերպման զանազան տարբերակների առաջարկումն է:

1990 թվականից Փարիզյան ակունքը գործածեց նոր պայմաններ, որոնք կիրառվեցին միջին եկամտից ցածր եկամտի մակարդակ ունեցող երկրների պարտքի վերաձևակերպման ընթացքում: Այդ պայմանները անվանեցին «հյուստոնյան պայմաններ», քանի որ դրանց հաստատման համաձայնագիրը հաստատվեց Յուստոնում: Համաձայն այս պայմանների, զարգացման նպատակով տրամադրված վարկերը երկարաձգվում են ևս 20 տարով, ներառյալ 10 տարվա արտոնյալ ժամանակաշրջանը, սկզբնական մակարդակը չզերազանցող տոկոսադրույքներով:

Ամենամեծ պարտապանն է Մեքսիկան, որի արտաքին պարտքը կազմում է 157.4 մլրդ \$: Ջարգացող երկրների շարքում արտաքին պարտքի մեծությամբ երկրորդ տեղը գրավում է Բրազիլիան (120 մլրդ. դոլար): Երրորդ տեղը Լատինական Ամերիկայի երկրների շարքում գրավում է Արգենտինան (45 մլրդ. դոլար): Վերջին ժամանակներում շատ արագ տեմպերով աճում է ասիական երկրների, մասնավորապես՝ Թաիլանդի, Ինդոնեզիայի, Հնդկաստանի, Ֆիլիպինների և Հարավային Կորեայի արտաքին պարտքը:

Ինչ վերաբերվում է արտաքին պարտքին՝ այն չպետք է երկու անգամ գերազանցի երկրի արտահանման արժեքի ծավալը: Սակայն զարգացող երկրները դեռևս բավականաչափ հեռու են այդ ցուցանիշից:

*Ֆինանսական ճգնաժամեր:* Համաշխարհային տնտեսության ռեգիոնալիզացումը և գլոբալացումը բերում է նրան, որ ֆինանսական ճգնաժամերը առանձին երկրներում հաճախ դառնում են ռեգիոնալ և գլոբալ: 1994-1995թթ. ֆինանսական ճգնաժամ ծագեց Լատինական Ամերիկայում, 1997թ.ից սկսած Թաիլանդում, որոնք անրադարձան Արևելյան և Հարավ-Արևելյան Ասիային, այնուհետև տեղափոխվեց Ռուսաստանի Դաշնություն և այլ երկրներ:

Ֆինանսական ճգնաժամերը լինում են տարբեր տեսակի՝

- արտարժույթային- բերում է ազգային արտարժույթի սղաճին,
- բանկային- պահանջում է պետական ֆինանսական կարելցանք «անհուսալի» բանկերին,
- պարտքային- կապված է արտաքին կամ ներքին պարտքի խնդրի ստացմամբ,
- համակարգային- ենթադրում է երկրի ամբողջ ֆինանսական համակարգի խափանում, որը իր մեջ է ներառում նախկինում թվարկված բոլոր տեսակները:

Ֆինանսական ճգնաժամերի պատճառները բազմազան են, նախ և առաջ մակրոտնտեսական քաղաքականության անիրազեկությունը, թույլ ազգային ֆինանսական համակարգը, արտաքին անբարենպաստ պայմանները (օրինակ ազգային արտահանման ապրանքների գների միջազգային անկում), փոխանակման դրույքաչափը (սակայն ոչ միշտ), քաղաքական անկայունությունը: Իսկ նախկին տնտեսական տենպերին հասնելու համար պահանջվում է 1.5-6 տարի:

## **Ինքնաստուգման հարցեր**

1. Ի՞նչ եք հասկանում համաշխարհային ֆինանսական ռեսուրս ասելով:

2. Որո՞նք են միջազգային ֆինանսների գլոբալացման դրական և բացասական հետևանքները:
3. Ի՞նչ է գրանտ էլեմենտը:
4. Ո՞րն Վաշինգտոնյան կոնսեսուսի էությունը:

## Գլուխ IV. Վճարային հաշվեկշիռը և արտարժույթի փոխանակման դրույքները

### 4.1 Վճարային հաշվեկշիռ

Երկրները հաշվարկում են իրենց համախառն ներքին արդյունքը, որը նրանց օգնում է գաղափար կազմել իրենց ներքին արտադրության ծավալների մասին: Միաժամանակ, նրանք հաշվարկում են իրենց միջազգային վճարումների ծավալները, որպեսզի պատկերացում կազմեն այլ երկրների հետ իրենց գործարքների մակարդակի մասին: *Վճարային հաշվեկշիռը* հաշվառում է տվյալ երկրի բարիքների, ծառայությունների և ֆինանսական ունեցվածքի առևտուրը աշխարհի մյուս երկրների հետ: Այն ինֆորմացիա է տալիս երկրների արտահանման, ներմուծման, երկրում արտասահմանցիների սեփականության, ներքին ակտիվներից նրանց եկամուտների, կապիտալի միջազգային հոսքերի, պետությունների և կենտրոնական բանկերի կողմից պաշտոնական գործարքների մասին:

Այն բավականին տպավորիչ փաստաթուղթ է և օգտակար տնտեսագետների համար: Ձարգացած երկրներում վճարային հաշվեկշռի տվյալները հրապարակվում են եռամսյակը մեկ: Սահմանվում են մասնավոր (անհատներ, գործատուներ, կազմակերպություններ) և պաշտոնական (կառավարության) գործարքներ<sup>12</sup>: Երկրների միջև գործարքները բաժանվում են 2 խմբի՝ ընթացիկ գործարքներ (հաշիվներ) և գործարքներ կապիտալի հետ: Այս երկու խումբն էլ ներկայացվում են վճարային հաշվեկշռում որպես ընթացիկ հաշվեկշիռ և կապիտալի շարժի հաշվեկշիռ: Գործարքները, որոնք արտացոլվում են ընթացիկ գործարքների հաշվեկշռում (կամ ընթացիկ հաշվում) բարիքների, ապրանքների և ծառայությունների առք ու վաճառքն է, ինչպես նաև միակողմանի տրանսֆերտները: Իսկ կապիտալի շարժի հաշվեկշռում արտացոլվում է ակտիվների առք ու վաճառքը: Միակողմանի տրանսֆերտները վճարումներն են, որոնք

<sup>12</sup> “Экономика” С. Фишер, Р. Дорнбуш, Р. Шмалензи, Москва 2001г., стр. 678

կատարվել են մի երկրից մյուսն ի պատասխան չստանալով ոճ ապրանքներ, ոչ էլ ծառայություններ:

Դիտարկենք, թե իրենից ինչ է ներկայացնում ընթացիկ գործարքների հաշվեկշիռը: Այն հաշվարկում է երկրի մաքուր եկամուտները կամ մաքուր ծախսերը, որոնք առաջանում են միջազգային գործարքների և տրանսֆերտների ընթացքում: Այսինքն՝ ընթացիկ գործարքների հաշվեկշիռը ներառում է՝

$$\begin{array}{l} \text{Ընթացիկ} \\ \text{գործարքների} \\ \text{հաշվեկշիռը} \end{array} = \begin{array}{l} \text{էքսպորտից} \\ \text{եկամուտներ} \end{array} - \begin{array}{l} \text{մաքուր տրանսֆերտներ} \\ \text{արտասահման} \end{array} - \begin{array}{l} \text{իմպորտից} \\ \text{ծախսեր} \end{array}$$

Մենք ասում ենք ընթացիկ հաշվեկշիռը փակվում է ավելցուկով, երբ վաճառելով ապրանքներ և ծառայություններ արտասահմանցիներին, արդյունքում մենք ստացանք ավելի շատ, քան տվեցինք նրանց՝ գնելով նրանցից ապրանքներ և ծառայություններ, կամ տրանսֆերտների տեսքով: Եվ հակառակը, ընթացիկ հաշվեկշիռը փակվում է պակասուրդով, երբ կամ մաքուր ծախսեր արտասահմանյան ապրանքների և ծառայությունների կամ տրանսֆերտների գծով:

Բոլոր գործարքները, որոնք ապահովում են արտարժույթի մուտք, օրինակ ապրանքների և ծառայությունների արտահանում, գրանցվում են «+» նշանով: Այն գործարքները, որոնք բերում են արտասահմանցիներին վճարման, այսինքն ապրանքների ու ծառայությունների ներմուծում և տրանսֆերտներ արտասահման, գրանցվում են «-» նշանով: Ցորենի արտահանումը հանդիսանում է ապրանքային էքսպորտ, բեռների փոխադրման և արտահանման ծառայությունների արտահանումը՝ ծառայությունների էքսպորտ, նավթի ներմուծումը՝ ապրանքային իմպորտ, սահմանից դուրս զբոսաշրջությունը՝ ծառայությունների իմպորտ:

Այժմ դիտարկենք, թե ինչ է տեղի ունենում, երբ վճարային հաշվեկշռում ընթացիկ գործարքները անհավասարակշռված են: Այստեղ կարելի է անցկացնել զուգահեռներ անձի հետ: Դիցուք, մի քանի ամիսների ընթացքում դուք ապրանքների ու ծառայությունների վրա (սնունդ, կրթություն, հագուստ) ծախսում եք ավելի շատ քան ստանում ենք եկամուտ՝ աշխատելով գրադարանում և

տրանսֆերտներից (տվյալ դեպքում ֆինանսական փոխանցումներ ձեր ծնողներից): Վճարային հաշվեկշռի տեսանկյունից զգում եք պակասորդ ընթացիկ գործարքներով:

Ինչպե՞ս կվճարեք ձեր ծախսերի գերազանցումը եկամուտներին: Պարզ է, որ դուք պետք է վերցնեք պարտք կամ վաճառեք ակտիվները: Հնարավոր է, որ դուք ձեր բանկային հաշվից փող կհանեք, կվաճառեք ձեր մեքենան, կվերցնեք վարկ բանկից կամ պարտք բարեկամներից: Այդ բոլորը ձեր ընթացիկ վճարային հաշվեկշռի դեֆիցիտի ֆինանսավորման եղանակներն են: Բայց եթե ձեր մոտ ահռելի մեծ պակասորդ է և դուք չեք կարող երկար ժամանակ ֆինանսավորել այն, վաղ թե ուշ դուք ստիպված եք վերանայել, վերափոխել ձեր եկամուտները (շատ վաստակելով) կամ ձեր ծախսերը (քիչ ծախսելով), որպեսզի կանխեք դեֆիցիտի պատճառները:

Վճարային հաշվեկշռի դեֆիցիտը ընթացիկ գործարքներով (հաշիվներով) երկրի համար կլինի նույնպես, ինչպես անձի համար:

Եվ այսպես, երկիրը, որն ունի վճարային հաշվեկշռի դեֆիցիտ ընթացիկ հաշիվներում, ծախսում է արտասահմանյան ապրանքների և ծառայությունների վրա, ինչպես նաև տրանսֆերտներն արտերկիր ավելի շատ, քան իր եկամուտներն ապրանքների ու ծառայությունների արտահանման վաճառքից: Եվ նույն կերպ ինչպես անձը, երկիրը պետք է ֆինանսավորի ընթացիկ վճարային հաշվեկշռի պակասորդը: Եվ դա կատարում է վաճառելով ակտիվները արտասահմանցիներին կամ վերցնելով նրանցից պարտք:

Սակայն ֆինանսավորումը ունի իր սահմանները: Երբ պահանջարկ ունեցող ակտիվները սպառվում են և ոչ ոք էլ չի ուզում տալ վարկ, ապա անհնարին է շարունակել ունենալ պակասորդ, քանի որ էլ հնարավորություն չկա այն փակելու: Այսպիսով պետությունը, ինչպես և անձը, նույնպես պետք է կանոնակարգի իր վճարային հաշվեկշռը՝ կամ ավելացնելի մուտքերը արտասահմանյան աղբյուրներից, կամ կրճատի ծախսերը:

Ընթացիկ վճարային հաշվեկշռի դրական սալդոն դեֆիցիտի հակառակ գործընթացն է: Այս դեպքում երկիրը ստանում է արտերկրից ավելի շատ, քան ծախսում է այնտեղ: Նշանակում է



կուտակում է արտերկրի ակտիվները և վարկավորում է արտասահմանցիներին որպես կողմ, որը ապահովում է դրական սալդոն: Սակայն հիմնական տարբերությունը կայանում է նրանում, որ երկիրը, որը ունի դրական հաշվեկշիռ ընթացիկ գործարքներով կարիք չունի կանոնակարգել իր ծախսերը, սակայն ակտիվ սալդոն կփոքրանա, եթե երկրները, որոնք ունեն պակասորդ, սկսեն կանոնակարգել իրենց վճարային հաշվեկշիռները ընթացիկ գործարքներով, որպեսզի կրճատեն իրենց պակասորդները (նի երկրի ավելցուկը հանդիսանում է մեկ այլ երկրի դեֆիցիտ):

Կախված նրանից, թե երկիրն ունի ընթացիկ վճարային հաշվեկշռի դրական թե բացասական սալդո, արտերկրի ակտիվների ընդհանուր արժեքը, որը գտնվում է նրանց ձեռքում, կփոփոխվի:

Այժմ դիտարկենք մաքուր արտասահմանյան ակտիվների մոտեցումները, որը կապում է ընթացիկ վճարային հաշվեկշռը և կապիտալի շարժի հաշվեկշիռը: Եթե երկիրը ունի վճարային հաշվեկշռի ընթացիկ գործարքներում պակասորդ, ապա այն պետք է ինչ որ կերպ ֆինանսավորվի: Ֆինանսավորումը կարող է ունենալ մի քանի տեսք՝ երկրի ռեզիդենտները կարող են վերցնել վարկեր արտասահմանյան բանկերից, վաճառեն արտասահմանցիներին ակտիվներ, որոնցով նրանք տիրապետում են արտերկրում կամ վաճառեն ոչ ռեզիդենտներին իրենց հայրենական երկրում ունեցվածքը: Բոլոր գործարքները բերում են արտասահմանյան ակտիվների կրճատմանը երկրում:

Մաքուր արտասահմանյան ակտիվները արտասահմանյան ակտիվների, որով տիրապետում են հայրենական ռեզիդենտները, գերազանցումն է մեր ակտիվներին, որով տիրապետում են արտասահմանցիները (ոչ ռեզիդենտները): Ակտիվները ենթադրում են ամեն ինչ՝ սկսած բաժնետոմսերով, արժեթղթերով, բանկային հաշիվներով, վերջացրած անշարժ գույքով, գեղարվեստական արժեքներով և կոորպորացիաների անուղղակի ունեցվածքով: Այսպիսով, կարելի է կազմել բանաձև, որը տալիս է ճշգրիտ կապ ընթացիկ վճարային հաշվեկշռի դրական սալդոյի և մաքուր արտասահմանյան ակտիվների միջև.

Ընթացիկ վճարումների հաշվեկշռի դրական սալդո = Մաքուր արտասահմանյան ակտիվների աճ

Ստացվում է այնպես, որ ընթացիկ վճարումների դրական սալդոն հավասար է մաքուր արտասահմանյան ակտիվների աճին: Յետևաբար, եթե մենք գնում ենք ապրանքներ և ծառայություններ արտասահմանում ավելի շատ, քան վաճառում ենք, ապա ընթացիկ վճարումների հաշվեկշիռը փակվում է դեֆիցիտով: Իսկ այդ դեֆիցիտը պետք է ֆինանսավորվի, ինչը նշանակում է մեր մաքուր արտասահմանյան ակտիվների կրճատում:

Մաքուր պարտատու լինելը չի նշանակում լինել սնանկ: Երկիրը կարող է ունենալ բազմաթիվ ակտիվներ վաճառքի համար և դեռ երկար տարիներ մնալ այդպես, սակայն նման կերպով մենք կավելացնենք մեր սերունդների պարտքը և մեր երեխաները ստիպված կլինեն աշխատել, որպեսզի միայն մարեն այդ պարտքերը գումարած նաև նրանից առաջացած տոկոսները:

### ***Կապիտալի շարժի հաշվեկշիռ***

Կապիտալի շարժի հաշվեկշիռ հասկացությունը մենք մտցնում ենք, որպեսզի պարզաբանենք, թե ինչ է իրենից ներկայացնում վճարային հաշվեկշիռը առհասարակ: Կապիտալի շարժի հաշվեկշռում արտացոլվում են բոլոր միջազգային գործարքները ակտիվների հետ: Ներառվում են ակտիվների առևտրից եկամուտները, օրինակ բաժնետոմսերի, արժեթղթերի, անշարժ գույքի, և ձեռնարկությունների վաճառքից արտասահմանցիների, և ծախսերից, որոնք առաջանում են ակտիվների ձեռք բերումներից արտասահմանում:

Կապիտալի շարժի հաշվեկշիռ = ակտիվների վաճառքից առաջացած մուտքեր - ծախսեր արտերկրում ձեռք բերած ակտիվներից

Նույն կերպ ինչպես ապրանքների և ծառայությունների վաճառքը, այնպես էլ արտասահմանյան ակտիվների վաճառքը բերում է արտարժույթի մուտքերին: Իսկ արտասահմանյան ակտիվների գնումը հակառակը՝ իրենից ներկայացնում է արտարժույթի վճարում:

Յետևաբար, կապիտալի շարժի հաշվեկշիռը ցույց է տալիս արտարժույթի մաքուր ներհոսքը ակտիվների հետ բոլոր գործարքներից:

Այսպիսով, կապիտալի շարժի հաշվեկշիռը մանրակրկիթ ցույց է տալիս, թե ինչպես են փոխվում արտերկրի մեր ակտիվները: Եթե ակտիվների վաճառքից մուտքերը ավելի շատ է, քան մեր ակտիվների գնման ծախսերը արտերկրում, ապա հաշվեկշիռը փակվում է դրական: Այդ դեպքում կապիտալը ներհոսում է երկիր և մենք ասում ենք, որ տեղի է ունենում կապիտալի մաքուր ներհոսք: Եվ հակառակը, երբ ձեռք են բերում արտերկրում ավելի շատ ակտիվներ, քան արտասահմանցիները գնում են մեր երկրից, տեղի է ունենում կապիտալի մաքուր արտահոսք (այսինքն կապիտալի շարժի հաշվեկշիռը փակվում է պակասորդով):

### ***Ղեֆիցիտի և դրական սալդոյի որոշումը<sup>13</sup>***

Գոյություն ունի պարզ կանոն, որը օգնում է տարբերել կապիտալի շարժի հաշվեկշռի և ընթացիկ վճարային հաշվեկշռի դրական սալդոն ղեֆիցիտից: *Երբ համապատասխան գործարքները բերում են արտարժույթի մաքուր մուտքերին, ապա տվյալ հաշվեկշիռը բերվում է դրական սալդոյի:*

Երբ երկիրը գնում է արտերկրից ավելի շատ քան վաճառում է, տեղի է ունենում ընթացիկ հաշիվների հաշվեկշռի ղեֆիցիտ: Երբ ակտիվների վաճառքը արտասահմանցիներին և վարկերը արտասահմանում վերջնահաշվով գերազանցում են արտերկրի ակտիվների ձեռքբերումներին և վարկերի վճարումներին, ապա կապիտալի մաքուր ներհոսքի արդյունքում երկիրը ձեռք է բերում արտարժույթ, հետևաբար տեղի է ունենում կապիտալի շարժի հաշվեկշռի դրական սալդո:

Այժմ միացնենք ընթացիկ վճարային հաշվեկշռը և կապիտալի շարժի հաշվեկշռը, և փորձենք այն դիտարկել որպես մեկ ամբողջական վճարային հաշվեկշիռ:

---

<sup>13</sup> “Экономика” С. Фишер, Р.Дорнбуш, Р. Шмалензи, Москва 2001г.,

## 4.2 Վճարային հաշվեկշիռը և պետության միջամտությունը

Ինչպես նշել ենք, եթե երկրում բոլոր արտասահմանյան գործարքների ծախսերը գերազանցեն մուտքերը ընթացիկ գործարքներից, ապա այդ երկիրը պետք է անընդհատ վաճառի իր ակտիվները կամ ընկնի պարտքերի տակ, որպեսզի ֆինանսավորի հաշվեկշռի պակասորդը: Դրա համար ընթացիկ գործարքներով հաշվեկշռի պակասորդը ճշգրիտ պետք է համընկնի կապիտալի շարժի հաշվեկշռի դրական սալդոյին, որպեսզի հավասարակշռված լինեն: Սակայն նմանատիպ հավասարակշռման անհրաժեշտություն չի լինի, եթե արտարժույթի շուկա են միջամտում Կենտրոնական բանկերը՝ գնելով կամ վաճառելով արտարժույթ:

Արտարժույթի շուկայում ազգային ընկերությունները ունեն արտարժույթի պահանջարկ, որպեսզի կատարեն վճարում ներմուծված ապրանքների և ծառայությունների կամ արտասահմանյան ակտիվների ձեռք բերման համար: Եվ հակառակը, արտասահմանյան ընկերություններին հարկավոր է մեր ազգային արժույթը, որպեսզի վճարեն ներմուծման կամ հայրենական ակտիվների ձեռք բերման համար՝ առաջարկելով իրենց արտարժույթը: Արտարժույթի շուկայում փոխանակման դրույթը որոշվում է տվյալ արտարժույթի պահանջարկի և առաջարկի կորերով: Կենտրոնական բանկերը ի հայտ են գալիս արտարժույթի շուկայում նպատակ ունենալով ազդել փոխանակման դրույթի վրա՝ գնելով կամ վաճառելով որոշ տեսակի արտարժույթներ: Նմանատիպ գնումներն ու վաճառքները հանդիսանում են օֆիցիալ պահուստների հետ գործարքներ, քանի որ ԿԲ-ն անցկացնում է «ներխուժումներ» արտարժույթի շուկայում ավելացնելով կամ պակասեցնելով պահուստները: Եթե ԿԲ-ն պահում է իր պահուստները արտարժույթով, ապա նա կարող է վաճառել դրանց մի մասը արտասահմանցիներին նպատակ ունենալով ֆինանսավորել հաշվեկշռի պակասորդը: Այն դեպքում, երբ ընթացիկ վճարային հաշվեկշիռը հավասարակշռված է, ԿԲ-ն վաճառելով արտարժույթ կարող է ֆինանսավորել կապիտալի շարժի հաշվեկշռի դեֆիցիտը: Նմանատիպ վաճառքները ապահովվում են արտարժույթով, որը կարող է օգտագործվել

արտասահմանյան ակտիվների կամ արտաքին պարտքի վճարման համար: Եթե ընթացիկ վճարային հաշվեկշիռը և կապիտալի շարժի հաշվեկշիռը ունեն դրական սալդո, ԿԲ-ն կարող է գնել արտարժույթ՝ ավելացնելով դրանց պահուստները: Հանրագումարելով կարող ենք ասել, որ եթե ԿԲ-ն ավելացնում է իր պահուստները արտարժույթով, ապա վճարային հաշվեկշիռը փակվում է դրական սալդոյով: Եվ կարելի է ենթադրել, որ կամ ընթացիկ վճարային հաշվեկշիռն է դրական կամ կապիտալի շարժի հաշվեկշիռը, կամ երկուսն էլ դրական են:

Վճարային հաշվեկշիռը փակվում է դրական, երբ ընթացիկ վճարային և կապիտալի շարժի հաշվեկշիռների գումարը ցույց է տալիս դրական սալդո, այսինքն արտարժույթի մաքուր մուտքերը հանդիսանում են դրական:

Վճարային հաշվեկշիռը փակվում է պակասորդով (դեֆիցիտով), երբ ընթացիկ գործարքներից և կապիտալի շարժի հաշվեկշիռներից արտարժույթի մաքուր մուտքերը բացասական են: Վճարային հաշվեկշռի դեֆիցիտի ժամանակ ԿԲ-ը կրճատում է իր արտարժույթի պահուստները:

Վճարային հաշվեկշիռը կարող ենք ներկայացնել տվյալ բանաձևի տեսքով.

$$\begin{array}{l} \text{Վճարային} \\ \text{հաշվեկշիռ} \end{array} = \begin{array}{l} \text{ընթացիկ} \\ \text{վճարումների} \\ \text{հաշվեկշիռ} \end{array} + \begin{array}{l} \text{կապիտալի} \\ \text{շարժի} \\ \text{հաշվեկշիռ} \end{array}$$

Հետևաբար, վճարային հաշվեկշռի դրական սալդոն պետք է հավասար լինի ընթացիկ վճարումների և կապիտալի շարժի հաշվեկշիռների դրական գումարին: Եվ քանի որ արտասահմանցիներից ստացված ընդհանուր մուտքերը պետք է հավասար լինի նրանց վճարված ընդհանուր գումարին, մենք տեսնում ենք, որ մասնավոր սեկտորի ցանկացած դեֆիցիտ կամ ավելցուկ պետք է վերականգնված լինի ԿԲ-ի կողմից: Ընդհանրացված կերպով, վճարային հաշվեկշռի դրական սալդոն պետք է ճշգրիտ հավասար լինի Կենտրոնական բանկի կողմից արտարժույթի մաքուր ձեռքբերումներին, և հակառակը, վճարային հաշվեկշռի դեֆիցիտը

Ճշգրիտ հավասար է լինելու արտարժույթի մաքուր վաճառքի ծավալին:

Ենթադրենք, որ երկիրը ունի ընթացիկ գործարքների հաշվեկշռի դեֆիցիտ և Կենտրոնական բանկը չի անցկացնում ինտերվենցիաներ: Վերը նշված բանաձևից նրա ձախ մասը հավասար է գրոյի, ընթացիկ վճարումների հաշվեկշռի դեֆիցիտը պետք է հավասար լինի կապիտալի շարժի հաշվեկշռի դրական սալդոյին: Եվ այսպիսով, ինտերվենցիայի բացակայության դեպքում տեղի է ունենում հետևյալը.

$$\text{ընթացիկ գործարքներով դրական սալդո} = \text{կապիտալի շարժի հաշվեկշռի դեֆիցիտ}$$

Այս ամենը ասում է այն մասին, որ պետական ինտերվենցիայի բացակայության դեպքում մասնավոր սեկտորի հաշիվները պետք է հավասարակշռված լինեն: Ցանկացած վճարում արտարժույթով պետք է ֆինանսավորվի ապրանքների և ծառայությունների վաճառքի հաշվին, տրասֆերտների հաշվին կամ արտասահմանյան ակտիվների վաճառքի հաշվին: Ո՞րն է հավասարակշռվածության կայացման մեխանիզմը, որը երաշխավորում է մասնավոր սեկտորի արտարժույթի ընդհանուր մուտքերի հավասարությունը նրա ընդհանուր վճարումներին արտասահմանցիներին այն դեպքում, երբ Կենտրոնական բանկը չի իրականացնում ինտերվենցիաներ: Պատասխանը մեկն է՝ հավասարակշռության պահպանման համար պետք է փոխվի արտարժույթի փոխանակաման դրույթաչափը: Վաճառելով իր արտարժույթի պահուստները Կենտրոնական բանկը կարող է հետաձգել նման հավասարումները: Բայց քանի որ նրա արտարժույթային պահուստները սահմանափակ են, բնականաբար նա չի կարող անընդհատ կարգավորել փոխանակման դրույթները:

Հաճախ ասում են, որ եթե չլիներ Կենտրոնական բանկը, ապա խնդիր չէր առաջանա վճարային հաշվեկշռի հետ: Այս տեսանկյունը առաջին հայացքից ճիշտ է թվում: Առանց Կենտրոնական բանկի արտարժույթի շուկայում չեն լինի ինտերվենցիաներ, և հետևաբար, չէր լինի վճարային հաշվեկշռի ոչ դեֆիցիտը, ոչ էլ ակտիվ սալդոն: Կապիտալի շարժի հաշվեկշռի ակտիվ սալդոն պետք է ֆինանսավորեր ընթացիկ գործարքները նույն կերպ, ինչ որ անհատի

դեպքում: Եթե Կենտրոնական բանկը չգներ և չվաճառեր արտարժույթ, ապա արտարժույթի փոխանակման դրույքը մեխանիկորեն կընդուներ այնպիսի մակարդակ, որպեսզի վերացնի վճարային հաշվեկշռի դեֆիցիտը:

Արդյո՞ք պետք է արտարժույթի փոխանակման դրույքը փոխվի ազատ, առանց ԿԲ-ի միջամտության, հաստատվելով այն մակարդակում, որպեսզի հավասարակշռի միջազգային վճարումները: Այս հարցը վերջին 20 տարիներից ի վեր հանդիսանում է գլխավոր խնդիր: Գոյություն ունի ԿԲ-ի միջամտության երկու կարևոր պատճառ: Նախ և առաջ, արժույթի փոխանակման դրույքաչափի փոփոխությունը անրադառնում է արտահանման և ներմուծման վրա, ինչը իր հերթին ազդում է արտադրանքի արտադրման ծավալի և զբաղվածության վրա: Երբ երկիրն ունի ամուր արժույթ, այսինքն երբ արտասահմանյան արժույթը էժան է իր հայրենականից, ապա արտասահմանյան ապրանքները տվյալ երկրի համար դառնում են էժան, իսկ իր հայրենական ապրանքները արտասահմանցիների համար դառնում են թանկարժեք: Սա բերում է երկրի արտահանման ծավալի կրճատմանը և ներմուծման մեծացմանը: Ավելի արդիական է արտահանման խնդիրը, քանի որ արտահանման ծավալի կրճատումը ենթադրում է երկրում աշխատատեղերի կրճատում:

Երկրորդ, արժույթի ինքնարժեքի փոփոխությունը իր ազդեցությունն է ունենում արտահանման և ներմուծման արժեքի վրա և, հետևաբար, երկրում գնի մակարդակի և ինֆլյացիայի վրա:

*Վճարային հաշվեկշռի ճգնաժամ:* Վճարային հաշվեկշռի ճգնաժամ առաջանում է այն դեպքում, երբ երկիրը երկար ժամանակով հետաձգել է ընթացիկ վճարային հաշվեկշռի դեֆիցիտի կանոնակարգումը և հյուժել է պահուստները: Կենտրոնական բանկում արտարժույթի պահուստները նվազում են, արտասահմանցիները (հատկապես բանկերը) չեն ցանկանում տրամադրել վարկեր ոչ առանձին անհատներին, ոչ էլ պետությանը, իսկ այլ հասանելի ֆինանսական աղբյուր չկա:

Վճարային հաշվեկշռի ճգնաժամ կարող է առաջանալ նաև այն դեպքում, երբ մարդիկ կորցնում են իրենց վստահությունը պետության քաղաքականության հանդեպ և վախենում, որ իրենց երկրի արժույթը կարժեզրկվի: Արդյունքում նրանք իրենց պահուստները պահում են արտարժույթով: Սա բարդեցնում է ԿԲ-ի գործունեությունը իր արժույթի փոխանակման դրույթի պահպանման ուղղությամբ:

### 4.3 Արտարժույթի փոխանակման դրույքները

Դրույքաչափերի տատանումները և փոփոխությունները բնագավառների համար, որոնք չեն տիրապետում տնտեսագիտական կանոնների, կրում են կախարդական բնույթ: Սակայն այն երբեմն անհասկանալի է նաև խոշորագույն մասնագետներին: Ասում են Քեյնսը, ով զբաղվում էր արտարժույթի առք ու վաճառքով, երեք անգամ ունեցել է խոշոր հաջողություններ, սակայն երկու անգամ էլ ունեցել է «անհաջողակ» կանխատեսումներ:

Արտարժույթային շուկայի դիտարկման ժամանակ մենք կպարզենք, թե ինչ է նշանակում փոխանակման դրույքը, ինչպես են որոշվում փոխանակման դրույքները և կուսումնասիրենք երեք արտարժույթային դրույքների համակարգ՝ ազատ լողացող և ֆիքսված դրույքներ (կամ ոսկե ստանդարտի համակարգը), ինչպես նաև դոլարային ստանդարտը:

Արտարժույթի դրույքի համակարգը կանոնների հավաքածու է, որոնց միջոցով ներկայացվում է Կենտրոնական բանկի դերը արտարժույթի շուկայում: Համակարգերի մասնավոր դեպք են հանդիսանում կոշտ ֆիքսված դրույքները՝ Կենտրոնական բանկի ուղղակի միջամտությամբ և բացարձակ ճկուն փոխանակման դրույքները, որոնք կայացվում են շուկայում առանց Կենտրոնական բանկի որևիցե միջամտության: Այս ծայրահեղ դեպքերի դիտարկումներից հետո կքննարկենք, թե ինչպես են միջազգային առևտուրը և կապիտալի հոսքը (վարկեր և փոխառություններ) պետական քաղաքականության հետ մեկտեղ ազդում արժույթի փոխանակման դրույքների վրա տարբեր համակարգերում, ինչպես նաև տնտեսությունների բացվածության աստիճանից կախված դրամավարկային քաղաքականությունների ազդեցությունը ազգային տնտեսությունների վրա:

**Արտարժույթի շուկա:** Երկրի ներսում կատարվող գործարքներում օգտագործվում է ազգային արժույթ, սակայն առևտուրն ազգային սահմաններից դուրս դժվարանում է, քանի որ արտասահմանցիներից գնումներ կատարելու համար անհրաժեշտ է արտարժույթ: Օրինակ ֆրանսիացի ներմուծողը պետք է գնի ամերիկյան գինի, կամ



հոլանդացին պետք է ձեռք բերի ճապոնական համակարգիչ (անգլիացիները օգտագործում են ֆունտ, ճապոնացիները՝ իեն, ռուսները՝ ռուբլի և այլն): Ապրանքնափոխանակությունը տարբեր երկրների միջև պահանջում է մի արժույթի փոխանակում մյուսով: Դրա համար գոյություն ունեն հատուկ շուկաներ, որտեղ կարելի է գնել կամ վաճառել արտարժույթ և, որոնք կոչվում են արտարժույթի շուկաներ: Այն իրենից ներկայացնում է բարձր կազմակերպված բազմամակարդակ համակարգ: Ամբողջ աշխարհում շուկայի առաջնային կազմակերպիչներն են առևտրային բանկերն ու արժութային բրոկերները<sup>14</sup>:

Եթե դուք ցանկանում եք մեկնել արտասահման, ապա ձեր սպասարկող բանկը կվաճառի ձեզ արտարժույթ: Այդ բանկը իր հերթին գնում է արտարժույթ ուրիշ բանկից: Եթե սպասարկող բանկը խոշոր է, ապա այն կգնի արտարժույթը անմիջապես տվյալ երկրի բանկերից: Իսկ եթե այդքան էլ խոշոր չէ, ապա այն կվարի իր գործունեությունը ավելի խոշոր բանկի օգնությամբ: Այդ բոլոր բանկերը գնում կամ վաճառում են այդ արտարժույթն իրենց հաճախորդների պահանջով և նրանց անունից: Վերջինների մեջ կան այնպիսիները, որոնց հարկավոր է արտարժույթը գնումների համար, և այնպիսիները, ովքեր արդեն վաճառել են ապրանքներն արտասահմանում և ուզում են իրացնել ձեռք բերած արտարժույթը: Արտարժույթի փոխանակման գործարքները խոշոր արտարժութային շուկաներում, ինչպիսիք են Տոկիոյի, Լոնդոնի, Փարիզի, Ֆրանկֆուրտի, Օսակայի շուկաները, օրեկան շրջանառությունը կազմում է 200 մլրդ \$: Ամեն վայրկյան կատարվում են գործարքներ կախված արժույթների առք ու վաճառքով, որի հիմքն է փոխանակման դրույթը (կուրսը): Փոխանակման կուրսը արտարժույթի միավորի գինն է՝ արտահայտված ազգային արժույթով (օրինակ թե մեկ դոլարը քանի իեն է): Եվ այդ արտարժույթի փոխանակման դրույթը կարող է որոշվել երկու եղանակով՝ մեկ դոլարը քանի իեն է (ինչպես օրինակ 1\$=125 իեն) և մեկ իենը քանի դոլար է (ինչպես օրինակ 1իեն=0.008\$):

---

<sup>14</sup> «Տնտեսագիտություն», Ջեյմս Գ. Գոռթնի, Ռիչարդ Լ. Խտրոուպ, 1999թ., էջ 986

Ինչպես նշեցինք, տնտեսությունում մենք որոշում ենք փոխանակման կուրսը՝ որպես արտարժույթի միավորի գինը արտահայտված ազգային միավորով: Եվ երբ արտարժույթի միավորի գինը արտահայտված ազգային փողով աճում է, մենք խոսում ենք *ազգային արժույթի արժեզրկման* (եժանացման) մասին: Ազգային արժույթի արժեզրկումն արտասահմանյան ապրանքները դարձնում է ավելի թանկ:

Եվ հակառակը երբ արտարժույթի միավորի գինը ազգային փողով ընկնում է, մենք խոսում ենք *ազգային արժույթի թանկացման* մասին (դա նշանակում է ազգային արժույթի կուրսի բարձրացում, այսինքն՝ միավոր արտարժույթ գնելու համար պահանջվում է ազգային արժույթի ավելի քիչ քանակություն):


Արտարժույթային շուկայում բավականին մեծ դեր կարող է ունենալ պետությունը: Նա անցկացնում է ինտերվենցիաներ՝ գնելով կամ վաճառելով արտարժույթ, որով ազդում է դրա գնի վրա կամ առավել ևս նշանակում է ուղղակիորեն: Եվ առհասարակ, պետությունը կարող է չմիջամտել շուկաներում կատարվող երևույթներին և շուկան ինքը կկարգավորի դրույքաչափը: Առաջին երկու ծայրահեղ իրավիճակների էությունը նմանատիպ ներխուժումների հետևանքով կայանում է հետևյալում.

1. Պետությունը կարող է մնալ արտարժույթային շուկաների սահմանների ամբողջականությունից դուրս և թույլատրել դրույքաչափերի փոփոխությունը այնպես, որպեսզի հավասարակշռի առաջարկը և պահանջարկը: Փոխանակման դրույքների այս իրավիճակը կոչվում է ազատ լողացող դրույքաչափ, կամ երբեմն ասում են ազատ ֆլոտինգ (նավաուղղություն):
2. Արտարժույթի փոխանակման ֆիքսված դրույքաչափերը պետությունը կոչո ֆիքսում է (օրինակ 1\$= 450 դրամ և վերջ):

Սակայն պրակտիկայում շատ հազվադեպ է հանդիպում այս երկու համակարգերի կիրառումը մաքուր տեսքով:

#### 4.4 Արտարժույթի դրույքաչափը ազատ Ֆլուտինգի պայմաններում

Փոխանակման դրույքը հանդիսանում է այն նշանակալից գինը, որը կապում է երկրի տնտեսությունը աշխարհի այլ երկրների հետ: Որպեսզի կենտրոնանանք տվյալ խնդրի պարզաբանմանը, մտովի ենթադրենք, որ միջազգային վարկավորումն ու փոխատվությունն ընդհանրապես չեն կատարվում (գոյություն չունեն): Այդ նախապայմանը ենթադրում է, որ արտարժույթը օգտագործվում է միայն ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման ժամանակ: Ներմուծողները պետք է ստանան արտարժույթ, որպեսզի վճարեն իրենց հաշիվները արտերկրում: Հետևաբար, ներմուծումը հանդիսանում է արտարժույթի պահանջարկի աղբյուր: Արտահանումը՝ հակառակը, բերում է արտարժույթ և ներկայացնում է իրենից առաջարկի աղբյուր: Շուկայում արտարժույթի առաջարկը էքսպորտի կողմից հանդիպում է պահանջարկին իմպորտի կողմից, և այս ձևով կայացվում է փոխանակման դրույքը:



Ուղղահայացի վրա տեղակայում ենք փոխանակման դրույքը կամ, այլ կերպ ասած, դոլարի գինը մեկ միավորի համար: Ինչքան բարձր է արտարժույթային դրույքը, այնքան շատ դոլար մենք պետք է վճարենք արտարժույթի մեկ միավոր €-ի համար:

Հորիզոնականի վրա տեղակայում ենք արտարժույթի քանակը: Արտարժույթի առաջարկը ներկայացնում է իրենից էքսպորտային մուտքերը՝ դոլարով (եկամուտները), իսկ պահանջարկը ներկայացնում է արտահանման ընդհանուր արժեքը դոլարով:

Չետևաբար, հորիզոնական առանցքի վրա տեղակայում ենք իմպորտի ծախսերը և էքսպորտից եկամուտները՝ արտահայտված դոլարով:


Այսպիսով, X կորը ցույց է տալիս մեր մուտքերը արտահանումից արտահայտված դոլարով: Ինչքան բարձր է արտարժույթի դրույքը, այնքան էժան է մեր արտահանումը արտասահմանցիների համար և մեծ է դրանց պահանջարկը: Ենթադրում ենք, որ արտասահմանցիների պահանջարկը մեր ապրանքների համար էլաստիկ է և, հետևաբար, իրենց ծախսերը ավելանում են փոխանակաման դրույքաչափի բարձրացման հետ մեկտեղ: Դա նշանակում է, որ X կորը ուղղված է դեպի վեր: Մեր պահանջարկը իմպորտի վրա ներկայացնում ենք M կորի տեսքով: Երբ արտարժույթային դրույքը ընկնում է (իջնում է), իմպորտը մեր համար դառնում է մատչելի՝ ուղղված է ներքև: Հավասարակշռությունը հասնում է A կետում, երբ 1€ համարժեք է 1.17\$-ին: Ցանկացած բարձր դրույքի դեպքում դիտարկվում է արտասահմանյան արտարժույթի ավելցուկ և ընթացիկ վճարումների հաշվեկշռի դրական սալդո, և դրույքաչափը սկսում է ընկնել:

Ցանկացած ցածր դրույքի ժամանակ տեղի է ունենում արտարժույթի պահանջարկի ավելցուկ և դրույքաչափի բարձրացում (հավասարակշռված գնից ներքև տիրույթը): Կարևոր է նշել, որ X և M կորերը մենք կառուցում ենք 2 երկրների տրված գների համար: Ծախսերի կորը իմպորտի համար ներկայացնելիս մենք նույնպես ենթադրում ենք, որ տնտեսությունում համախառն ծախսերի մակարդակը չի փոխվում: Ազատ ֆլուտինգի ժամանակ արտարժույթային դրույքը հանդիսանում է այն գինը, որը բերում է արտարժույթային շուկան հավասարակշռված վիճակի: Այլ ձևակերպմամբ, ազատ լողացող արտարժույթային դրույքաչափի ժամանակ (միջազգային վարկավորման և փոխատվության բացակայության դեպքում) դրույքաչափը փոխվում է այնպես, որպեսզի բացառի ցանկացած դեֆիցիտ կամ վճարային հաշվեկշռի դրական սալդոն և հավասարեցնի արտարժույթի պահանջարկը առաջացող իմպորտից՝ առաջարկելով արտարժույթ առաջացած էքսպորտից:

## 4.5 Վճարային հաշվեկշռի ադապտացիան արտարժույթի ազատ լողացող դրույքաչափի պայմաններում

Ենթադրենք, որ երկրի ՅՆԱ-ն աճում է, որի հետևանքով աճում է իմպորտի պահանջարկը տվյալ փոխանակման դրույքի դեպքում:  $M$  կորը տեղաշարժվում է  $M'$  դիրքը:

Նախնական հավասարակշռությունը գտնվում է  $A$  կետում, այսինքն  $1\text{€}$  համարժեք է  $1.17$  \$-ին: Ներմուծման նկատմամբ հայրենական պահանջարկը արտահայտված է դոլարով և ներկայացված է  $A'$  կետում: Մուտքերը էքսպորտից դեռ համապատասխանում են  $A$  կետին  $X$  կորի վրա: Իմպորտի վրա կատարված ծախսերի և էքսպորտից ստացված մուտքերի տարբերությունը՝  $AA'$  ներկայացնում է իրենից վճարային հաշվեկշռի



դեֆիցիտը, կամ ինչը միևնույն ժամանակ նշանակում է արտասահմանյան արժույթի նկատմամբ պահանջարկի ավելցուկ:

Նախորդ ուսումնասիրությունների ժամանակ մենք դիտարկել ենք, որ վճարային

հաշվեկշիռը հավասար չէ զրոյի միայն այն պարագայում, երբ Կենտրոնական բանկը անցկացնում է ինտերվենցիաներ (ժամանակավոր գումարների բաց թողում): Բայց եթե Կենտրոնական բանկը չի խառնվում ստեղծված իրավիճակին, ապա դրույքաչափը փոփոխվում է, որպեսզի կայանա վճարային հաշվեկշռի կայուն հավասարակշռված վիճակ: Իմպորտի ծախսերի գերազանցումը էքսպորտի մուտքերի հանդեպ բերում է դոլարային գնի նոր հավասարակշռված վիճակի  $A''$  կետում: Մեծացած ծախսերը իմպորտի վրա մեր օրինակում բերում են դոլարի էժանացմանը, որը իր հերթին վերականգնում է վճարային հաշվեկշիռը երկու ճանապարհով:

1. այն իջեցնում է ծախսերը ինպորտի վրա՝ դարձնելով արտասահմանյան ապրանքները ի համեմատ հայրենականի ավելի թանկ,
2. այն նույնպես բարձրացնում է մեր արտահանման մրցունակությունը, և դրանով էլ դոլարի էժանացումը մասնակցում և մեծացնում է մուտքերը արտահանումից և, հետևաբար, օգնում է ֆինանսավորել ներմուծման մեծացման ծախսերը:

Այսպիսով, բացարձակ ճկուն արտարժութային դրույքաչափը օգնում է վճարային հաշվեկշռի կարգավորմանը ավտոմատ հավասարեցնելով ներմուծումից արտարժույթի պահանջարկը արտահանումից առաջացած ավելացած արտասահմանյան արտարժույթի առաջարկով:

## 4.6 Ֆիքսված դրույքաչափ: Ոսկե ստանդարտ

Ոսկե ստանդարտը հանդիսանում է ավելի հեշտ ընկալվող արտարժույթի դրույքների համար: Այն ունի երեք հիմնական կանոն.

1. Պետությունը ամրագրում է (ֆիքսում է) ոսկու գինը, հետևաբար իր դրամական միավորի արժեքը արտահայտված ոսկով (պարիտետային արժեքը ոսկով հանդիսանում է պետության կողմից նշանակված ոսկու գինը՝ ազգային արժույթով):
2. Պետությունը ապահովում է ազգային արժույթի փոխանակելիությունը ոսկով: Այլ կերպ ասած, պետությունը պարտավոր է գնել և վաճառել ազգային արժույթը ոսկով առաջին պահանջով և պարիտետային գնով: Վճարելով չնչին գումար գործարքը կատարելու համար ցանկացած մարդ (այդ թվում արտասահմանցի), որը եկել է Կենտրոնական բանկ կարող է փոխանակել թղթային փողերը ոսկով և այդ ոսկին տանել իր հետ:
3. Պետությունը պահպանում է ոսկու ապահովումը կամ 100%-անոց ծածկման քաղաքականությունը: Այլ կերպ ասած, նա իր մոտ ունի ոսկու պահուստներ, որոնք հավասար են թողարկված փողի քանակին, որը գտնվում է շրջանառության մեջ: Պետությունը միայն այն ժամանակ է թողարկում (տպում) փողեր, երբ որ գնում է ոսկի բնակչությունից, և վերացնում է դրանք, երբ վաճառում է բնակչությանը:

Քանի որ 100%-անոց ծածկման միտքը հանդիսանում է այս համակարգի հիմնարար մաս, այն պահանջում է ուշադիր ուսումնասիրություն: Կենտրոնական բանկի հաշվեկշիռը ներկայացվում է հետևյալ կերպ.

Ակտիվներ	Պասիվներ
Ոսկի	Թղթադրամ

Այս հաշվեկշիռը ներկայումս տարբերվում է ժամանակակից ԿԲ-ների հաշվեկշիռներից: Այսպիսի ԿԲ-ներում չկան բանկային դեպոզիտներ, բոլոր արտասահմանյան ակտիվներն ունեն ոսկու տեսք, այլ ոչ թե արտարժույթի և այլն: ԿԲ-ն տիրապետում է միայն ոսկուն, որը նա

ծեռք է բերում շրջանառության մեջ թղթադրամ թողարկելով: Ենթադրենք, անձը որոշում է կայացնում գնել ԿԲ-ից 100\$-ին համարժեք ոսկի: 100%-անոց ծածկման ժամանակ պետությունը 100\$-ի ոսկուն փոքրացնում է պասիվները նույն գումարի չափով, քանի որ այն դեպքում, երբ նա վաճառում է ոսկի իրեն վճարում են թղթադրամներ: Հետևաբար այդ թղթադրամները պակասում են շրջանառությունից, որոնք կան պահեստավորվում կամ ոչնչացվում են: Այսպիսով, ԿԲ-ում ոսկու պաշարների կրճատումը բերում են շրջանառության մեջ թողարկված թղթադրամների քանակի կրճատմանը (1:1): Եվ ինչպես տեսնում ենք, այս մեխանիզմը երաշխավորվում է հաշվեկշռի ավտոմատ հավասարակշռումը:




## 4.7 Վճարային հաշվեկշռի ադապտացիան ոսկե ստանդարտի պայմաններում

Ենթադրենք, որ աշխարհում կա երկու երկիր՝ ԱՄՆ-ն ու Մեծ Բրիտանիան և շրջանառվում են միայն այս երկու երկրների արտարժույթները՝ դոլարը և ֆունտ ստերլինգը: Այս երկու երկրներում էլ գործում են ոսկու ստանդարտը և երկու երկրներն էլ գործում են համաձայն 3 հիմնական կանոնների, որոնք մենք նշեցին վերևում:

Դիցուք արտարժույթային պարիտետը ԱՄՆ-ում կազմում է 20.67\$ ոսկու 1 ունցիայի համար, իսկ Մեծ Բրիտանիայում՝ 4.25£: Այս թվերից հետևում է, որ արտարժույթային դրույքաչափը՝  $1£=4.86\$$ : Ինչու՞ է արտարժույթային դրույքը հավասար լինում հենց 4.86\$ 1£-ի դիմաց: Արտարժույթային դրույքը հաշվարկվում է երկու երկրներում ոսկու գնի համեմատության հիմքով և կոչվում է ոսկու պարիտետ:

Այժմ դիտարկենք թե ինչ է տեղի ունենում, երբ Եվակետային հաշվեկշիռը հավասար չէ գրոյի: Այս դեպքում ներառվում է վճարային հաշվեկշռի հարմարվելիության մեխանիզմը, որը երաշխավորում է, որ վերջնահաշվում վճարումները հավասարակշռված կլինեն:



Պարիտետային փոխանակման դրույքը կազմում է 1£-ի դիմաց 4.86 \$ և առաջնային վիճակում հավասարակշռված է: Իմպորտում ծախսերի ավելացումը տեղաշարժում է արտարժույթի պահանջարկի կորը M-ից

Մ-ին և առաջացնում է վճարային հաշվեկշռի դեֆիցիտ: Սակայն այս համակարգի գործունեության ժամանակ արտարժութային դրույքը չի բարձրանա 4.86 \$-ից 1 £-ի դիմաց, քանի որ ցանկացած մարդ կարող է գնել \$ունտ ստերլինգ այդ նույն 4.86 դրույքով, գնելով ոսկի 20.67 \$-ով 1 ունցիայի դիմաց ԱՄՆ-ում և վաճառելով 4.25£-ով Մեծ Բրիտանիայում: Որպեսզի վճարեն իրենց ներմուծման ծախսերը ԱՄՆ-ի ռեզիդենտները գնում են ոսկի ՖեԴ-ից և ուղարկում Անգլիա, որտեղ մարդիկ այն կտանեն ԿԲ, որպեսզի ստանան \$ունտ ստերլինգ: Առաջանում է AA՝ դեֆիցիտը: Այս դեֆիցիտը ֆինանսավորվում է ի հաշիվ ՖեԴ-ի ոսկու պաշարների: Երբ ներմուծողները գնում են ոսկի ՖեԴ-ից, դրամական զանգվածը ԱՄՆ-ում փոքրանում է: Ոսկին ուղարկվում է Անգլիա և փոխանակվում Անգլիայի ԿԲ-ում ընդդեմ \$ունտ ստերլինգի: Որպեսզի Անգլիայի ԿԲ-ն գնի այդ ոսկին պետք է թողարկի ավելի մեծ քանակությամբ \$ունտեր, ինչը բերում է դրամական զանգվածի ավելացման: Հետևաբար վճարային հաշվեկշռի դեֆիցիտը ԱՄՆ-ում ինքնաբերաբար բերում է փողի քանակի կրճատմանը, իսկ Մեծ Բրիտանիայում՝ ավելացմանը: Դրամական զանգվածի փոփոխություններն էլ իրենց հերթին ազդում են ծախսերի մակարդակի վրա: ԱՄՆ-ում դրամի քանակի կրճատումը բերում է ծախսերի կրճատմանը, այսինքն կարելի է ենթադրել նաև տոկոսադրույքների բարձրացմանը: Մեծ Բրիտանիայում դրամական էքսպանսիան բերում է տոկոսադրույքների իջեցմանը: Այդ ամենը իր ազդեցությունն է ունենում արտարժույթի շուկայի վրա: ԱՄՆ-ում կրճատվող փողերի քանակը բերում է նաև ներմուծման վրա կատարվող ծախսերի իջեցմանը: Այս գործընթացը գծապատկերում կարելի է արտահայտել իմպորտի ծախսերի M՝ կորի սահուն տեղաշարժը դեպի ձախ, այսինքն M՝ կորին: Նույն ժամանակ Մեծ Բրիտանիայում փողի քանակի ավելացումը բերում է իմպորտի վրա ծախսերի ավելացման, և դրանով էլ կարելի է ենթադրել, որ ավելացվող արտահանման ծավալները կբերեն X կորի տեղաշարժմանը դեպի աջ, և գործընթացը կշարունակվի այնքան, մինչև M՝ կորը և X՝-ը կհասվեն և տեղի կունենա ավելի հավասարակշռված իրավիճակ, որը տեղի է ունենում A՝ կետում:

Կարգավորման գործընթացը ոսկե ստանդարտի ժամանակ չի կատարվում կայծակնային արագությամբ: Պահանջվում է որոշակի ժամանակ, որպեսզի ոսկու կորուստը և փողի զանգվածի կրճատումը դեֆիցիտով երկրում կրճատեն իմպորտի ծախսերը և դրական հաշվեկշռով երկրում բերեն փողի շատացման, այնուհետև իմպորտի ավելացման: Գործընթացը հանդիսանում է ինքնուրույն կարգավորվող այն իմաստով, որ երեք հիմնական կանոների պահպանումը ի վերջո բերում է վճարային հաշվեկշռի հավասարեցման:

## 4.8 Կարգավորվող կուրսեր և դոլարային ստանդարտ

Ոսկե ստանդարտը և բացառիկ ճկուն դրույքաչափերի համակարգը հանդիսանում են երկու ծայրահեղություն, սակայն գոյություն են դրանց միջանկյալները, ինչպիսին են կարգավորվող ֆիքսված կուրսերը և ղեկավարվող ֆլոտինգը: Ներկայումս մենք կդիտարկենք կարգավորվող *ֆիքսված* արտարժույթի դրույքաչափերը: Նրա անվանումը արտահայտում է այն փաստը, որ դրույքաչափը այդ համակարգում հանդիսանում է ֆիքսված (պահպանվում է արհեստականորեն), սակայն ժամանակ առ ժամանակ կարող է վերանայվել:

*Դոլարային ստանդարտ*<sup>15</sup>: Դոլարային ստանդարտը ֆիքսված արտարժույթային դրույքաչափերի համակարգի մի տարատեսակ է, որը հետզհետե զարգանում էր XX դարի ընթացքում և անցած դարի 50-60-ական թթ-ին արդյունաբերությամբ զարգացած երկրների համար հանդիսանում էր որպես նորմալ դրսևորում: Ավելի լավ է ներկայացնել տվյալ համակարգը համեմատելով այն ոսկե ստանդարտի հետ: Ինչպես նշվել է, ոսկե ստանդարտի ժամանակ ամեն երկիր ինքն է նշանակում իրեն արժույթի արժեքը ոսկով: Դոլարային ստանդարտի ժամանակ երկիրը ֆիքսում է իր արժույթի գինը դոլարով: Ընդ որում տվյալ երկրները պահպանում են փոխանակելիությունը նույն դոլարի հանդեպ և ոչ թե ոսկու: Դրա համար էլ ԿԲ-ները գնում և վաճառում էին դոլարները պաշտոնապես կայացված դրույքաչափերով: Երկրները պետք է պահպանեին պահուստներում արտարժույթ այն դեպքի համար, եթե երկրում զգացվի անհրաժեշտություն դրա հանդեպ և ոչ թե ոսկու: Այդ ոսկու և դոլարի պահուստները կոչվեցին միջազգային պահուստներ: Եվ այսպես ինչպես ոսկին ոսկե ստանդարտի ժամանակ, այնպես էլ դոլարը ծառայում էր որպես հաշվարկային էտալոն: Դոլարը օգտագործվում էր որպես հիմնարար արտարժույթ, իսկ ԱՄՆ-ին վերաբերվում էին որպես հիմնարար արտարժույթի երկիր: Բայց կար մի հիմնական տարբերություն ոսկե ստանդարտի և ֆիքսված

<sup>15</sup> “Экономика” С. Фишер, Р.Дорнбуш, Р. Шмалензи, Москва 2001г.,

արտարժույթային դրույթերի միջև: Դուլարային ստանդարտի ժամանակ բացակայում էր ինքնակարգավորող մեխանիզմը, քանի որ ԿԲ-ները չէին հետևում ոսկե ստանդարտի երրորդ կանոնին, ինչը պահանջում է որպեսզի փողի զանգվածը ձևավորվի բացարձակ վճարային հաշվեկշռի ազդեցության տակ: Ոսկե ստանդարտի ժամանակ վճարային հաշվեկշռի դեֆիցիտը բերում էր փողի առաջարկի իջեցման, իսկ ավելցուկը՝ ավելացման: Իսկ դուլարային ստանդարտի ժամանակ ԿԲ-ները ծանրաբեռնված չլինելով ոսկե ստանդարտի կոշտ կանոններով փոփոխում էին փողի զանգվածի ծավալը, որպեսզի ներազդեն ներքին գործազրկության և ինֆլյացիայի վրա: Այն երկրները, որոնք ունեին վճարային հաշվեկշռի դեֆիցիտ և տառապում էին գործազրկությամբ, ավելացնում էին փողի առաջարկը՝ փորձելով կրճատել գործազրկությունը, փոխանակ թույլատրեին վճարային հաշվեկշռի դեֆիցիտին առաջացնի դրամական զանգված կրճատում: Վճարային հաշվեկշռի դրական սալդո ունեցող երկրներն իրենց ներսում պետք է ոսկե ստանդարտի պայմաններին համապատասխան մեծացնեին փողի առաջարկը, սակայն նրանք այդպես չէին վարվում՝ նախընտրելով ինֆլյացիան պահել իրենց հսկողության ներքո:

Վճարային հաշվեկշռի դեֆիցիտ ունեցող երկրները պետք է վաճառեին արտարժույթ բոլոր նրանց, ովքեր ցանկանում էին գնել ապրանքներ արտասահմանում, որը բերում էր այդ երկրներում արտարժույթի պահուստների սպառման: Վճարային հաշվեկշռի դրական սալդո ունեցող երկրներն անընդհատ լրացնում էին իրենց պահուստները: Դեֆիցիտով երկրները չէին կարող հավերժ գտնվել սպառվող պահուստներով իրավիճակում և վաղ թե ուշ պետք է կանոնակարգեին արժույթային դրույթաչափը: Արժույթային դրույթաչափի փոփոխության սպասումն իր հերթին հիմք էր ստեղծում սպեկուլյացիային:

*Ստերիլիզացիա:* Դուլարային ստանդարտի պայմաններում ԿԲ-ը ի՞նչ կերպով է խախտում պահուստների փոքրացման և դրամական զանգվածի կրճատման, ինչպես նաև պահուստների մեծացման և դրամական զանգվածի ընդլայնման փոխկապակցված

գործընթացները: Հաշվեկշիռը, որը ներկայացված է աղյուսակ 3-ում, օգնում է հասկանալ ներքին կրեդիտի և ստերիլիզացիայի դերը:

Ենթադրենք Անգլիայում ներմուծման պահանջարկն աճում է, ինչի արդյունքում Անգլիայի բնակիչները գնում են ԿԲ-ից 100 ֆունտ ստերլինգին համարժեք արտարժույթ: Արդյունքում ինչպես պահուստների, այնպես էլ փողի ծավալը կրճատվում է 100 ֆունտով: Այդ փոփոխությունները ցույց են տրված աղյուսակ 3-ի առաջին տողով: Եթե հետո ոչինչ չի փոխվում, ապա ներմուծման մեծացումը կրճատում է դրամական զանգածը նույն կերպ, ինչպես ոսկե ստանդարտի դեպքում:

*Աղյուսակ 3. Կենտրոնական բանկը կորցնում է պահուստները*

Ակտիվների փոփոխություն		Պասիվների փոփոխություն	
Արտարժույթի պահուստներ	-100	Բարձր արդյունավետությամբ փողեր	-100
Բաժնետոմս	+100	Բարձր արդյունավետությամբ փողեր	+100
Ակտիվների մաքուր փոփոխություն	0	Բարձր արդյունավետությամբ փողերի քանակի մաքուր փոփոխություն	0

Սակայն մեր դեպքում բանկը ստերիլիզացնում է իմպորտի ծախսերի ազդեցությունը դրամական զանգվածի վրա: Նա բաց շուկաներում բնակչությունից գնում է արժեթղթեր, շուկաներում նման գործարքները 100 ֆունտով մեծացնում են արժեթղթերի պահուստները բանկում և թողարկվող բարձր արդյունավետությամբ փողերի առաջարկը 100 ֆունտով: Արժուքային շուկայում և բաց շուկայում գործարքների միասնական ազդեցության արդյունքում փողի առաջարկը չի փոխվում, չնայած որ պահուստները կրճատվել են:

Կենտրոնական բանկը ստերիլիզացնում է փողի առաջարկի վրա պահուստների կրճատման կամ ավելացման ազդեցությունը, ձեռնարկելով գործարքներ բաց շուկայում, որոնք ճշտությամբ հավասարակշռում են պահուստների փոփոխությունները և բարձր արդյունավետությամբ փողերի քանակը թողնում անփոփոխ: Կենտրոնական բանկը ստերիլիզացման միջոցով արգելում է պահուստների փոքրացման պատճառով փողերի քանակի

կրճատումը, հետևաբար կանխում է տոկոսային ներդրումների աճը և ծախքերի իջեցումը: Հենց դրանով էլ նա խանգարում է ավտոմատ կանոնակարգման մեխանիզմի գործելուն: Իհարկե եթե վճարային հաշվեկշռի դեֆիցիտը պահպանվում է, ապա Կենտրոնական բանկը ի վերջո կսպառի իր պահուստները և չի կարողանա ֆինանսավորել այդ դեֆիցիտը: Այս դեպքում վաղ թե ուշ ԿԲ-ը կզիջի և կդադարի պաշտպանել արժույթի դրույքաչափը: Արդյունքում արժութային դրույքաչափը դառնում է ազատ և այդ կերպ այն ինքնուրույն կգա հավասարակշռված վիճակի կամ այն կլինի դեվալվացված՝ բերված հավասարակշռվածության կամ վճարային հաշվեկշռի դրական սալդոյին:

*Դեվալվացիա:* Եթե երկիրը կորցնում է իր պահուստները, ապա նա վաղ թե ուշ իրականացնում է դեվալվացիա: Դեվալվացիան արտարժույթը դարձնում է թանկ՝ արտասահմանյան ապրանքները դարձնելով բավականին թանկարժեք, իսկ հայրենական ապրանքները բավականին էժան (նման կերպով էլ ռեվալվացիան իջեցնում է արտարժույթի գինը):

Ինչպես ճկուն դրույքաչափի դեպքում, այնպես էլ այստեղ դեվալվացիան վճարային հաշվեկշռի դեֆիցիտը կարգավորում է երկու եղանակով: Առաջին, բարձրացնելով արտարժույթի գինը արտասահմանյան ապրանքները դարձնում է թանկ և կրճատում է իմպորտի ծախսերը: Երկրորդ, իջեցնելով հայրենական արտադրանքի գները մեծացնում է դրանց պահանջարկը արտասահմանում և, հետևաբար, բերում է արտահանման եկամուտների աճին:

Ընդհանուր առմամբ վճարային հաշվեկշռի դեֆիցիտի լիկվիդացումը պահանջում է ինչպես ծախսերի կրճատում, այնպես էլ մրցունակության աճ:

Դեվալվացիան կգործի միայն այն դեպքում, երբ արժույթի էժանացումը չի փոխհատուցվում հայրենական ապրանքների գների բարձրացմամբ: Ենթադրենք ստերլինգը էժանանում է 15%, ինչի արդյունքում պահանջարկը տեղաշարժվում է բրիտանական ապրանքի օգտին՝ ներմուծման անկումով և արտահանման աճով: Այն դեպքում, եթե բրիտանական ապրանքի նկատմամբ պահանջարկի

աճը բերում է դրանց գնի աճին, մրցունակության աճից և վճարային հաշվեկշռի բարելավումից ստացվող արդյունքը կկորի:

Հաջողության հասնելու համար դեվալվացիան պետք է լինի *իրական* էժանացում՝ այլ խոսքով այն չպետք է փոխհատուցվի երկրում գների աճով: Որպեսզի կանխել հայրենական գների աճը, դեվալվացիան պետք է ուղեկցվի ֆիսկալ դրամային քաղաքականության խստացմամբ:

Դեվալվացիային ուղեկցող մակրոտնտեսական քաղաքականությունը հանդիսանում է վճարային հաշվեկշռի դեֆիցիտի կարգավորման նույնքան կարևոր գործոն, որքան հենց ինքը դեվալվացիան:

Շատ դեպքերում իրական դեվալվացիային հասնելը դժվար է, քանի որ այն բերում է իրական աշխատավարձի կրճատմանը և զբաղվածների կենսամակարդակի իջեցմանը: Դեվալվացիան դարձնում է ներմուծված ապրանքներն ավելի թանկ և այդ կերպ իջեցնում է աշխատավարձի գնողունակությունը: Աշխատողները սկսում են պահանջել աշխատավարձի բարձրացում, ինչը բերում է ծախքերի և գների աճին:

Մրցունակության սկզբնական հաջողությունը կարող է միանգամից կորել, դեվալվացիան և ինֆլյացիան կանցնեն նոր պտույտի: «Դեվալվացիա-ինֆլյացիա-դեվալվացիա» պտույտը չի հանդիսանում ինչ որ արտասովոր երևույթ և հստակ արտացոլում է այն փաստը, որ դեվալվացիան, եթե այն արդյունավետ է, պահանջում է որպեսզի ներմուծումը դառնա ավելի թանկ, իսկ մեր արտահանումը՝ ավելի էժան: Դա նշանակում է, որ մենք պետք է աշխատենք ավելի քիչ աշխատավարձով: Միայն դրա արդյունքում մենք կարող ենք արտահանել ավելի շատ և ներմուծել՝ ավելի քիչ, սակայն դա, իհարկե, միաժամանակ նշանակում է մեր կենսամակարդակի իջեցում: Արտաքին անհավասարակշռության հարթեցման ոչ թանկ և առավել ևս անվճար ուղիներ գոյություն չունեն:



### **Ինքնաստուգման հարցեր**

1. Ի՞նչ է վճարային հաշվեկշիռը և ո՞ր դեպքում է այն լինում դրական:
2. Ի՞նչ է տեղի ունենում, երբ վճարային հաշվեկշիռի դեֆիցիտի դեպքում ԿԲ-ն չի իրականացնում ինտերվենցիաներ:
3. Ի՞նչպես է որոշվում արտարժույթի դրույքաչափը ազատ ֆլոտինգի պայմաններում:
4. Ինչպե՞ս է կատարվում վճարային հաշվեկշռի ադապտացիան ոսկե ստանդարտի պայմաններում:

## Գլուխ V. Միջազգային տնտեսական ինտեգրացիոն գործընթացը աշխարհում

Միջազգային տնտեսական ինտեգրացիան համաշխարհային տնտեսության ժամանակակից զարգացումը բնութագրող երևույթ է: XX դարի վերջին այն դարձավ երկրների խմբավորման սրընթաց զարգացման և համաշխարհային շուկայում նրանց մրցունակությունների բարձրացման համար հզոր գործիք: Ինտեգրացիա բառը ծագել է լատիներեն *integratio* բառից, որը թարգմանաբար նշանակում է լիակատարում (կամ *integer*-միասնական): Միջազգային տնտեսական ինտեգրացիան հարևան երկրների տնտեսությունների սերտաճումն է որպես մեկ տնտեսական համալիր՝ նրանց ընկերությունների կայուն տնտեսական կապերի հիման վրա: Տարածքային տնտեսական ինտեգրացիան, ստանալով ավելի լայն ընդարձակում, հնարավոր է ապագայում դառնա գլոբալ ինտեգրացիայի առաջնային փուլ, այսինքն տարածքային ինտեգրացիոն միավորումների միաձուլում: Այսպես, ներկայումս քննարկվում է Եվրոմիության և NAFTA-ի հիմքի վրա ազատ առևտրի գոտի ստեղծելու գաղափարը<sup>16</sup>:

### 5.1 Ազգային տնտեսությունների գործակցումը համաշխարհային տնտեսության հետ

XX դարի վերջին ազգային տնտեսություններն ու համաշխարհային տնտեսությունը սերտորեն ձուլվեցին և փոխադարձ լրացրեցին միմյանց: Արդյունքում գրեթե բոլոր ազգային տնտեսությունները դարձան ավելի բաց:

**Բաց տնտեսություն:** «Բաց տնտեսություն» հասկացությունը կրել է որոշակի փոփոխություն՝ տնտեսական կյանքի ինտերնացիոնալացման ուժեղացման շրջանակներում: Պատերազմից հետո առաջին երկու տասնամյակների ընթացքում «բաց» տերմինի տակ

---

<sup>16</sup> “Мировая экономика”, А.С. Булатов, Москва 2004г.,

ենթադրում էին արտահանման և ներմուծման չափաբաժինների սահմանումը:

Չամաշխարհային կապերի զարգացումը բարդեցրեց նաև «բաց տնտեսություն» հասկացությունը: Բաց տնտեսությամբ երկրների խմբին սկսեցին դասել այն երկրները, որոնք ակտիվորեն մասնակցում էին ոչ միայն միջազգային առևտրում, այլ նաև համաշխարհային կապերի այլ ձևերում, նախ և առաջ կապիտալի միջազգային շարժին ու արժույթային վճարային հարաբերություններին:

Ազգային տնտեսությունների «բացվածության» մակարդակը անընդհատ աճում է: Օրինակ, ԱՄՆ-ի էքսպորտի ծավալի ՀՆԱ-ում 1960 թվականին կազմում էր 5%, իսկ 90-ականներին այն վերաճեց մոտ 10%-ի: Որպեսզի ազգային տնտեսության համակարգը կարողանա արդյունավետ իրականացնել իր գործառույթները, անհրաժեշտ է որպեսզի ստեղծվի արտաքին տնտեսական կապերի զարգացման բարենպաստ պայմաններ:

Տնտեսությունը հանդիսանում է բաց, եթե պետությունը չի կարողանում իրականացնել իր մակրոտնտեսական քաղաքականությունը՝ հիմնվելով ենթադրությունների վրա, որ այն գործում է փակ ազգային տնտեսության համակարգում::

Բաց տնտեսության ռադիկալ կոնցեպցիայի (հետագայում ազատ առևտրի) կողմնակիցները՝ Է. Յեյչեր, Բ. Օհլին և այլն, պնդում էին, որ շուկայական մրցակցությունը հանդիսանում է ամենալավ կարգավորիչը ինչպես ազգային մակարդակով, այնպես էլ միջազգային տնտեսության մասշտաբով: Նա կարգադրում է ցանկացած երկրի մասնագիտանալ այն ապրանքի արտադրության մեջ, որի նկատմամբ ունի համեմատական առավելություն: Յետևաբար, բոլոր միջոցները, որոնք սահմանափակում են արտաքին տնտեսական գործունեությունը, պետք է վերացնել: Ապրանքները, ծառայությունները, կապիտալը և աշխատուժը ազատ տեղափոխվում են երկրից երկիր, ապահովելով համաշխարհային մասշտաբով արտադրության բաշխումը:

Սակայն խնդիրն այն է, որ նշված կոնցեպցիան ազգային տնտեսությունների առկայության փաստը դիտում է որպես ընդհանուր վերարտադրության պայման: Ընդ որում նման պայմանի

առկայությունը չի հանդիսանում աքսիոմ: Քանի դեռ համաշխարհային տնտեսությունը բաղկացած է բազմաթիվ ազգային տնտեսությունների համակարգից, ապա ամեն մի նման համակարգ պետք է ունենա այնպիսի կառուցվածք, որը թույլ կտա նրան հաստատուն կերպով, արդյունավետ և հավասարակշռված զարգանալ: Բնականաբար, զարգացումը որպես այդպիսին պահանջում է անընդմեջ հավասարակշռության խախտում, սակայն այդ խախտումների միջակայքը չպետք է անցնի որոշակի սահմանը: Այդ պատճառով ազգային շուկաների բացարձակ բաց լինելը կարող է քայքայել ամբողջ ազգային տնտեսության կառուցվածքը՝ մի շարք արտադրատեսակներ դարձնելով անմրցունակ: Առաջանում է տնտեսական և սոցիալական քաոս:

Տնտեսության հետևյալ (երկրորդ) տեսության կողմնակիցները՝ Ֆ. Չանբարտ, Մ. Քեյնս և այլն, պնդում են, որ արտաքին տնտեսական լիբերալ քաղաքականությունը մի շարք դեպքերում հանգեցնում է այս կամ այն ապրանքատեսակի արտահանման ուղղությամբ մասնագիտացմանը, որը կարող է կործանիչ լինել տվյալ տնտեսության համար պահանջարկի անկման դեպքում: Այս հիմքի վրա էլ զարգացող երկրների տնտեսագետները հաստատեցին փոխարինելի իմպորտի ինդուստրիալացումը, որը պահանջում է արտասահմանյան ապրանքների մուտքի սահմանափակումներ:

Սա հաճախ հանգեցնում է նրան, որ իմպորտի կարգավորումից հրաժարվելը տնտեսությունը դարձնում է անպաշտպան արտասահմանյան արտահանողների անբարեխիղճ մրցակցության պայմաններում, որոնք կարող են կատարել գների արհեստական իջեցում (դեմպինգ) կամ ծածկել շուկայի յուրացման ծախսերը ուղղակի կամ անուղղակի պետական սուբսիդիաների միջոցով:

Վերջին ենթադրությունները առաջ քաշեցին «արդար առևտրի» կոնցեպցիան: Չնայած «արդարությունը» կախված այս կամ այն երկրի հետաքրքրություններից մեկնաբանվում է տարբեր կերպ, կոնցեպցիայի հիմնական նպատակն է՝ ընկերությունները հետապնդեն մաքուր առևտրային գներ, ոչ թե ընկճեն հաճախորդներին՝ մրցակցության զործընթացում հարմարվել շուկայական հարաբերությունների ընդհանուր սահմաններին: Այն

դեպքում, երբ արտահանողներն անցնում են այդ սահմանը, պետությունը իրավունք ունի ներմուծվող ապանքների նկատմամբ իրականացնել որոշակի չափանիշներ՝ չեզոքացնող նրանց մրցակցային առավելությունները:

***Արտաքին գործոնների ազդեցությունը ազգային տնտեսության վրա:***

Մինչև վերջերս համարվում էր, որ արտաքին գործոնները առավելապես դրական են ազդում առանձին երկրի զարգացմանը, որ աշխատուժի միջազգային բաժանումը օգուտ է բերում մասնակից բոլոր երկրներին և ապահովում է տնտեսության ավելի արդյունավետ կառուցվածքը:

Անխոս, արտաքին տնտեսական կապերը հանդիսանում են զարգացման միտումների հզոր խթանիչ: Վերելքի պայմաններում այդ կապերը ամրացնում են բարենպաստ կոնյուկտուրան, խթանում երկրում տեխնոլոգիական գործընթացները, բերում են ծախքերի փոքրացմանը և թողարկվող արտադրանքի որակի լավացմանը, համազործակցում բնագավառային կառուցվածքի փոփոխմանը, ճգնաժամային և անկման շրջանում հակառակը՝ կրկնապատկում է տնտեսական դժվարությունները:

Արտաքին կապերի կողմնորոշման հզորացումը բերում է զարգացման նոր հնարավորություններ, լուծում է մի խնդիր, սակայն միևնույն ժամանակ առաջ է քաշում նոր հարցեր և դժվարություններ: Համաշխարհային տնտեսական կապերի ընդարձակման արդյունքում փոխվում է ռեսուրսների ընդհանուր ծավալը, որով տիրապետում է երկիրը, կերպարանափոխվում է դրանց նյութաիրային կառուցվածքը, մեծանում է գիտելիքների փոխանակման հնարավորությունը: XX դարի երկրորդ կեսում տնտեսական կյանքի զլոբալացումը հանդիսանում է կարևոր գործոն՝ աջակցելով նրա սինխրոնիզացմանը շուկայական տնտեսություններով երկրներում: Երկրների փոխկապակցվածությունը այնքան է մեծացել, որ համաշխարհային համակարգի խոշոր մասնակիցներից որևէ մեկի տնտեսության մեջ խախտումները բերում են իրենց հետևից միջազգային հետևանքներ, ներառած այլ երկրներում ճգնաժամային երևույթների տարածումը:

Գլոբալացումը բերում է նոր լուրջ խնդիրներ: Շատ դեպքերում արտասահմանյան մրցակցությունը բերում է բնագավառի լիովին

կործանման, մեծացնելով երկրի կախվածությունը իմպորտից, կանխելով նրանում տնտեսական կառուցվածքի և նույնիսկ կենսակերպի ձևավորումը:

***Օգուտներն ու վնասները տնտեսական կյանքի հնտերնացիոնալացումից:*** Համաշխարհային տնտեսական կապերի ընդարձակումից հիմնական օգուտները ստանում են, որպես կանոն, առանձին երկրների տնտեսության ավելի մրցունակ օղակները: Դրանք առաջնահերթ տրանսազգային կորպորացիաներն են և կազմակերպությունները, որոնք դեռ վաղուց ունեին արատահանման կողմնորոշում: Արտաքին տնտեսական գործարքները ավելի են մեծացնում նրանց մրցունակությունը, նվազեցնելով արտադրության ծախքերը, ընդարձակելով շուկաները, մեծացնելով եկամուտները:

Ազգային տնտեսությունների շատ օղակներ՝ հետ մնացող բնագավառները, ռեգիոնները, փոքր և միջին ձեռնարկատերերը, համաշխարհային տնտեսության հետ համագործակցության մեծացման արդյունքում հայտնվում են բարդ իրավիճակում: Առաջնահերթ հենց իրենց վրա է ազդում ներմուծված ապրանքների մրցակցությունը, երկրում արտասահմանյան կազմակերպությունների արտադրական գործունեության ընդլայնումը, ինչպես նաև հայրենական ՏՆԿ-ների հզորացումը: Այստեղից էլ, այս օղակները հետաքրքրված են ազգային տնտեսական կոմպլեքսի ավելի քիչ բացվածությամբ: Նրանց հայացքները, որպես կանոն, սերտորեն կապված են «պետական հետաքրքրությունների» կողմանկիցների դիրքորոշման հետ, ընդգծելով ազգային տնտեսության ամբողջականության պահպանման կարևորությունը անկախ քաղաքականություն վարելու համար:

Այդ պատճառով առանձին վերցրած երկրների համար դեպի համաշխարհային տնտեսություն ինտեգրացիան հանդիսանում է տնտեսական զարգացման երկար և բարդ գործընթաց, տնտեսության կառուցվածքի և կառավարման մեխանիզմի ձևափոխում:

## 5.2 Տրանսազգային կորպորացիաները (ՏՆԿ)

Ժամանակակից համաշխարհային տնտեսությանը բնորոշ է արանգընթաց տրանսազգայնացման գործընթացը: Այդ գործընթացում հիմնական շարժիչ ուժն են հանդիսանում տրանսազգային կորպորացիաները (ՏՆԿ): Նրանք իրենցից ներկայացնում են տնտեսական միավորումներ, որոնք բաղկացած են գլխավոր կազմակերպությունից և արտասահմանյան ֆիլիալներից: Գլխավոր կազմակերպությունը իր կապիտալում մասնաբաժնի տիրապետման ճանապարհով վերահսկում է միավորման մեջ ընդգրկված ձեռնարկությունների գործունեությունները:

XX-XXI դարերում արտասահմանում դիտվում էր արտաքին տնտեսական գործունեության աննախադեպ զարգացում, որում ՏՆԿ – ները հանդիսանում էին առևտրականներ, ներդրողներ, ժամանակակից տեխնոլոգիաների տարածողներ և միջազգային աշխատուժի միգրացիայի խթանիչներ: Նրանք մեծամասամբ սահմանում են դինամիկան և կառուցվածքը, ապրանքների և ծառայությունների միջազգային շուկայում մրցունակության մակարդակը, ինչպես նաև կապիտալի միջազգային շարժը և գիտելիքների (տեխնոլոգիայի) փոխանցումները: Արտադրության ինտերնացիոնալացման գործընթացում ՏՆԿ-ներն ունեն գլխավոր դեր:

ՏՆԿ-ների արդյունավետ գործունեության հիմնական գործոն է հանդիսանում ապրանքների և ծառայությունների միջազգային արտադրությունը, որն իրենից ներկայացնում է ՏՆԿ-ների մայր կազմակերպության և արտասահմանյան ֆիլիալների թողարկված արտադրանքը արտադրության ինտերնացիոնալացման բազայի հիման վրա: 90-ականների վերջում ապրանքների և ծառայությունների միջազգային արտադրությունը հասնում էր մոտ համաշխարհային ՀՆԱ-ի 7%-ը:

Աշխարհի գրեթե բոլոր խոշոր ՏՆԿ-ներն ըստ ազգային պատկանելիության կազմում են «եռյակ» (մեր մոլորակի երեք տնտեսական կենտրոնները՝ ԱՄՆ, ճապոնիա և ԵՄ): Վերջին

տարիներին նոր ինդուստրիալ երկրների ՏՆԿ-ներն ակտիվորեն զարգացնում են իրենց գործունեությունը: ՏՆԿ-ների բնագավառային կառուցվածքը դիվերսիֆիկացված է հետևյալ կերպ՝ 60%-ը արտադրության ոլորտում զբաղված միջազգային կազմակերպություններ (նախ և առաջ նրանք մասնագիտացված են դեպի էլեկտրոնիկան, ավտոմոբիլաշինական, քիմիական արդյունաբերությունը), 37%-ը՝ ծառայության ոլորտում և 3%-ը՝ գյուղատնտեսությունում և արդյունահանող արդյունբերությունում:

**ՏՆԿ-ների տեսական կոնցեպցիաները:** ՏՆԿ-ների ժամանակակից կոնցեպցիաները ապրանքների և ծառայությունների արտադրման և սպառման կազմակերպման համար հիմնվում են ընկերության սկզբունքների վրա: Միջազգային կազմակերպությունների մեծամասնությունն իր գործունեությունը սկսել է ազգային շուկաների սպասարկումով: Այնուհետև երկրներն օգտագործելով իրենց համեմատական առավելությունները՝ կազմակերպությունների կայացման և մրցակցային, նրանք իրենց գործունեությունը ծավալեցին միջազգային շուկաներում՝ տանելով ապրանքները սահմանից դուրս, կամ իրականացնելով արտադրության կազմակերպման նպատակով ստացված արտասահմանյան ներդրումները:

Նշելով ՏՆԿ-ների հիմնական առանձնահատկությունները՝ ապրանքների և ծառայությունների արտադրության, սպառման, արտասահմանյան ֆիլիալների առկայությունը ուղղակի ներդրումների հիմքով, ՏԿՆ-ների հետազոտողները մշակել են ուղղակի արտասահմանյան ներդրումների մի շարք մոդելներ:

Ամերիկացի տնտեսագետ Ջ. Գելբրեյթը ՏՆԿ-ների առաջացումը հիմնավորեց *տեխնոլոգիական պատճառներով*: Ըստ նրա, միջազգային կազմակերպությունների արտասահմանյան ֆիլիալների կազմավորումը մեծամասամբ պայմանավորված է արտասահմանում ժամանակակից «բարդ» արտադրանքի սպառման անհրաժեշտության և տեխնիկական սպասարկման հետ, որը այն ներմուծող երկրներում պահանջում է ապրանքների և ծառայությունների փորձարկման համակարգ: Նման ռազմավարությունը թույլ է տալիս ՏՆԿ-ներին մեծացնել իրենց դերը համաշխարհային շուկաներում:



Մենաշնորհային առավելության մոդելը մշակվել է ամերիկացի Ս. Չայմերի, Չ. Պ. Կինդլեբերգերի և այլնի կողմից: Համաձայն այս տեսության արտասահմանյան ներդրողը պետք է ունենա առավելություն տեղական ընկերությունների նկատմամբ, որոնք իրենց շուկայում լավ գիտեն «խաղի կանոնները», ունեն տեղական ադմինիստրացիայի հետ լայն կապեր և չեն կրում տրանզակցիաների մեծ ծախսեր, այսինքն՝ արտասահմանյան ներդրողի համեմատությամբ գործարքների ծախսերը: Արտասահմանյան ընկերության համար մենաշնորհային առավելություն կարող է առաջանալ ի շնորհիվ յուրօրինակ արտադրանքի օգտագործման, որոնք չեն թողարկում տեղային ընկերությունները, կատարյալ տեխնոլոգիաների առկայությունը, «մասշտաբի էֆեկտը», որը թույլ է տալիս ստանալ եկամտի մեծ մաս և այլն:

Արտադրանքի կյանքի ցիկլի մոդելը մշակվել է ամերիկացի տնտեսագետ Ռ. Վերմոնի կողմից ընկերությունների աճի տեսության հիման վրա: Ըստ այս մոդելի ցանկացած արտադրանք անցնում է կյանքի ցիկլի 4 փուլ՝ I – ներխուժում շուկա, II- վաճառքի աճ, III- շուկայի ներգրավում, IV- վաճառքի անկում:

Ներքին շուկայում վաճառքի անկումից ելք կարող է հանդիսանալ էքսպորտը կամ սահմանից դուրս արտադրության հարթունք, ինչը կերկարացնի արտադրանքի կյանքի ցիկլը: Ընդ որում, աճման փուլում և շուկայի հագեցվածությունը արտադրության ծախսերով և սպառումը սովորաբար կրճատվում է, ինչը թույլ է տալիս իջեցնել ապրանքի գինը և հետևաբար, խթանել արտահանման ընդլայնման հնարավորությունները և արտադրանքի թողարկման ծավալները սահմանից դուրս: Անգլիացի տնտեսագետներ Պ. Բակլինը, Մ. Կեստոնը, Ջ. Մակմանուսը և այլոք ստեղծեցին ինտերնալացման մոդելը, որին համապատասխան, միջազգային տնտեսական գործարքների զգալի մասը հանդիսանում է փաստացի ներքին ընկերությունների գործարքները տնտեսական ամբողջականության ստորաբաժանումների հետ: Ինտերնացիոնալ կորպորացիայի կառուցվածքի բոլոր տարրերը գործում են որպես մեկ ամբողջություն, գլխավոր կազմակերպության գլոբալ ռազմավարությանը համապատասխանեցված մեխանիզմ, որն ուղղված է ՏՆԿ-ների գործունեության գլխավոր նպատակի կայացմանը՝ ձեռնարկության կոմպլեքսային գործունեությունից եկամտի ստացմանը:

### 5.3 Միջազգային տնտեսական ինտեգրացիայի տեսությունները

Տնտեսական տեսությունների դասականները (Սմիթ, Ռիկարդո, Միլլ) ազատ առևտրի կողմնակիցներն էին: Նրանց մոտեցումների հիմքում դրված է արտաքին առևտրից դասական օգուտների ստացման գաղափարները արտադրության մասնագիտացումից և ապրանքային փոխանակումից, որը հիմնված է աշխատանքի միջազգային բաժանման վրա: Միջազգային տնտեսական ինտեգրացիայի տեսության հիմքում ընկած է հենց այս մոտեցումը, չնայած այդ մեխանիզմում կարող են լինել տարբեր ուղղվածություններ:

*Նեոլիբերալիզմ:* Այս տեսության կողմնակիցները (Վ. Ռեպկե, Մ. Ալլե) ամբողջական ինտեգրացիան պատկերացում են որպես միասնական շուկայի տարածք՝ մի քանի պետությունների մասշտաբով, որտեղ գործում են տարրերային շուկայական ուժեր՝ անկախ պետությունների քաղաքականություններից և ազգային ու միջազգային օրենսդրական ակտերից: Ավելի ուշ այս տեսության ներկայացուցիչները (Բ. Բալլաս) մեծ ուշադրություն էին դարձնում ինտեգրացիայի էվոլյուցիային, որը հիմնվում է տարբեր երկրներում տնտեսական և քաղաքական գործընթացների զարգացման վրա:

*Կորպորացիոնալիզմ:* Այս տեսության կողմնակիցները (Ս. Ռուֆ, Ռ. Ռոստոու) գտնում էին, որ միջազգային տնտեսությունների ինտեգրացիան ունակ է ապահովել ոչ թե շուկայական մեխանիզմները և պետական կարգավորումը, այլ միջազգային կորպորացիաները, որոնց գործունեությունը նպաստում է միջազգային տնտեսական կապերի ռացիոնալ և հավասարակշռված աճին:

*Ստրուկտուրալիզմ:* Ստրուկտուրալիզմի ներկայացուցիչների կողմից միջազգային ինտեգրացիան դիտարկվում է որպես երկրների տնտեսությունների կառուցվածքային փոփոխությունների բարելավումների գործընթաց՝ ինտեգրացիայի զարգացման տարբեր կենտրոններով (այսինքն խոշոր ընկերություններով, ինչպես նաև արտադրության ամբողջ բնագավառներով): Իրենց կարծիքով

բարեփոխումների արդյունք է դառնում որակապես նոր համաձուլված տարածությունն ավելի իդեալական տնտեսական մեխանիզմով:

*Նեոկենսիանիզմ:* Նեոկենսիանիստները (Ռ. Կուպեր) գտնում էին, որ լայնածավալ միջազգային տնտեսական համագործակցությունից ամեն պետության նաքսիմալ օգուտների ստացման համար անհրաժեշտ է ինտեգրվող կողմերի ներքին և արտաքին քաղաքականությունների համաձայնեցում՝ նպատակ ունենալով օպտիմալ համադրել 2 հնարավոր տարբերակ.

- Պետությունների միացում հետագա իրենց ինքնիշխանության կորստի և տնտեսական քաղաքականության համատեղ համաձայնեցմամբ,
- Ինտեգրացիա՝ ազգային ինքնավարության նաքսիմալ ապահովմամբ:

## 5.4 Միջազգային տնտեսական ինտեգրացիայի ձևերը

Միջազգային ինտեգրացիայի ամենապարզ և սկզբնական ձևը **ազատ առևտրի գոտիներն** են: Այս դեպքում մասնակից երկրների համար հանվում են առևտրային սահմանափակումները, նախ և առաջ իջեցվում կամ առհասարակ հանվում են մաքսային վճարներն ու արգելքները: Հիմնականում ազատ առևտրի գոտու պայմանները տարածվում են բոլոր ապրանքների վրա, բացի գյուղատնտեսական ապրանքներից:

Ավելի խորը համագործակցության ձև է հանդիսանում **մաքսային միությունները**: Նրան բնորոշ է ինչպես արտաառևտրային սահմանափակումների վերացում, այնպես էլ միասնական մաքսային դրույքաչափերի և միասնական արտաառևտրային քաղաքականության վարում այլ երկրների հանդեպ: Մաքսային միությունը նախատեսում է ապրանքների ու ծառայությունների չհարկվող ներ ինտեգրացիոն առևտուր և տարածաշրջանում դրանց տեղաշարժի լրիվ ազատություն: Այս դեպքում մաքսային միությունները հավելում են վճարումային միություններ, որը նախատեսում է արտարժութային փոխանակելիություն և վճարային միասնական դրամական համակարգ:

Մաքսային միությունը պահանջում է միջպետական մարմինների առավել զարգացած համակարգ, որը կկարգավորի համաձայնեցված ներքին առևտրային քաղաքականության իրականացումը: Այս փուլի տիպիկ օրինակ է Եվրոմիությունը:

Հետագա ինտեգրացիոն գործընթացը ենթադրում է **ընդհանուր շուկայի ստեղծում**: Իրականում սա իրենից ներկայացնում է ինտեգրացիայի առաջնային փուլը: Այն հիմնավորվում է պայմանագրերի ստորագրմամբ, որը պարունակում է ինտեգրացիոն գործընթացի հիմնական «չորս ազատությունը»: Դա ապրանքների և ծառայությունների, կապիտալի և մարդկանց ազատ տեղաշարժն ու անցումն է միջպետական սահմանով:

Միջազգային տնտեսության ինտեգրացիայի գործընթացում առավել բարդ ձև է *տնտեսական միությունը*<sup>17</sup>, որը ենթադրում է տնտեսապես զարգացած երկրների կամ նույն տնտեսական զարգացվածության աստիճան ունեցող երկրների երկարաժամկետ և կարևորագույն քաղաքական կապերի համատեղ գործունեության ձև: Այն ներառում է նախկինում բոլոր համաձայնությունների, պայմանագրերի և համատեղ ինտեգրացիոն միությունների օրենքների կանոնների պահպանումը՝ ավելացնելով համաձայնեցված տնտեսական արժույթային քաղաքականության վարումը, և որպես հետևանք, ենթադրում է նոր կառավարման մարմինների ստեղծում, որոնք վեր են կանգնած ազգային կառավարություններից: Նրանք կարող են ունենալ օրինակ պետությունների ղեկավարների խորհրդի տեսք: Եվրոմիության շրջանակներում նման կառույց է Եվրոխորհրդը:

Հետագայում պարզ կդառնա, թե ինչ այլ տիպի ինտեգրացիոն գործընթացներ ի հայտ կգան:

---

<sup>17</sup> «Շուկայական տնտեսության հիմունքները» Ա.Մարկոսյան, Ռ. Սաֆարյան, 2002թ, էջ 466

## 5.5 Միջազգային ֆինանսական կազմակերպությունները<sup>18</sup>

Միջազգային ֆինանսական կազմակերպությունը միջպետական ինստիտուցիոնալ կառույց է, որը փոխատվաֆինանսական գործունեության, տնտեսատեղեկատվական հավաքման, վերլուծության միջկառավարական սպասարկման, ինչպես նաև միջազգային համաձայնությունների ձեռքբերման միջոցով կարգավորում է Համաշխարհային արժուբավարկային և ֆինանսական հարաբերությունները:

Միջազգային ֆինանսական կազմակերպությունները ստեղծվել են հիմնականում երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո: Դրանց ստեղծումը պայմանավորված էր համաշխարհային տնտեսության խնդիրների համատեղ լուծման անհրաժեշտությամբ՝ տնտեսության գլոբալիզացիայի պայմաններում: Համաշխարհային տնտեսության զարգացման գործում զարգացող երկրների դերի բարձրացմանը զուգահեռ ստեղծվեցին տարածաշրջանային միջազգային ֆինանսական կազմակերպություններ:

**Միջազգային Արժուբային Հիմնադրամի** (ՄԱՀ) ստեղծման որոշումն ուժի մեջ է մտել 1945 թվականի հոկտեմբերի 27-ից, սակայն այն սկսել է գործել 1947 թվականի մարտից: Թեև Միջազգային արժուբային հիմնադրամն ունի ՄԱԿ-ի հատուկ կազմակերպության կարգավիճակ, սակայն դրա գործունեությունն անկախ է և այն հանդիսանում է համաշխարհային արժուբային համակարգի կառուցվածքային հիմքը:


Միջազգային արժուբային հիմնադրամը հանդես է գալիս անդամ երկրների համար որպես արժուբավարկային հարաբերությունների կարգավորման օրգան: Բացի այդ, այն ցույց է տալիս ֆինանսական օգնություն անդամ երկրներին՝ ֆինանսական դժվարությունների ժամանակ (վճարային հաշվեկշիռների դեֆիցիտի դեպքում) նրանց տրամադրելով կաճաժամկետ և միջնաժամկետ արտարժուբային վարկեր: Միջազգային արժուբային հիմնադրամն իր հաշվարկների իրականացման համար կիրառում է հատուկ ոչ կանխիկ

<sup>18</sup> «ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները», Ռ. Ջալյան, 2004թ., էջ 45

հաշվարկավճարային միջոց՝ հատուկ փոխառության իրավունք (SDR): Ներկայումս SDR-ը օգտագործվում է որպես ռեզերվային ակտիվ, որն ապահովում է երկրի կայունության դիրքերը վարկային ռեսուրսների համաշխարհային շուկայում: Դա կապված է հունիսի դրությամբ SDR-ի արժեքի ձևավորման մեխանիզմի հետ: 2004 թվականի հունիսի դրությամբ SDR-ի արժեքի «զամբյուղը» բազմացած է 4 արտարժույթից (տե՛ս Գծապատկեր 1-ում):

Գծապատկեր 1.

**SDR-ի (Հատուկ փոխառության իրավունքի) կառուցվածքը**



ՄԱՅ-ի անդամ երկրների քվոտաները ՄԱՅ-ի կապիտալում որոշվում է ամեն երկրի տնտեսական պոտենցիալից ելնելով, որն էլ հիմք է հանդիսանում անդամ երկրների և ՄԱՅ-ի փոխհարաբերության ժամանակ: Անդամ երկրների քվոտայի չափով ՄԱՅ-ում մասնավորապես որոշվում է երկրի անդամավճարի գումարը, ծայների քանակը, ՄԱՅ-ի կողմից ֆինանսավորում ստանալու հնարավորությունը և SDR-ների ընդհանուր գումարում երկրի մասնաբաժինը:

**Համաշխարհային բանկը** (ՀԲ) ՄԱԿ-ի 14 մասնագիտացված կազմակերպություններից մեկն է և ներառում է Վերակառուցման և Ջրագացման Միջազգային Բանկը, Միջազգային Ֆինանսական

Կորպորացիան, Միջազգային Ջարգացման Ասոցիացիան և Ներդրումների Երաշխավորման Միջազգային Գործակալությունը: Թվարկված կազմակերպությունները ունեն ֆինանսական անկախություն, սեփական խնդիրների շրջանակ, բայց Համաշխարհային Բանկի սահմաններում ենթարկվում են մեկ բարձրագույն մարմնի՝ Կառավարիչների Խորհրդին: Համաշխարհային Բանկի հիմնական կանոնադրական գործառույթը՝ զարգացող երկրներում վարկերի և խորհրդատվության տրամադրման, այլ աղբյուրներից երկրների տնտեսության մեջ ներդրումները խթանելու միջոցով տնտեսական և սոցիալական զարգացմանն աջակցելն է:

**Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը** (ՎՋՄԲ)

ստեղծվել է 1945 թվականին Բրետտոն-Վուդյան համաձայնագրի հիման վրա, գործունեության սկիզբը՝ 1946 թվականի հուլիս: Բանկի անդամ կարող են լինել միայն ՄԱՀ-ի անդամները: Փաստորեն համաձայն բանկի կանոնադրության և ՄԱԿ-ի ու ՎՋՄԲ-ի միջև կնքված համաձայնագրի, իր գործունեությամբ Բանկը ամբողջովին անկախ է ՄԱԿ-ի որոշումներից:

ՎՋՄԲ-ի գործունեությունն ուղղված է անդամ երկրների տնտեսական զարգացման խթանմանը, վճարային հաշվեկշիռների և միջազգային առևտրի զարգացմանն աջակցությանը: ՎՋՄԲ-ի հիմնական գործունեությունը կառավարության երաշխավորման առկայության դեպքում պետական և մասնավոր ձեռնարկությունների երկարաժամկետ վարկերի տրամադրումն է՝ հիմնականում որոշակի ապրանքների և ծառայությունների գնումներ պահանջող, այսպես կոչված, ներդրումային ծրագրերի ֆինանսավորման նպատակով:

Բարեփոխումների ծրագրի շրջանակներում կառուցվածքային վերակառուցման նպատակով տրամադրված վարկերը սովորաբար տրամադրվում են տրանշերով, այսինքն՝ ընդհանուր վարկի գումարի մասերով՝ ծրագրի առանձին փուլերի կատարմանը զուգահեռ: Մի շարք դեպքերում Բանկը տրամադրում է, այսպես կոչված, ավանսային վարկ՝ ծրագրերի նախապատրաստման գործընթացը ֆինանսավորելու նպատակով:



**Միջազգային ֆինանսական Կորպորացիան** (ՄՖԿ) ստեղծվել է ԱՄՆ-ի նախաձեռնությամբ որպես ՎՋՄԲ-ի մասնաճյուղ 1956 թվականին՝ զարգացող երկրների արդյունաբերության մեջ մասնավոր կապիտալի ներդրումները խթանելու նպատակով: ՄՖԿ վարկեր է տրամադրում բարձր վստահություն ունեցող մասնավոր ձեռնարկություններին, բայց, ի տարբերություն ՎՋՄԲ-ի, առանց կառավարության երաշխավորման, և ընդհանուր ֆինանսավորման նախագծում ՄՖԿ-ի միջոցների մասը կազմում է ոչ ավելի, քան 20%-ը: ՄՖԿ-ն ինքնուրույն ներդրումային գործունեության իրավունք ունի՝ մասնավոր կապիտալին ակտիվների հետագա վերավաճառքի պայմանով: ՄՖԿ-ի անդամակցությունը ենթադրում է ՎՋՄԲ-ի անդամակցություն:

**Միջազգային Զարգացման Գործակալությունը** (ՄՁԳ) ստեղծվել է ՎՋՄԲ-ի որոշման հիման վրա 1960 թվականին՝ հատուկ զարգացող երկրներին (միայն ՎՋՄԲ-ի անդամներին) արտոնյալ պայմաններով վարկային միջոցների տրամադրման նպատակով: ՄՁԳ-ի միջոցները կազմվում են բաժանորդագրության և կամավոր հավելյալ վճարներից, որոնք կարող են իրականացնել բոլոր երկրները, անկախ ՎՋՄԲ-ի անդամ լինելուց, և հաճախ իրականացնում են Համաշխարհային Բանկի հետ համատեղ ծրագրերի ֆինանսավորում:

**Ներդրումների Երաշխավորման Բազմակողմ Գործակալությունը** (ՆԵԲԳ) ստեղծվել է 1988 թվականին՝ զարգացող երկրներում ուղղակի ներդրումների խթանման նպատակով: ՆԵԲԳ-ը ապահովագրում է ներդրումները ոչ կոմերցիոն ռիսկերից: Դրանց թվին են դասվում՝

- արժույթի կոնվերտացիայի արգելումը և դրա հետևանքով առաջացած շահույթների փոխադրման արգելքները,
- ներդրողի ունեցվածքի սեփականազրկությունը,
- ռազմական գործողությունները,
- քաղաքական կատակլիզմներ (համադեպեր),
- կառավարության որոշման արդյունքում համաձայնագրի չկատարում:

Սովորաբար երաշխիքների ժամկետը սահմանվում է 15 տարի, սակայն երբեմն հնարավոր է մինչև 20 տարի: Երաշխիքները կարող են ծածակել ներդրումների մինչև 90%-ը: ՆԵԲԳ-ը իր գործունեությունը կոորդինացնում է ազգային ապահովագրական կազմակերպությունների հետ, ինչպես նաև միջազգային գործարար շրջաններում և արտասահմանյան ներդրումներ ներգրավելու մեջ շահագրգիռ երկրների կառավարությունների միջև, կազմակերպում է հանդիպումներ և բանակցություններ, տրամադրում է տեղեկատվական ծառայություններ:

**Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը** (ՎԶԵԲ) ստեղծվել է 1990 թվականին՝ նպատակ ունենալով աջակցել Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի այն երկրներին, որոնք հռչակել են ժողովրդավարության սկզբունքները և որոնք ցանկանում են անցում կատարել բաց շուկայական տնտեսության:

ՎԶԵԲ-ի հիմնադիրներն են 40 պետություն, անդամներն են 60 պետություն, Բանկի անդամակցությունը բաց է Եվրոպական բոլոր և ՄԱՅ-ի անդամ երկրների համար:

ՎԶԵԲ-ն համատեղում է միջպետական կազմակերպություններին, ներդրումային բանկին և կոմերցիոն բանկին հատկանշական գծեր. բանկային կոնսորցիումների շրջանակներում այն հանդիսանում է գլխավոր ներդրողը, ներդրումային ծրագրերի պատրաստման ընթացքում հանդես է գալիս որպես խորհրդատու, ինվեստիցիոն ծրագրերով իրականացնում է տեխնիկական աջակցություն: ՎԶԵԲ-ն իրավունք ունի ներգրավել համաշխարհային ֆինանսական շուկաներից ֆինանսական միջոցներ և գործել որպես ներդրումային ծրագրերի և վարկերի երաշխավորող: Ի տարբերություն Համաշխարհային Բանկի, ՎԶԵԲ-ն ներդրումները հիմնականում ուղղում է մասնավոր սեկտոր, սովորաբար կոմերցիոն գործընկերների հետ համատեղ, սակայն հնարավոր է նաև համատեղ գործունեություն պետական կազմակերպությունների հետ:

ՎԶԵԲ-ի ներդրումային ծրագրերի նպատակն է նպաստել.

1. կառուցվածքային և ճյուղային բարեփոխումներին,
2. մրցակցությանը, ապապետականացմանը և ձեռներեցության զարգացմանը,

3. ֆինանսական հաստատությունների և օրենսդրական դաշտի բարելավմանը,
4. ենթակառուցվածքների զարգացմանը՝ մասնավոր հատվածին օժանդակելու նպատակով,
5. հզոր կորպորատիվ կառավարման ներդրմանը:

**Գյուղատնտեսական Ջարգացման Միջազգային Հիմնադրամը** (ԳԶՄՀ) ստեղծվել է որպես միջազգային ֆինանսական կազմակերպություն 1977 թվականին:

Հիմնադրամը ստեղծվել է գյուղերի աղքատության նվազեցման և սննդի բարելավմանն ուղղված ծրագրերի համար կոնցեսիոն պայմաններով միջոցները համալրելու նպատակով: Ի տարբերություն այլ միջազգային ֆինանսական կազմակերպությունների, որոնք ունեն նպատակների մեծ շրջանակ, Հիմնադրամի նպատակը շատ յուրահատուկ է՝ պայքարել սովի և գյուղերի աղքատության դեմ: Այդ նպատակին հասնելու ուղիներն են՝ սոցիալական զարգացումը, սննդի ապահովման բարելավումը և այլն:

### **Ինքնաստուգման հարցեր**

1. Ինչպե՞ս է ընթանում ինտեգրացիոն գործընթացը աշխարհում:
2. Ինչպե՞ս են ազդում արտաքին գործոնները ազգային տնտեսության վրա:
3. Տվեք ՏՆԿ-ի բնորոշումները:
4. Ինչպիսի՞նք միջազգային ֆինանսական կազմակերպություն գիտեք:

## Օգտագործված գրականություն

1. «Տնտեսագիտություն», Ջեյմս Դ. Գոռնի, Ռիչարդ Լ. Խտրոուպ, 1999թ., 1152 էջ
2. «Շուկայական տնտեսության հիմունքները» Ա.Մարկոսյան, Ռ. Սաֆարյան, 2002թ, 480 էջ
3. «ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները», Ռ. Ջազյան, 2004թ., 115 էջ
4. «Թողարկողներ, բաժնետերեր և ներդրողներ» Է. Սանդոյան, Ն. Հակոբյան, Լ. Վրթանեսյան, Ա. Մարկոսյան, Երևան 2002, 160 էջ
5. “Мировая экономика” , А.С. Булатов, Москва 2004г., 734с.
6. “Международные экономические отношения”, Е. Ф. Авдокушин, Москва 2001г., 368с.
7. “Экономика” С. Фишер, Р.Дорнбуш, Р. Шмалензи, Москва 2001г., 864с.
8. “Внешнеэкономическая деятельность предприятия”, Л. Е. Стровский, Москва 2001г., 847с.

Արա Արամի Հովհաննիսյան  
Ռոզա Խաչիկի Ալավերդյան

**Արտաքին տնտեսական կապերի հիմունքներ**  
Ուսումնական ձեռնարկ

Գեղարվեստական ձևավորում՝ Ա.Ա. Հովհաննիսյան  
Սրբագրիչ՝ Ռ.Խ. Ալավերդյան  
Համակարգչային էջատող՝ Ռ.Խ. Ալավերդյան

Տպաքանակը՝ 200 օրինակ  
Տպագրված է Երևանի Ճարտարապետության և շինարարության  
պետական համալսարանի Տպագրության և լրատվության  
կենտրոնում

